

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

16 ապրիլի 2001 թ.  
ք. Երևան

N 02/456

#### Հ Ր Ա Մ Ա Ն

#### «ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով պարզաբանել «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թ. հունվարի 15-ի «Գերատեսչական նորմատիվ ակտերի պետական գրանցման կարգի մասին» N 13 որոշմամբ հաստատված կարգի համաձայն

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգը:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

- ՀՀ հարկային տեսչության պետի 1998 թ. նոյեմբերի 16-ի թիվ 01/56 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը (համաձայնեցված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.12.1998 թ., պետական գրանցման թիվ 43980231),

- ՀՀ հարկային տեսչության պետի 1999 թ. ապրիլի 5-ի թիվ 01/24 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգում փոփոխություններ կատարելու մասին» հրահանգը (համաձայնեցված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.04.1999 թ., պետական գրանցման թիվ 43990055),

- ՀՀ պետական եկամուտների նախարարի 1999 թ. դեկտեմբերի 13-ի թիվ 01/40 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգում լրացում կատարելու մասին» հրահանգչական նամակը (համաձայնեցված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.01.2000 թ., պետական գրանցման թիվ 12400003),

- ՀՀ պետական եկամուտների նախարարի 2000 թ. նոյեմբերի 22-ի թիվ 02/1461 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» հրահանգը (համաձայնեցված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից 06.12.2000 թ., պետական գրանցման թիվ 12400148):

Նախարար

Ա. Մանուկյան

Հաստատված է  
ՀՀ պետական եկամուտների նախարար՝  
\_\_\_\_\_ Ա. Մանուկյան  
16 ապրիլի 2001 թ.  
թիվ 02/456 հրամանով

Համաձայնեցված է  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի  
նախարար՝  
\_\_\_\_\_ Վ. Խաչատրյան  
20 ապրիլի 2001 թ.

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

### ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն հրահանգը մշակված է՝ հիմք ընդունելով «Եկամտահարկի մասին» 1997 թվականի հունիսի 19-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածը և նպատակ ունի պարզաբանել եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը:

**(Նախաբանը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն)**

#### Գ Լ ՈՒ Խ 1

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Բ Ա Ժ Ի Ն 1

### ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

1. Եկամտահարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալների միջոցով) օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Առանձին վճարողների և (կամ) գործունեության տեսակների համար օրենքով կարող են սահմանվել եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարներ կամ արտոնագրային վճարներ:

**(1-ին կետը փոփ. 23.02.09 N 187-Ն)**

2. Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ (այսուհետ՝ հարկ) են վճարում (հարկատու են).

ա) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ ռեզիդենտ):

Հարկման նպատակով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը՝

- որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը (ներառյալ)) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ

- ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, կամ

- որը գտնվելով Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ՝ ժամանակավորապես աշխատում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է

գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը.

բ) Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ):

Հարկման նպատակով ոչ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չի բավարարում սույն կետի «ա» ենթակետով սահմանված պայմաններին:

3. **(3-րդ կետը հանվել է 30.01.02 N 02/141):**

## Բ Ա Ժ Ի Ն 2

### ԵԿԱՄՏԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ

4. Եկամտահարկով հարկվող օբյեկտ է համարվում.

ա) ռեզիդենտի համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը.

բ) ոչ ռեզիդենտի համար՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

5. Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և սույն հրահանգի դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

## Բ Ա Ժ Ի Ն 3

### ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏԸ

6. Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ են համարվում, մասնավորապես.

6.1. Աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները:

Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված եկամուտներ են համարվում, մասնավորապես՝

- հիմնական և լրացուցիչ աշխատավարձը բոլոր տեսակի հավելումներով (այդ թվում՝ արտաժամյա, գիշերային, հանգստյան և տոնական օրերին կատարած աշխատանքի համար վճարվող աշխատավարձերը),

- պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),

- համատեղության կարգով և աշխատողի պարտականությունների մեջ չմտնող աշխատանքների համար տրվող վարձատրությունը,

- ուսումնական հաստատություններում և դասընթացներում սովորելու, վարժական հավաքներին մասնակցելու ընթացքում պահպանվող աշխատավարձը,

- հերթական (ամենամյա) և լրացուցիչ արձակուրդի համար տրվող վարձատրությունը (այդ թվում՝ չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցումը),

- պարապուրդի ժամանակ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան վճարվող գումարները,

- նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարվող աշխատավարձը:

Սույն հրահանգի իմաստով՝

- աշխատող է համարվում օրենքով աշխատելու իրավունք ունեցող ֆիզիկական անձը, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա վարձու աշխատանք է կատարում գործատուի համար,

- գործատու են համարվում կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնք օրենքով սահմանված կարգով օգտագործում են վարձու աշխատանք:

**(6.1-րդ կետը փոփ. 23.02.09 N 187-Ն)**

6.2. Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկության տրամադրման համար ստացվող հատուցումը (այսուհետ՝ ռոյալթի):

Սույն ենթակետի դրույթները տարածվում են նաև հեղինակների ժառանգների վրա:

**6.3. Տոկոսները:**

Սույն հրահանգի իմաստով տոկոսներ են համարվում ցանկացած տեսակի պարտապահանջների (մասնավորապես, փոխառություն, ավանդ (դեպոզիտ), պարտատոմս, մուրհակ) դիմաց ստացված եկամուտները՝ անկախ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից:

Փոխառության դեպքում մի կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն փոխատուին պարտավոր է վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք՝ տոկոսներով (օրենսդրությամբ կարող է սահմանափակվել տոկոսների առավելագույն չափը) կամ առանց տոկոսների:

Ավանդի (դեպոզիտի) դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը, ընդունելով ֆիզիկական անձից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավոր է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով դրանից վճարել տոկոսներ:

Պարտատոմսի (արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք, ինչպես նաև պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ) դիմաց ստացված եկամուտներ են համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկված պարտատոմսերի էմիտենտից (կամ վերջինիս լիազորված անձից) ստացված տոկոսները, ներառյալ՝ այդ պարտատոմսերը մարելիս զեղչի ձևով, ինչպես նաև մասնակցության իրավունքով թողարկված պարտատոմսերից ստացված տոկոսները՝ մինչև վերջիններիս բաժնետոմսերի փաստացի ձևավորումը:

Մուրհակի (արժեթուղթ, որը հավաստում է մուրհակ տվողի (հասարակ մուրհակ) կամ մուրհակում նշված այլ վճարողի (փոխանցելի մուրհակ՝ վճարագիր) որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը՝ մուրհակում նախատեսված ժամկետը լրանալիս որոշակի գումար վճարել

մուրհակը տիրապետողին (մուրհակի տիրոջը)) դիմաց ստացված եկամուտներ են համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկված մուրհակից ստացված տոկոսները:

Տոկոսների վճարման պահ է համարվում տոկոսներ ստացող ֆիզիկական անձի կողմից դրանց փաստացի տնօրինման պահը՝ անկախ տոկոսները կանխիկ վճարելու հանգամանքից: Մասնավորապես՝ բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց հետ կնքված բանկային ավանդի պայմանագրերով սահմանված վճարման ժամկետները ավարտվելուց հետո ավանդի դիմաց տոկոսի վճարման պահ է համարվում ոչ միայն կանխիկ վճարումը կամ ֆիզիկական անձանց անձնական բանկային հաշիվներին փոխանցումը, այլև հաշվարկված տոկոսի միացումը նոր պայմանագրի հիման վրա բացվող ավանդին: Ընդ որում, նշված պայմանագրերով սահմանված վճարման ժամկետների ավարտը ինքնին չի դիտվում որպես տոկոսների վճարման պահ:

#### 6.4. Շահաբաժինները:

Սույն հրահանգի իմաստով շահաբաժին է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնեմասից, բաժնետոմսից, փայաբաժնից) ստացված եկամուտը:

#### 6.5. Խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները):

Խաղատուն է համարվում այն խաղասրահը, որտեղ անց է կացվում կենդանի խաղ (խաղեր) և (կամ) շահագործվում են քսանից ավելի մեքենայացված խաղեր:

Շահումով խաղ է համարվում ցանկացած մեքենայացված կամ կենդանի խաղ, որը որևէ կերպ ստեղծում է շահման հնարավորություն: Մեքենայացված խաղ է համարվում ծրագրավորված կամ մեխանիկական խաղային ավտոմատի կամ նման այլ սարքավորման միջոցով իրականացվող խաղ, որին մասնակցում է միայն խաղացողը: Կենդանի խաղ է համարվում ցանկացած խաղ, որին բացի խաղացողից մասնակցում է նաև խաղարկողը, կամ որին միաժամանակ մասնակցելու հնարավորություն է ընձեռված մի քանի խաղացողների՝ առանց խաղարկողի մասնակցության (բացառությամբ՝ մեքենայացված խաղերի):

#### **(6.5-րդ կետը փոփ. 23.02.09 N 187-Ն)**

#### 6.6. Մրցույթներից (մրցություններից) իրային և դրամական մրցանակները (պարգևները):

Աշխատանքի լավագույնս կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար դրամական վարձատրություն վճարելու կամ այլ պարգև տալու (պարգև վճարելու) մասին հրապարակային հայտարարություն (մրցույթ, մրցություն) արած անձը պետք է պայմանավորված պարգև վճարի (հանձնի) մրցույթ (մրցություն) անցկացնելու կանոններին համապատասխան հաղթող ճանաչված անձին:

#### 6.7. Վիճակախաղերի իրային և դրամական շահումները:

Վիճակախաղ է համարվում հրապարակային միջոցառումը, որի ընթացքում կազմակերպիչը մասնակիցների միջև անցկացնում է վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկություն, ընդ որում՝ շահումները կախված չեն նրա գործողություններից և կամքից, այլ բացառապես արդյունք են պատահականության: Վիճակախաղ է համարվում նաև.

- տոտալիզատորը՝ խաղ, որի մասնակիցը կանխագուշակում է խաղային, սպորտային, սոցիալապես նշանակալից իրավիճակի հնարավոր տարբերակ, ընդ որում շահումը պայմանավորված է կանխագուշակման մասնակի կամ լրիվ համընկնումից տեղի ունեցած փաստով,

«- գովազդային վիճակախաղը, որը կազմակերպվում է ծառայություններ կամ ապրանքներ գովազդելու նպատակով, ընդ որում շահումային ֆոնդն ամբողջությամբ ձևավորվում է

գովազդատուի կողմից՝ նրա նախորդ տարվա գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթի հաշվին և չի կարող գերազանցել օրենքով սահմանված չափը:

**(6.7 կետը փոփ., խմբ. 16.03.04 N 1-05/6-Ն)**

6.8. Նվիրատվության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները):

Նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից: Գույքի կամ իրավունքի հանդիպական հանձնման կամ հանդիպական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը նվիրատվություն չի համարվում:

Նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր: Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

6.9. Օգնության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները):

Այն դեպքերում, երբ ֆիզիկական անձինք կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի միջոցների հաշվին ստանում են կանխիկ գումար կամ կտրոններ (այլ փաստաթղթեր) անվանական արժեքի նշումով, որոնք այդ անձանց իրավունք են տալիս երթևեկելու, հաճախելու կամ օգտվելու սովորական պայմաններում վճարովի այլ ծառայություններից, ապա այդ նպատակին ուղղվող միջոցները հանդիսանում են օգնության կարգով ստացված եկամուտներ:

Ֆիզիկական անձանց օգնության կարգով ստացված եկամուտներին են դասվում նաև կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ գործատուների) կողմից այդ անձանց նյութական և սոցիալական վիճակի բարելավման նպատակով կատարվող վճարումները, մասնավորապես՝

- կոմունալ կենցաղային ծառայությունների արժեքը,
- տարբեր բնույթի աբոնեմենտների, թերթերի, ամսագրերի և գրքերի բաժանորդագրության արժեքը,
- սննդի արժեքը,
- բուժման արժեքը,
- մանկական նախադպրոցական հիմնարկներում և ուսումնական հաստատություններում երեխաների համար կատարած մուծումների գումարները (բացառությամբ՝ բաժնային մասնակցությամբ մանկական նախադպրոցական հիմնարկների պահպանման համար կատարած ծախսերի),
- աշխատանքի վայր մեկնելու և վերադարձի ուղերթի արժեքը,
- բուժման և հանգստի ուղեգրերի արժեքը,
- սույն հրահանգի 7-րդ կետով սահմանված կարգով որոշված արժեքից ցածր արժեքով գույքը իրացնելիս՝ այդ արժեքների տարբերությունը:

6.10. Ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները):

Ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն): Ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

6.11. Ապահովագրական հատուցումները:

Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրող կազմակերպության (ապահովագրողի) հետ ֆիզիկական անձի (ապահովագրվողի) կնքված գույքային կամ անձնական ապահովագրության պայմանագրի հիման վրա: Գումարը, որի շրջանակներում ապահովագրողը գույքային ապահովագրության պայմանագրով պարտավորվում է ապահովագրական հատուցում վճարել, կամ որը նա պարտավորվում է վճարել անձնական ապահովագրության պայմանագրով (ապահովագրական գումարը), որոշվում է ապահովագրվողի և ապահովագրողի համաձայնությամբ (բացառությամբ՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերի):

6.12. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը:

6.13. Գույքն օտարելուց ստացված եկամուտը:

Ընդ որում՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում՝ օտարված տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) վաճառքից ստացված եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով (գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի և փաստացի վաճառքի գնի դրական տարբերությունը դիտվում է որպես եկամուտ վաճառքի պահին):

**(6.13 կետը խմբ. 05.03.07 N 2-Ն)**

6.14. Վարձակալության դիմաց ստացվող վճարը և այլ հատուցումը (այսուհետ՝ վարձավճար):

Գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ է համարվում վարձատուի կողմից վարձակալին ժամանակավոր տիրապետման և (կամ) օգտագործման հանձնված գույքի դիմաց ստացված վճարները: Վարձավճարը սահմանվում է վարձակալության հանձնված ամբողջ գույքի կամ դրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի վերաբերյալ՝ պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումարով, վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված արտադրանքի, պտուղների կամ եկամուտների համար սահմանված բաժնով, վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելով, վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված գույքը վարձատուի սեփականությանը կամ վարձակալությանը հանձնելով, վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելով: Կողմերը վարձակալության պայմանագրով կարող են նախատեսել վարձավճարի մատնանշված ձևերի համակցություն կամ դրա այլ ձևեր:

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Սույն ենթակետի դրույթները չեն վերաբերվում վարձույթի պայմանագրերից (երբ որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն, գույքը վարձակալության հանձնող վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր (մինչև մեկ տարի ժամկետով) տիրապետմանը և օգտագործմանը հանձնել շարժական գույք) ֆիզիկական անձի ստացած եկամուտներին: Վերջիններս վերաբերվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներին:

**(6.14 կետը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

6.15. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները:

Սույն ենթակետի դրույթները չեն վերաբերում գործատուների կողմից օրենքով սահմանված կարգով կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք չեն ներառվում ֆիզիկական անձանց եկամուտների մեջ:

**(6.15 կետը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

6.16. Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացվող եկամուտը:

7. Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում (այդ թվում՝ նաև հարկային գործակալի կողմից սույն հրահանգի դրույթներին համաձայն հարկը պահելու (գանձելու) դեպքում) պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Բնամթերային (ոչ դրամական ձևով) ստացված եկամուտներ են համարվում հետևյալ ձևով ստացված եկամուտները.

ա) գույքով (բացառությամբ՝ դրամական միջոցների).

բ) աշխատանքներով, ծառայություններով.

գ) մտավոր սեփականության արդյունքներով:

8. Ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացված եկամուտները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց ստացման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

**(8-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն)**

9. Հարկման նպատակով եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարվող նպաստները (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ) և արձակման նպաստների), մասնավորապես՝ պետական նպաստները (ընտանեկան նպաստ, երեխայի խնամքի նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ մարտական խաչ շքանշանով պարգևատրված, անձի ընտանիքի նպաստ), գործազրկության նպաստը, թաղման նպաստը.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ կենսաթոշակների հավելումները) (բացառությամբ՝ սահմանված կարգով կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակներում վճարվող կենսաթոշակների), մասնավորապես՝ աշխատանքային կենսաթոշակները (տարիքային աշխատանքային կենսաթոշակ, արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ, երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ, հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ, կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ, մասնակի կենսաթոշակ), զինվորական կենսաթոշակները (երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ), սոցիալական կենսաթոշակները (ծերության սոցիալական կենսաթոշակ, հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ).

գ) զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն տրվող միանվագ վճարները.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վճարվող ալիմենտները (ապրուստավճարները)՝ ստացողի մոտ.

ե) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացված գումարները.

զ) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության դեպքերում՝ գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման վերցված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսի և հատուցման գումարի տարբերությունը.

է) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների անհատույց օգտագործման դեպքերում, գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքը, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում անհատույց օգտագործման վերցված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսը

ը) յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև 100 դրամ պարտավորությունների գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են.

թ) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող միջոցները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից):

**(9-րդ կետը խմբ. 29.02.08 N 02-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն, խմբ., լրաց. 24.02.11 N 66-Ն)**

10. Սույն հրահանգի իմաստով՝ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում.

ա) Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները.

բ) Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտը.

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից (արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից) ստացված եկամուտները.

դ) պասիվ եկամուտները և ցանկացած այլ հիմքով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները:

Հարկման նպատակով սույն կետով սահմանված հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները և ցանկացած այլ հիմքով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները ճանաչվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացիներ), ինչպես նաև ոչ ռեզիդենտների համար:

**(10-րդ կետը լրաց. 29.02.08 N 02-Ն)**

10.1. Պասիվ եկամուտներ են համարվում ֆիզիկական անձի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ), Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝

- շահաբաժինները,
- տոկոսները,
- ոռոյալթիները,
- Հայաստանի Հանրապետությունում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը,

- Հայաստանի Հանրապետությունում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը,

- փոխադրման ծառայությունների (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները:

10.2. Հարկման ենթակա չէ օտարերկրացիներին և ոչ ռեզիդենտներին հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտը՝ կապված արտաքին տնտեսական գործունեության հետ:

Սույն հրահանգի կիրառման նպատակով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ֆիզիկական անձի (օտարերկրացու կամ ոչ ռեզիդենտի) անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում միջնորդների բացակայության դեպքում) գործունեություն, որի դեպքում Հայաստանի հարկային ռեզիդենտը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

Արտաքին տնտեսական գործունեության շարքին են դասվում, մասնավորապես, մատակարարման պայմանագրերով (երբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին) Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծումը և դրա հետ կապված մատակարարող ֆիզիկական անձի կողմից մատուցված ծառայությունների մատուցումը (տրանսպորտային (այդ թվում՝ օժանդակ) ծառայությունները և այլն), որոնք բխում են ապրանքների մատակարարման պայմաններից:

## **Բ Ա Ժ Ի Ն 4**

### **ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԸ**

11. Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտից կարող են նվազեցվել սույն հրահանգով նախատեսված նվազեցումները (նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ, ծախսեր):

12. Համախառն եկամտից նվազեցվող եկամուտներն են.

12.1. Զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները:

Զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության և ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

- վարժական հավաքների կանչված զինապարտները,

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները (Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով),

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները և հարկադիր կատարողները,

***-(տողը հանված է 22.09.08 N 12-Ն)***

- պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք:

Զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտներին են դասվում պարտադիր ժամկետային զինծառայության, ինչպես նաև սահմանված կարգով պահեստ արձակվելուց հետո մեկ տարվա ընթացքում ստացված հետևյալ եկամուտները, մասնավորապես.

ա) դրամական բավարարումը, ինչպես նաև պարենային և հանդերձանքի ապահովության կամ դրա փոխարեն՝ դրամական փոխհատուցումը (իրենց ցանկությամբ).

բ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով անհատույց ստացված հետևյալ եկամուտները՝

- զինծառայողներին (բացառությամբ՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի), ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին օրենքին համապատասխան վճարվող օգնության գումարները,

- զինծառայողներին (դրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին անվճար բժշկական օգնության, առողջարանային բուժման ուղեգրի արժեքը, ինչպես նաև բուժման վայր մեկնելու և վերադառնալու հետ կապված ծախսերի փոխհատուցումը,

- մինչև մշտական բնակտարածություն ստանալը զինծառայողների (դրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին ծառայողական բնակելի տարածություններով ապահովման արժեքը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ սահմանված կարգով վճարվող դրամական փոխհատուցումը (բնակելի տարածություններ վարձակալելու կամ բնակարաններ ձեռք բերելու համար),

- Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից (բացի ոչ երթուղային տաքսուց) անվճար երթևեկման արժեքը, ինչպես նաև արձակուրդի անցկացման վայր մեկնելիս Հայաստանի Հանրապետության տարածքում մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից (բացի ոչ երթուղային տաքսուց) անվճար երթևեկման արժեքը (իսկ նրանց ուղեկցող ընտանիքի անդամների համար՝ 50%-ի գերչը):

Նշված անձանց զինվորական ծառայության հետ կապ չունեցող եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է ընդհանուր սահմանված կարգով:

***(12.1 կետը խմբ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 29.02.08 N 02-Ն)***

12.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի) սահմաններում փոխհատուցման վճարները (բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների):

Սույն հրահանգի իմաստով փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և չափերով տրվող

փոխհատուցումները (մասնավորապես՝ գործուղման վճարները, դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքների կատարման համար վճարները, հատուկ սնունդը):

Գործուղման վճարներ են համարվում աշխատողներին հիմնական աշխատանքի վայրից (քաղաք, գյուղ) դուրս որոշակի ժամկետով այլ վայրում աշխատանքային հանձնարարություն կատարելու հետ կապված ծախսերի համար տրվող գումարները (մասնավորապես՝ օրապահիկ, գիշերավարձ, աշխատանքի հիմնական վայրից գործուղման վայրեր մեկնելու և վերադառնալու ճանապարհաձախս, ճանապարհին հարկադրական կանգառի ժամանակ հյուրանոցներում և համանման օբյեկտներում տեղերն ամրագրելու վճար, ապահովագրական վճարներ, պետական տուրքեր, մուտքի արտոնագրի ձևակերպման հետ կապված ծախսեր, կապի (հեռախոս, ֆաքս, ինտերնետ ծառայություն) ծախսեր, փաստաթղթերի թարգմանության և վավերացման ծախսեր): Ընդ որում՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում օրապահիկը վճարվում է աշխատողի գործուղման մեջ գտնվելու օրացուցային օրերի (ներառյալ՝ գործուղում մեկնելու և վերադառնալու օրերը) համար:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման դեպքում, գործուղման վճարների հաշվարկները կատարվում են գործուղման ծախսերի հատուցման վճարման օրը (բայց ոչ ուշ, քան գործուղումից վերադառնալուց հետո սահմանված առավելագույն ժամկետը)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված ԱՄՆ-ի դոլարի կամ եվրոյի միջին փոխարժեքներով:

Համախառն եկամտից նվազեցվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղվելու դեպքում ոչ պետական և ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված օրապահիկի չափերը չգերազանցող գումարների սահմաններում օրապահիկի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի և ճանապարհաձախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի և ճանապարհաձախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղվելու դեպքում պետական կամ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված օրապահիկի

չափերը չգերազանցող գումարների սահմաններում օրապահիկի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ որոշմամբ սահմանված գիշերավարձի առավելագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության աշխատողների գործուղման, Հայաստանի Հանրապետության Նախագահի արձակուրդների (ամառային, ձմեռային) և առանձին դեպքերում (պատճառաբանված հիմնավորումների առկայության պայմաններում) բյուջետային հիմնարկների աշխատողների գործուղման ժամանակ գիշերավարձի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված ճանապարհաձախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում ճանապարհաձախսի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող ճանապարհաձախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում.

գ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղվելու դեպքում ոչ պետական և ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված օրապահիկի չափերը չգերազանցող օրապահիկի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից,

- փաստաթղթերով հիմնավորված գիշերավարձի գումարները (բայց Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի նվազագույն չափերից ոչ պակաս), իսկ գիշերավարձի գումարները փաստաթղթերով չհիմնավորված լինելու դեպքում՝ այդ որոշմամբ սահմանված գիշերավարձի չափերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքին համապատասխանող գումարները,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված հյուրանոցային ծառայություններից օգտվելու ծախսերի (բացի գիշերավարձից) չափերը չգերազանցող գումարների սահմաններում վճարումները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղվելու դեպքում պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված օրապահիկի չափերը չգերազանցող օրապահիկի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից,

- փաստաթղթերով հիմնավորված գիշերավարձի գումարները (բայց Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի նվազագույն չափերից ոչ պակաս և առավելագույն չափերից ոչ ավելի), իսկ գիշերավարձի գումարները փաստաթղթերով չհիմնավորված լինելու դեպքում՝ այդ որոշմամբ սահմանված գիշերավարձի չափերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքին համապատասխանող գումարները,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված հյուրանոցային ծառայություններից օգտվելու ծախսերի (բացի գիշերավարձից) չափերը չգերազանցող գումարների սահմաններում վճարումները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

ե) սույն կետի «ա»-«դ» ենթակետերում չնշված գործուղման վճարները, որոնց համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չեն նորմաներ (չափեր)՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Սույն կետի «ա»-«ե» ենթակետերին համապատասխան՝ համախառն եկամտից չնվազեցվող գործուղման վճարները գումարվում են տվյալ աշխատողի գործուղման ծախսերի հատուցման վճարման ամսվա (բայց ոչ ուշ, քան գործուղումից վերադառնալուց հետո սահմանված առավելագույն ժամկետը) աշխատավարձին և հարկվում ընդհանուր սահմանված կարգով:

Դաշտային պայմաններում կատարվող աշխատանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնական աշխատանքի վայրից դուրս որոշակի (մինչև 6 ամիս) ժամկետով կատարվող երկրաբանահետախուզական, սեյսմաբանական, տեղագրագեոդեզիական, նախագծահետազոտական, արտակարգ իրավիճակների վերացման և մոնիթորինգի աշխատանքները, հնագիտական, համաճարակաբանական, գյուղատնտեսական և բնապահպանական հետազոտությունը, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վիճակի մասնագիտական ուսումնասիրությունն ու հետազոտությունը, հնագիտական պեղումները, գիտական արշավները, եթե դրանք իրականացվում են աշխատավայրերի ու կենցաղի համար ոչ հարմար պայմաններում, ժամանակավորապես տեղակայված են բնակավայրերից դուրս: Տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնական աշխատանքի վայրից դուրս աշխատողների աշխատավայրերի հաճախակի վերատեղաբաշխմամբ կատարվող էներգետիկայի, կապի, ճանապարհաշինության, խմելու և ոռոգման ջրի համակարգերի սպասարկման աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ մշտապես ճանապարհին կատարվող ավտոմոբիլային, երկաթուղային

տրանսպորտի սպասարկման այն աշխատանքները, որոնց տևողությունը գերազանցում է 12 ժամը, և փոխվում է այն օրացուցային օրը, որի ընթացքում հիմնական աշխատավայրից կատարվել է մեկնումը:

Համախառն եկամտից նվազեցվում են դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի «Դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի գումարի հատուցման նվազագույն և առավելագույն չափն ու վճարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի օգոստոսի 10-ի N 418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 542-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով վճարված հատուցման գումարները:

Սույն կետի «ա»-«ե» ենթակետերին համապատասխան՝ համախառն եկամտից չնվազեցվող գործուղման վճարները, ինչպես նաև դաշտային պայմաններում կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող աշխատանքներում աշխատողների կողմից կատարվող լրացուցիչ ծախսերի հատուցման սահմանված չափից ավելի վճարները գումարվում են տվյալ աշխատողի հատուցման վճարման ամսվա (բայց ոչ ուշ, քան հիմնական աշխատանքի վայրը վերադառնալուց հետո սահմանված առավելագույն ժամկետը) աշխատավարձին և հարկվում ընդհանուր սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հատուկ սննդի գծով աշխատողներին եկամուտներ վճարելու դեպքում համախառն եկամտից նվազեցվում են միայն բնամթերային (ոչ դրամական) ձևով տրամադրված եկամուտները:

Փոխհատուցման վճարներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետության առաջնությունների և մարզային առաջնությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարերի և ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումների մասնակիցների գիշերավարձի ու սննդի օրական վճարները, ինչպես նաև ազգային հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների մասնակիցների գիշերավարձի և սննդի օրական վճարները: Ընդ որում՝ համախառն եկամտից նվազեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության առաջնությունների և մարզային առաջնությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարերի և ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումների, ազգային հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների մասնակիցների գիշերավարձի և սննդի օրական վճարման ու Հայաստանի Հանրապետության առաջնությունների և մարզային առաջնությունների մրցանակակիրների և նրանց մարզիչների պարգևատրման չափերը հաստատելու մասին» N 692-Ն որոշմամբ հաստատված չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի և սննդի օրական վճարների գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի և սննդի օրական վճարների գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ փոխհատուցման վճարների նորմաներ սահմանված չլինելու դեպքում համախառն եկամտից նվազեցվում են կատարված ծախսերի փոխհատուցման այն գումարները, որոնք հիմնավորված են փաստաթղթերով:

**(12.2 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ., խմբ. 29.02.08 N 02-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

12.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ժառանգության, նվիրատվության և օգնության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները):

12.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում (կանոնադրական նպատակներին համապատասխան) ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները:

Սույն ենթակետում չնշված դեպքերում ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ցույց տրվող օգնության գումարները ենթակա են հարկման ընդհանուր սահմանված կարգով:

12.5. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց անհատույց տրվող գույքը և դրամական միջոցները:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմիններն են՝ մարզպետները և Երևանի քաղաքապետը: Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը (քաղաքապետ, գյուղապետ):

Սույն ենթակետում չնշված դեպքերում ցույց ֆիզիկական անձանց անհատույց տրվող գույքը և դրամական միջոցները ենթակա են հարկման ընդհանուր սահմանված կարգով:

**(12.5 կետը խմբ., փոփ. 30.01.02 N 02/141, փոփ. 16.03.04 N 1-05/6-Ն)**

12.6. Պարենային բավարարման արժեքը, ինչպես նաև այդ բավարարման փոխարեն վճարվող գումարները:

12.7. Անհատույց ստացված՝ օրենքով սահմանված կարգով շնորհ համարվող միջոցները:

12.8. Ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ստացված գումարները (բացառությամբ՝ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների):

Իրացում (վաճառք) չի համարվում առևտրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի ներդրումը:

**(12.8 կետը լրաց. 30.01.02 N 02/141)**

12.9. Ֆիզիկական անձանց կողմից մասնավորեցման (սեփականաշնորհման) սերտիֆիկատների ձեռքբերման և դրանց՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրման դեպքում՝ սեփականաշնորհման սերտիֆիկատների անվանական արժեքի և դրանց ձեռքբերման գնի միջև դրական տարբերությունը:

12.10. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարվող, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ սույն հրահանգի 12.4 և 12.5 ենթակետերում նշված կազմակերպությունները:

12.11. Ապահովագրական հատուցումները (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների հաշվին սահմանված կարգով ստացման ենթակա հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակների)):

**(12.11 կետը լրաց. 29.02.08 N 02-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

12.12. Այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես վնասի փոխհատուցում (բացառությամբ՝ կորցված եկամտի (բաց թողնված օգուտի) փոխհատուցման):

Սույն ենթակետի կիրառման առումով հաշվի է առնվում միայն իրական վնասի փոխհատուցումը, ինչպես նաև աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով փոխհատուցման գումարները:

12.13. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն աշխատանքից ազատման դեպքում (մասնավորապես, գործատուի վերակազմակերպման կամ լուծարման (գործունեության դադարեցման), աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման, աշխատողի կենսաթոշակային տարիքին հասնելու հետևանքով) վճարվող արձակման նպաստի գումարը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում արձակման նպաստների չափերից ավել վճարված գումարներից հարկը հաշվարկվում է ընդհանուր սահմանված կարգով:

**12.14. (12.14 կետն ուժը կորցրել է 24.02.11 N 66-Ն)**

12.15. Աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան կապակցությամբ միանվագ կարգով վճարվող օգնության գումարները:

12.16. Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում և մրցություններում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները (պարգևները):

12.17. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները:

12.18. Մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների (պարգևների) արժեքը՝ յուրաքանչյուր վճարման դեպքում 10,0 հազ. դրամի շրջանակներում:

12.19. Ֆիզիկական անձանց կողմից անհատական բնակարանային շինարարության նպատակով կառուցվող շինությունների գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները:

12.20. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10%-ի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները:

Սույն ենթակետում նշված փոխհատուցման գումարները վերաբերվում են միայն տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից իր մոտ սովորող ուսանողների ուսման տարեկան վարձի փոխհատուցմանը:

12.21. Պետական պարգևները (մրցանակները):

**(12.21 կետը լրաց. 30.01.02 N 02/141)**

12.22. Փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները:

Փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված եկամուտներն են համարվում «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծառայողներին տրվող հետևյալ եկամուտները՝ դրամական բավարարումը (որը գոյանում է պաշտոնային դրույքաչափից, կոչման հավելավճարից և ծառայության ստաժի համար տրվող հավելավճարի հանրագումարից), սննդի փոխհատուցման գումարները, արտաժամյա և գիշերային ժամերին, հանգստյան և տոն օրերին ծառայության դիմաց վարձատրությունը, արձակուրդային գումարները, այլ հավելումները և հավելավճարները, պարգևատրումները և միանվագ դրամական օգնությունները, պատճառված վնասի հատուցումները:

Ծառայողները, ինչպես նաև ծառայության ժամանակ զոհված (մահացած) ծառայողների ընտանիքների անդամներն օգտվում են եկամտահարկ վճարելու արտոնություններից՝ օրենքով սահմանված կարգով և չափերով: Ծառայողներին մատուցված ծառայությունների կամ բնամթերային (ոչ դրամական ձևով) ստացած եկամուտները հարկման առումով չեն ներառվում համախառն եկամտի մեջ և չեն հարկվում եկամտահարկով:

**(12.22 կեփը լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն)**

12.23. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հատուցած գումարները (բացառությամբ՝ ավանդի գումարին հավելագրված և հատուցման ենթակա տոկոսների):

**(12.23 կեփը լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն)**

12.24. ԽսՀՄ խնայբանկի ՀԽսՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման գումարները:

**(12.24 կեփը լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն)**

12.25. Պետության կամ համայնքների կարիքների համար ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց այդ ֆիզիկական անձանց, ինչպես նաև դրանում հաշվառված (գրանցված) ֆիզիկական անձանց վճարված գումարները:

**(12.25 կեփը լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն)**

12.26. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային վարչարարության օժանդակության նպատակով անցկացվող վիճակահանության արդյունքում տրամադրվող պարգևավճարները և բոնուսները:

**(12.26 կեփը լրաց. 23.02.09 N 187-Ն)**

12.27. Գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10,0 հազ. դրամի չափով:

Գործատուների կողմից իրենց աշխատողների առողջության ապահովագրության համար յուրաքանչյուր ամսվա հաշվով հաշվեգրված ապահովագրավճարների 10,0 հազ. դրամը գերազանցող գումարները հարկվում են եկամտահարկով ընդհանուր սահմանված կարգով՝ գումարվելով տվյալ ամսվա հաշվարկված աշխատավարձին:

**(12.27 կեփը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

12.28. Ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամուտները:

**(12.28 կեփը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

12.29. Դրոշմապիտակների ձեռքբերման համար պետական բյուջե վճարված գումարները (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի):

**(12.29 կետը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

12.30. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի համախառն եկամտի 5%-ը չգերազանցող չափով:

**(12.30 կետը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

12.31. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների հաշվին մինչև կենսաթոշակների ստացման իրավունքի ձեռքբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացման ենթակա եկամուտները:

**(12.31 կետը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

13. Համախառն եկամտից նվազեցվող եկամուտներն են նաև.

ա) ստացված շահաբաժինները.

բ) կազմակերպության լուծարման դեպքում ֆիզիկական անձանց բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասի անվանական արժեքի դրական տարբերությունը.

գ) անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում մնացորդային գույքի արժեքը.

դ) գանձապետական պարտատոմսերի և պետական այլ արժեթղթերի, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտները.

ե) բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտները.

զ) գանձապետական պարտատոմսերից և պետական այլ արժեթղթերից, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամտի չափով:

**(13-րդ կետը լրաց. 30.01.02 N 02/141, խմբ. 23.02.09 N 187-Ն)**

13.1. Սույն կետի «ա», «դ» և «ե» ենթակետերով նախատեսված եկամուտները համախառն եկամտից չեն նվազեցվում, եթե՝

- ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, չեկի կամ վճարային այլ արժեթղթերի օտարումից, կամ

- իրականում ստացվում են որպես ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց վարձատրություն կամ փոխարինում են նման վարձատրությունը (անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից):

13.2. Անկախ ինվեստիցիոն բրոքեր կամ դիլեր համարվող հարկատուն կարող է իր համախառն եկամուտը նվազեցնել սույն կետի «դ» և «ե» ենթակետերով սահմանված եկամուտների չափով, եթե՝

- հարկատուի գրանցամատյանում (կամ գործարքների գրանցման այլ տեղում) արժեթուղթը մինչև դրա ձեռքբերման աշխատանքային օրվա ավարտը գրանցվել է որպես ներդրման նպատակով ձեռքբերված արժեթուղթ, և

- վերջինս արժեթուղթը չի օտարում ձեռքբերման օրվանից հետո 24 ամսվա ընթացքում (տվյալ դեպքում օտարում է համարվում նաև արժեթուղթը գրավադրելը, օտարման իրավունքով լիազորագրային կառավարման հանձնելը, օտարման իրավունք նախատեսող լիազորագրով այլ անձին հանձնելը կամ որևէ այլ գործարքը, որը վկայում է դրա կատարման պահին արժեթղթի թողարկված փաստացի օտարումը այլ անձի):

13.3. Եթե հարկատուն սույն կետով նախատեսված նվազեցման իրավունք ունի և սույն հրահանգի որևէ այլ կետի համաձայն իր համախառն եկամտից նվազեցնում է արժեթղթի ձեռքբերման գինը, ապա սույն կետի «դ» և «ե» ենթակետերի համաձայն իր համախառն եկամուտը կարող է նվազեցնել միայն տվյալ արժեթղթի ձեռքբերման գնի և իրացումից ստացված եկամտի (հասույթի) տարբերության չափով:

14. Հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը:

*Օրինակ 2. Ոսկետրափ գյուղի բնակիչ Ա. Հակոբյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորի վրա 2001 թ. ընթացքում աճեցրել է 300կգ. լոլիկ և 500կգ. վարունգ ու հանձնել է «Լիլիթ» ՍՊԸ-ին, որոնց դիմաց ստացել է 100,0 հազ. դրամի եկամուտ: Նշված քաղաքացին նույն ժամանակահատվածում կատարել է նաև կոշիկի վերանորոգում (վարելով առանձին հաշվառում), որի համար ունի պետական գրանցում և ստացել է 10,0 հազ. դրամի եկամուտ:*

*Տվյալ դեպքում, քանի որ այլ գործունեությունից ստացված եկամուտը (10,0 հազ. դրամ) չի գերազանցում համախառն եկամտի (100,0+10,0=110,0 հազ. դրամ) 10%-ը, ապա ֆիզիկական անձի ստացած այդ եկամուտը եկամտահարկով հարկման ենթակա չէ:*

*Օրինակ 3. Ակունք գյուղի բնակիչ Ա. Մարկոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողակտորի վրա 2001 թ. ընթացքում աճեցրել է 10 ցենտներ ցորեն: Ցորենի մի մասը՝ 5 ցենտները հանձնել է «Բերրիություն» ՍՊԸ-ին (կիլոգրամը՝ 100 դրամ), որի դիմաց ստացել է 50,0 հազ. դրամ եկամուտ, իսկ մյուս մասը՝ 5 ցենտները վերամշակելուց հետո ստացել է այլուր, որից 2 ցենտները վաճառել է (կիլոգրամը՝ 130 դրամ) և ստացել 26,0 հազ. դրամի եկամուտ:*

*Տվյալ դեպքում, քանի որ այլ գործունեությունից ստացված եկամուտը (26,0 հազ. դրամ) գերազանցում է համախառն եկամտի (50,0+26,0=76,0 հազ. դրամ) 10%-ը, ապա 2 ցենտներ այլուրի իրացումից ստացված եկամուտը ամբողջությամբ ենթակա է հարկման եկամտահարկով:*

Սույն հրահանգի իմաստով գյուղատնտեսական արտադրանք է համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- հացահատիկային և հացահատիկաղոռային մշակաբույսերը,
- տեխնիկական մշակաբույսերը,
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը,

- կերարտադրության այլ արտադրանքը,
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը,
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը,
- ծառերի և թփերի սածիլները,
- ծառերի և թփերի տնկիները,
- անասնաբուծության արտադրանքը,
- խոզաբուծության արտադրանքը,
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը,
- թռչնաբուծության արտադրանքը,
- ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը,
- եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը,
- ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը,
- ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճիշտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտի տվյալների վրա:

15. Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի հաշվին կատարվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովության պարտավորության (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության) վճարների գումարի չափով:

**(15-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն)**

16. Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է սույն կետում թվարկված կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց սույն հրահանգին համապատասխան հաշվարկված հարկվող եկամտի 5%-ից ոչ ավելի.

ա) հասարակական կազմակերպություններին.

բ) կրոնական կազմակերպություններին.

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցություններին.

դ) համատիրություններին, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այն կազմակերպություններին, որոնք կազմակերպվել և գործում են բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական անվտանգության նպատակով փորձարկման, շրջակա միջավայրի պաշտպանության, գրականության, մշակույթի և կրթության զարգացման և քարոզման, սպառողների իրավունքների պաշտպանության, սիրողական սպորտի խթանման և կազմակերպման, տղամարդու, կանանց, երեխաների և ծերերի իրավունքների պաշտպանության նպատակով.

ե) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին ու մանկատներին.

զ) հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին ու հիվանդանոցներին:

17. Համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար անձնական նվազեցման չափով, որը ըստ տարիների կազմել է. մինչև 2007թ. (ներառյալ)՝ 20,0 հազ. դրամ, 2008թ.՝ 25,0 հազ. դրամ, 2009թ. և 2010թ.՝ 30,0 հազ. դրամ, 2011թ.՝ 32,5 հազ. դրամ:

**(17-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն, խմբ. 23.02.09 N 187-Ն, փոփ. 24.02.11 N 66-Ն)**

18. Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է նաև ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիաիրավական պայմանագրեր կատարելուց ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Փաստաթղթերով ծախսերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## Բ Ա Ժ Ի Ն 5

### ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

19. Հարկ վճարող ֆիզիկական անձանց եկամտահարկը (սույն հրահանգի 6-րդ բաժնով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից) հաշվարկվում է հարկվող եկամտի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով.

19.1. Ռոյալթիներից, տոկոսներից, գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներից հաշվարկվում է 10% դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն հրահանգում նշված նվազեցումները:

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում՝ շենքի ընդհանուր տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) մինչև 10%-ի, սակայն ոչ ավելի, քան 500 մ<sup>2</sup> մակերեսը, իսկ բնակելի թաղամասերում (կամ համալիրներում) 4-ից ավելի անհատական բնակելի տների քանակը (այսուհետ՝ չհարկվող շեն) գերազանցող տարածքների վաճառքից ստացված եկամուտներից հաշվարկվում է 10% դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն հրահանգում նշված նվազեցումները: Ընդ որում՝ չհարկվող շենը նշված չափով կիրառվում է բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի մակերեսի կամ բնակելի թաղամասերում (համալիրներում) անհատական բնակելի տների համար ընդամենը մեկ անգամ՝ անկախ շենքի տարբեր բնակարանների կամ անհատական բնակելի տների իրացման ժամկետներից և կառուցապատող ֆիզիկական անձանց քանակից:

**(19.1 կետը խմբ. 05.03.07 N 2-Ն)**

19.2. Բացառությամբ 19.1 ենթակետում նշված եկամուտների, հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից՝ հետևյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 960,000 դրամ	Հարկվող եկամտի 10%
960,000 դրամից ավելի	96,000 դրամին գումարած 960,000 դրամը գերազանցող գումարի 20%

19.3. Բացառությամբ ոռոյաթիների, տոկոսների և գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտների, ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս (աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկելիս) հարկային գործակալները հարկը հաշվարկում են հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 80,0 հազ. դրամ	Հարկվող եկամտի 10%
80,0 հազ. դրամից ավելի	8,0 հազ. դրամին գումարած 80,0 հազ. դրամը գերազանցող գումարի 20%

Հարկային գործակալը ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից հարկը հաշվարկում է 10% դրույքաչափով՝ հաշվի առնելով միայն սույն հրահանգի 13-րդ և 14-րդ կետերում նշված նվազեցումները:

**(19.3 կետը լրաց. 30.01.02 N 02/141, խմբ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

19.4. Օտարերկրացիներին հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարելիս (աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկելիս) հարկային գործակալները հարկը հաշվարկում են.

ա) աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված եկամուտներից՝ 19.3 ենթակետում նշված դրույքաչափերով.

բ) այլ եկամուտներից՝ հետևյալ դրույքաչափերով.

Եկամտի տեսակը	Չափը
Ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5%
Ռոյալթիներ, տոկոսներ, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտներ, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ, ինչպես նաև հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտներ	10%»:

**(19.4 կետը փոփ. 16.03.04 N 1-05/6-Ն, խմբ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

19.5. **(19.5 ենթակետն ուժը կորցրել է 05.03.07 N 2-Ն):**

## Գ Լ ՈՒ Խ 2

### ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Հարկ վճարող ֆիզիկական անձինք հաշվետու ժամանակաշրջանում ստացված (աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտներից եկամտահարկի գումարը հաշվարկում են ինքնուրույն, բացառությամբ՝ սույն հրահանգի 6-րդ բաժնում նախատեսված դեպքերի, երբ հարկի հաշվարկումը, պահումը (գանձումը) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը իրականացնում է հարկային գործակալը:

**(20-րդ կետը լրաց. 23.02.09 N 187-Ն)**

21. Եկամտահարկը հաշվարկելիս.

ա) նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից կարող է կատարվել միայն մեկ անգամ.

բ) սույն հրահանգով նախատեսված նվազեցվող եկամուտների մասով ծախսերը հարկման նպատակով հաշվի չեն առնվում.

գ) ոռոյալթիններից, գույքի վարձակալության դիմաց եկամուտներից և տոկոսներից եկամտահարկը հաշվարկվում է առանց հաշվի առնելու սույն հրահանգով սահմանված նվազեցումները:

դ) ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց եկամտահարկը հաշվարկվում է հաշվի առնելով միայն սույն հրահանգի 13 և 14 կետերով սահմանված նվազեցումները:

**(21-րդ կետը լրաց. 30.01.02 N 02/141)**

**Բ Ա Ժ Ի Ն 6**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

22. Հարկային գործակալների կողմից ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտահարկի պահումը (գանձումը) իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում, իսկ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի պահումը (գանձումը) իրականացվում է սույն հրահանգի համաձայն հաշվարկված հարկվող եկամտից:

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում ծրագրեր իրականացնող կազմակերպություններն ազատվում են ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ հարկի պահումից, ապա ծրագիր իրականացնող կազմակերպությունները կարող են, իրենց հայեցողությամբ, հարկային տեսչության մարմիններ ներկայացվող՝ սույն հրահանգի հավելված 5-ով սահմանված ձևով գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ և իրականացնել ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից եկամտահարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը հարկի պահումը կատարում է եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկման ենթակա բոլոր եկամուտներից՝ հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

**(22-րդ կետը լրաց. 16.03.04 N 1-05/6-Ն, խմբ. 23.02.09 N 187-Ն, փոփ. 24.02.11 N 66-Ն)**

23. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին եկամուտներ վճարելիս իրականացնում են հարկի պահում (գանձում), բացառությամբ, եթե.

ա) վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են և Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (այդ թվում՝ երկկողմանի ակտ)՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>), անձնագրի տվյալները և Հայաստանի Հանրապետությունում բնակության (հաշվառման) հասցեն, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման վկայականի համարը.

բ) («բ» ենթակետը հանվել է 30.01.02 N 02/141)

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն վճարվում են սույն հրահանգի 6.5 ենթակետում նշված՝ խաղատներում, շահումներով խաղերում շահումներ:

դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն վճարվում են սույն հրահանգի 6.6 ենթակետում նշված՝ մրցույթներից (մրցություններից) իրային մրցանակներ:

Սույն հրահանգի իմաստով անձնագրի տվյալներ են համարվում անձնագրում արտացոլված անուն և ազգանունը, անձնագրի համարը (սերիան), տրման ամսաթիվը և կողը (ում կողմից է տրված):

ե) եկամուտները վճարվում են նոտարներին՝ իրենց կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

զ) նրանք հանդիսանում են հանձնակատար և հանձնարարության պայմանագրի շրջանակներում այլ անձանցից ստացված գումարները վճարում են հանձնարարողին, կամ՝ նրանք հանդիսանում են կոմիսիոներ և կոմիսիոն պայմանագրի շրջանակներում այլ անձանցից ստացված գումարները վճարում են կոմիտենտին, կամ՝ նրանք հանդիսանում են գործակալ և գործակալության պայմանագրի շրջանակներում այլ անձանցից ստացված գումարները վճարում են պրինցիպալին:

**(23-րդ կետը փոփ. 30.01.02 N 02/141, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

23.1. Հարկային գործակալը Հայաստանի Հանրապետության քաղաքացուն եկամուտներ վճարելիս (աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկելիս) այդ եկամուտներից իրականացնում է նվազեցումներ:

ա) իր կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացուն վճարվող՝ սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված եկամուտների չափով:

բ) սույն հրահանգի 15 կետով սահմանված պարտադիր վճարի գումարի չափով, եթե այդ վճարը հաշվարկելու, պահելու (գանձելու) պարտավորությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացուն եկամուտներ վճարող սվյալ հարկային գործակալը:

գ) սույն հրահանգի 16 կետում նշված հատկացումների չափով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու գրավոր դիմումի համաձայն:

Օրինակ 4. Հայաստանի Հանրապետության քաղաքացին 2008 թ. հունվարին գրավոր դիմում է կազմակերպությանը այդ ամսում իրեն հաշվարկված 50,0 հազ. դրամ աշխատավարձից 5,0 հազ. դրամը փոխանցել Հ. Թումանյանի թանգարանին:

Կազմակերպության կողմից կատարվում է հետևյալ հաշվարկը.

- համախառն եկամուտ՝ 50,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 1,5 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 25,0 հազ. դրամ,
- տարբերություն (50,0-1,5-25,0)՝ 23,5 հազ. դրամ,
- գործակից ((100%+5%):100%)՝ 1.05,
- հարկվող եկամուտ (23,5:1.05)՝ 22,38 հազ. դրամ,
- հարկ (22,38x10%)՝ 2,238 հազ. դրամ:

Ընդ որում՝ բարեգործական հարկացումների գծով նվազեցումը կազմում է 1,119 հազ. դրամ (22,38x5%):

**(Օրինակ 4-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

Արհեստակցական կազմակերպության անդամի գրավոր դիմումի առկայության դեպքում գործատուն կազմակերպում է արհմիութենական անդամավճարի գանձումը և հատկացումը՝

արհեստակցական կազմակերպության կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով) սահմանված կարգով ու ժամկետում: Այդ առումով հարկային գործակալների կողմից իր աշխատողներին վճարվող եկամուտներից յուրաքանչյուր ամսում արհմիութենական կազմակերպություններին սահմանված չափերով մասհանվող գումարները (բայց սույն հրահանգի 16 կետով սահմանված չափից ոչ ավել) համախառն եկամտից նվազեցնելու համար աշխատողների կողմից արհեստակցական կազմակերպության անդամության դիմումի առկայությունը պարտադիր է.

դ) սույն հրահանգի 17 կետում նշված անձնական նվազեցման չափով՝ անկախ տվյալ հարկատուի կողմից ստացվող եկամուտներից մյուս հարկային գործակալների կողմից նման նվազեցումների իրականացումից:

**(23.1 կետը լրաց. 23.02.09 N 187-Ն)**

23.2. Հարկային գործակալները հարկը հաշվարկում են.

ա) ոռոյալթիներից, տոկոսներից և գույքի վարձակալության դիմաց եկամուտներից՝ սույն հրահանգի 19.1 ենթակետով, իսկ ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից՝ 19.3 կետով (վերջին պարբերություն) սահմանված դրույքաչափերով:

Օրինակ 5. Հեղինակային պայմանագրով գրքի ձեռագիրը հրատարակելու դիմաց Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2006թ. հոկտեմբերի 22-ին հրատարակչությունը հաշվարկում և վճարում է ոռոյալթի 500,0 հազ. դրամ գումարի չափով:

Տվյալ դեպքում հրատարակչության կողմից քաղաքացուն եկամուտը (ոռոյալթի) վճարվելիս հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով, որը կազմում է 50,0 հազ. դրամ (500,0x10%) և 2006 թ. նոյեմբերի 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Օրինակ 6. Հայաստանի Հանրապետության քաղաքացու և բանկի միջև կնքված ավանդային պայմանագրի համաձայն՝ քաղաքացին 2005 թ. հոկտեմբերի 1-ին բանկում ներդրել է ավանդ 10000,0 հազ. դրամ գումարի չափով՝ 1 տարի ժամկետով, որի դիմաց ամսական ստանում է եկամուտ՝ տարեկան 6% (պարզ տոկոս) հաշվարկով, և բանկի կողմից տոկոսները վճարվել են յուրաքանչյուր ամիս՝ հաջորդ ամսվա 5-ին: Նույն քաղաքացին 2006 թ. մարտի 1-ին բանկից ձեռք է բերել 1000,0 հազ. դրամ անվանական արժեքով հասարակ մուրհակ (ոչ պետական)՝ 9% զեղչով, որի մարման ժամկետը լրացել է 2006 թ. մայիսի 31-ին, և բանկի կողմից տոկոսները վճարվել են 2006 թ. հուլիսի 3-ին:

Տվյալ դեպքում բանկի կողմից քաղաքացուն եկամուտներ վճարվելիս հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով՝

ա) ներդրված ավանդի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված և վճարված տոկոսներից, որը կազմում է ամսական 5,0 հազ. դրամ (10000,0x6%:12x10%) և եկամտի վճարմանը հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

բ) 3 ամսվա համար հաշվեգրված և վճարված զեղչատոկոսներից, որը կազմում է 9000,0 հազ. դրամ (1000,0x9%x10%) և 2006 թ. օգոստոսի 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Օրինակ 7. Հայաստանի Հանրապետության քաղաքացին 2005 թ. դեկտեմբերի 1-ից մեկ տարով կազմակերպությանը վարձակալության է հանձնում բնակելի տարածք, որի դիմաց ստանում է վարձավճար՝ ամսական 500,0 հազ. դրամ գումարի չափով: Կազմակերպության կողմից վարձավճարները վճարվել են յուրաքանչյուր ամիս՝ հաջորդ ամսվա 5-ին:

Տվյալ դեպքում կազմակերպության կողմից քաղաքացուն եկամուտներ (վարձավճարներ) վճարվելիս հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով, որը կազմում է ամսական 50,0 հազ. դրամ (500,0x10%) և եկամտի վճարմանը հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

բ) մյուս բոլոր եկամուտներից՝ սույն հրահանգի 19.3 կետում (առաջին պարբերություն) նշված դրույքաչափերով (բացառությամբ՝ սույն հրահանգի 26-րդ կետում նշված դեպքերի):

Տվյալ ամսում աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարումների յուրաքանչյուր հաշվարկի և այլ եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարվող եկամուտների) յուրաքանչյուր վճարման դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսում նշված եկամուտների ընդհանուր գումարից և անձնական նվազեցման չափից:

Օրինակ 8. Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2009թ. փետրվարի 4-ին հաշվարկում է հունվար ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ՝ 70,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,1 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (70,0-2,1-30,0)՝ 37,9 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 3,79 հազ. դրամ (37,9x10%):

2009 թ. փետրվարի 6-ին հարկային գործակալի կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում է հունվար ամսվա պարգևատրում՝ 50,0 հազ. դրամ գումարով և կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով հունվար ամսվա համար հարկային գործակալի կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ (70,0+50,0)՝ 120,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,6 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (120,0-3,6-30,0)՝ 86,4 հազ. դրամ,
- հարկ (8,0+(86,4-80,0)x20%)՝ 9,28 հազ. դրամ:

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է պարգևատրման գումարից պահվող եկամտահարկի գումարը՝ 5,49 հազ. դրամ (9,28-3,79):

Օրինակ 9. Կազմակերպությունը քաղաքացիաիրավական պայմանագրով իր մոտ աշխատանք կատարող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2009 թ. փետրվարի 6-ին՝ 2009թ. հունվարի 21-ի կատարողական ակտի համաձայն, հաշվարկում և վճարում է 2008թ. սեպտեմբերի 9-ից մինչև 2009թ. հունվարի 9-ը կատարած աշխատանքի դիմաց վարձատրություն՝ 250,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ՝ 250,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (250,0-30,0)՝ 220,0 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 36,0 հազ. դրամ  $(8,0+(220,0-80,0)\times 20\%)$ :

**(23.2 կետը լրաց. 30.01.02 N 02/141, խմբ. 16.03.04 N 1-05/6-Ն, 28.09.06 N 1-05/13-Ն, 29.02.08 N 02-Ն, լրաց., խմբ. 23.02.09 N 187-Ն)**

24. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը օտարերկրացիներին եկամուտներ վճարելիս իրականացնում են հարկի պահում (գանձում), բացառությամբ, եթե.

ա) վճարված եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են և օտարերկրացու հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (այդ թվում՝ երկկողմանի ակտ)՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները և Հայաստանի Հանրապետությունում բնակության (հաշվառման) հասցեն, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման վկայականի համարը.

բ) վճարված եկամուտները կապված են օտարերկրացու կողմից իրականացված արտաքին տնտեսական գործունեության հետ:

Օրինակ 10. Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպության և օտարերկրացու միջև կնքված պայմանագրի համաձայն օտարերկրացին իրականացնում է ապրանքների անմիջական մատակարարում Աթենքից (Հունաստան) դեպի Երևան (Հայաստան): Մաքսային հայտարարագրից հետևում է, որ այդ ապրանքները ներմուծվել են կազմակերպության կողմից: Պայմանագրի համաձայն օտարերկրացու կողմից կազմակերպությանը փաստացի մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով ներկայացված հաշիվ-ապրանքագրի (invoice) հիման վրա կազմակերպությունը օտարերկրացուն վճարում է 10000 ԱՄՆ-ի դոլար, որից՝

- |                     |  |
|---------------------|--|
| - 8000 ԱՄՆ-ի դոլար՝ | ապրանքների դիմաց,  |
| - 1300 ԱՄՆ-ի դոլար՝ | ապրանքների տեղափոխման համար,   |
| - 500 ԱՄՆ-ի դոլար՝  | ապրանքների բեռնման-բեռնաթափման համար,  |
| - 200 ԱՄՆ-ի դոլար՝  | մինչև Հայաստանի Հանրապետության տարածք ներկրումը մաքսային ձևակերպումների համար: |

Տվյալ դեպքում այդ գործունեությունից օտարերկրացու սրացած եկամուտները (10000 ԱՄՆ-ի դոլար) համարվում են արտաքին տնտեսական գործունեությունից սրացված եկամուտներ և Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չեն:

24.1. Հարկային գործակալները ճանաչում են սույն հրահանգի 10 կետում նշված՝ հայաստանյան աղբյուրներից օտարերկրացիներին վճարված եկամուտները (անկախ վճարման վայրից): Ընդ որում.

ա) օտարերկրացիների աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները հաշվարկվում են աշխատանքային պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունում աշխատանքներ կատարելուց՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան.

բ) օտարերկրացիների շահաբաժինները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ շահաբաժինները վճարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ինվեստիցիոն հիմնադրամներում մասնակցությունից.

գ) օտարերկրացիների ռոյալթիները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե դրանք ստացվել են հարկային գործակալից, որի հետ կապված առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը.

դ) օտարերկրացիների տոկոսները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե դրանք ստացվել են, մասնավորապես՝

- փոխառության կամ մուրհակի դիմաց՝ հարկային գործակալից, որի հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը,

- ավանդի (դեպոզիտի) դիմաց՝ հարկային գործակալից, որի հետ կապված առաջացել է տոկոսներ վճարելու պարտավորությունը,

- պարտատոմսի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկված պարտատոմսերի էմիտենտից (կամ վերջինիս լիազորված անձից), ներառյալ՝ այդ պարտատոմսերը մարելիս զեղչի ձևով, ինչպես նաև մասնակցության իրավունքով թողարկված պարտատոմսերից վճարված տոկոսները՝ մինչև վերջիններիս բաժնետոմսերի փաստացի ձևավորումը.

ե) խաղատներում, շահումներով խաղերում օտարերկրացիների շահումները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ շահումները ստացվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող խաղատներից կամ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող շահումներով խաղերից.

զ) մրցույթներում (մրցություններում) օտարերկրացիների մրցանակները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետությունում անցկացվող մրցույթներից (մրցություններից).

է) վիճակախաղերից շահումները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետությունում անցկացվող վիճակախաղերում.

ը) նվիրատվության կամ օգնության կարգով օտարերկրացիների ստացվող (հատկացվող) գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները) համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են հարկային գործակալից Հայաստանի Հանրապետությունում.

թ) օտարերկրացիների ապահովագրական հատուցումները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ապահովագրական կազմակերպություններից.

ժ) օտարերկրացիների կողմից գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե՝

- այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքը վարձակալության տալուց,

- վարձակալության տալուց կամ վարձակալության պայմանագրի կնքման պահին շարժական գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այն գրանցվում է (ենթակա է գրանցման) Հայաստանի Հանրապետությունում.

Ճ) օտարերկրացիների գույքի (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի) օտարումից արժեքի հավելածի ձևով եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված

եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի օտարումից, ընդ որում՝

- գույքի Հայաստանի Հանրապետություն ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերի (մաքսային հայտարարագիր) առկայության դեպքում գույքի ձեռքբերման արժեքը որոշվում է ելնելով վերջինիս ներմուծմանը վերաբերող հաշիվ-ապրանքագրում (invoice) նշված արժեքից,

- գույքի ձեռքբերման փաստը հաստատող փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր, գնման ակտ և այլն) առկայության դեպքում այդ գույքի ձեռքբերման արժեքը որոշվում է ելնելով վերջինիս ձեռքբերմանը վերաբերող փաստաթղթերում նշված արժեքից,

- գույքի ձեռքբերման արժեքի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերի բացակայության դեպքում հայաստանյան աղբյուրներից եկամուտը հաշվարկվում է օտարերկրացիների կողմից օտարվող գույքի ամբողջ արժեքից (իրացման գներով) ելնելով:

Օրինակ 11. Օտարերկրացու կողմից ներդրում է կատարվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված գույքի ձևով: Օտարերկրացու կողմից այդ գույքը ձեռք է բերվել 100,0 հազ. դրամ արժեքով, իսկ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալ ներդրում կատարելիս այն գնահատվել է 140,0 հազ. դրամի չափով: Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթերը:

Տվյալ դեպքում ներդրված գույքի գնահատման և ձեռք բերման արժեքներից առաջացած դրական տարբերությունը (140,0-100,0=40,0 հազ. դրամ) օտարերկրացու համար համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ, որից այդ առևտրային կազմակերպությունը հաշվարկելու է հարկը:

Օրինակ 12. Օտարերկրացին Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վաճառել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությանը 50,0 հազ. դրամ արժեքով: Ընդ որում՝ օտարերկրացու կողմից այդ գույքի ձեռք բերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված հիմնավորող որևէ փաստաթուղթ բացակայում է:

Տվյալ դեպքում օտարերկրացու կողմից գույքի օտարումից ստացված ամբողջ արժեքը (50,0 հազ. դրամ) համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ, որից առևտրային կազմակերպությունը հաշվարկելու է հարկը:

Ժբ) օտարերկրացիների կողմից բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե բեռները փոխադրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեից և (կամ) հասցեով, ընդ որում՝

- բեռի փոխադրման դեպքում փոխադրողը առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնում է նշանակված վայրը և այն հանձնում է բեռն ստանալու համար լիազորված անձին (ստացողին), իսկ առաքողը վճարում է սահմանված վայրը բեռի փոխադրման համար (բեռի փոխադրումը հավաստվում է բեռնառաքիչին տրանսպորտային բեռնագիր (կոնոսամենտ կամ բեռի վերաբերյալ այլ փաստաթուղթ) հանձնելով),

- ֆրախտի (չարտերի) դեպքում մի կողմը (ֆրախտ տրամադրողը) մյուս կողմին (ֆրախտ ստացողին) բեռների փոխադրման համար վճարի դիմաց տրամադրում է տրանսպորտային միջոցի ամբողջ տարողունակությունը կամ դրա մի մասը՝ մեկ կամ մի քանի չվերթի համար:

Օրինակ 13. Սույն հրահանգի օրինակ 10-ում նշված դեպքում այլ օտարերկրացուն կազմակերպության համար ապրանքների տեղափոխման դիմաց կազմակերպության կողմից վճարված 1300 ԱՄՆ-ի դոլարը այդ օտարերկրացու համար համարվում է հայաստանյան

աղբյուրներից ստացված եկամուտ (բեռների փոխադրում), որից կազմակերպությունը հաշվարկելու է հարկը:

**(24.1 կետը փոփ. 23.02.09 N 187-Ն)**

24.2. Հարկային գործակալները հարկը հաշվարկում են.

ա) ուղաթիներից, տոկոսներից և գույքի վարձակալության դիմաց եկամուտներից՝ սույն հրահանգի 19.1 ենթակետով սահմանված դրույքաչափով.

բ) աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից՝ սույն հրահանգի 19.3 ենթակետով սահմանված դրույքաչափերով (իրականացնելով միայն սույն հրահանգի 15-րդ կետում նշված նվազեցումները):

*Օրինակ 14. Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունը այլ երկրներում չունի առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղ, ներկայացուցչություն): Օտարերկրացին աշխատանքային պայմանագրի համաձայն հանդիսանում է այդ կազմակերպության վարձու աշխատող և հրամանով գործուղվում է Գերմանիա (իր մշտական բնակության վայր)՝ որպես կազմակերպության լիազոր ներկայացուցիչ:*

Տվյալ դեպքում օտարերկրացու համար հաշվարկվող աշխատավարձը համարվում է հայաստանյան աղբյուրներից եկամուտ և առևտրային կազմակերպությունը եկամտահարկը պահում է հաշվարկված աշխատավարձի ամբողջ գումարից (իրականացնելով միայն վարձու աշխատողի պարտադիր սոցիալական ապահովության վճարի՝ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3%-ի չափով նվազեցումը)՝ սույն հրահանգի 19.3 կետում նշված դրույքաչափերով:

Նույն օրինակում, եթե առևտրային կազմակերպությունը Գերմանիայում ունենար առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ, ներկայացուցչություն) և օտարերկրացին աշխատանքային պայմանագրի համաձայն հանդիսանար այդ առանձնացված ստորաբաժանման վարձու աշխատող, ապա օտարերկրացու համար հաշվարկված աշխատավարձը չէր համարվի հայաստանյան աղբյուրներից եկամուտ և հարկման ենթակա չէր լինի:

Հարկային գործակալի կողմից օտարերկրացու համար տվյալ ամսում աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարումների յուրաքանչյուր հաշվարկի դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսում նշված եկամուտների ընդհանուր գումարից:

*Օրինակ 15. Հարկային գործակալը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող օտարերկրացուն 2011թ. մարտի 1-ին հաշվարկում է փետրվար ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով.*

- համախառն եկամուտ՝ 70,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,1 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (70,0-2,1)՝ 67,9 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 6,79 հազ. դրամ (67,9x10%):

2011թ. մարտի 4-ին հարկային գործակալի կողմից այդ օտարերկրացուն հաշվարկվում է փետրվար ամսվա պարգևատրում՝ 60,0 հազ. դրամ գումարով և կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով փետրվար ամսվա համար հարկային գործակալի կողմից այդ օտարերկրացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ (70,0+60,0)՝ 130,0 հազ. դրամ,

- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,9 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (130,0-3,9)՝ 126,1 հազ. դրամ,
- հարկ  $(8,0 + (126,1 - 80,0) \times 20\%)$ ՝ 17,22 հազ. դրամ:

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է պարզևսարման գումարից պահվող եկամտահարկի գումարը՝ 10,43 հազ. դրամը (17,22-6,79):

Տվյալ դեպքում՝ հարկային գործակալի կողմից օտարերկրացու 2011թ. փետրվար ամսվա համար հաշվարկված համախառն եկամուտը (130,0 հազ. դրամ) և եկամտահարկը (17,22 հազ. դրամ) արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող 2011թ. 1-ին եռամսյակի հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում՝ փետրվար ամսին համապատասխանող սյունակներում (դրամներով), իսկ 2011թ. փետրվար ամսվա համար հաշվարկված եկամտահարկը (6,79 հազ. դրամ) վճարվում է պետական բյուջե մինչև 20.03.2011թ. (ներառյալ):

գ) մյուս բոլոր դեպքերում՝ սույն հրահանգի 19.4 ենթակետով սահմանված չափերով (նվազեցնելով միայն սույն հրահանգի 12.2 և 13 կետերով սահմանված նվազեցվող եկամուտները):

Օրինակ 16. Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունը այլ երկրներում չունի առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղ, ներկայացուցչություն): Օտարերկրացին քաղաքացիաիրավական պայմանագրի համաձայն 2001 թ. ընթացքում հանդիսանում է կազմակերպության լիազոր ներկայացուցիչ:

Եթե օտարերկրացին այդ լիազորությունները իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում, ապա պայմանագրի համաձայն վճարվող գումարները համարվում են հայաստանյան աղբյուրներից եկամուտներ և հարկվում են եկամուտների վճարման աղբյուրի մոտ 10% դրույքաչափով (առանց որևէ նվազեցում կատարելու):

Եթե օտարերկրացին այդ լիազորությունները իրականացնում է այլ պետությունում (օրինակ՝ Գերմանիայում), ապա պայմանագրի համաձայն վճարվող գումարները չեն համարվում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ և հարկման ենթակա չեն:

Օրինակ 17. 2000 թ.-ին օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպության բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 6,0 հազ. դրամ անվանական արժեքով) ձեռք բերման համար վճարել է 500,0 հազ. դրամ (100 հազ. x 5,0 հազ. դրամ), իսկ մեկ տարի անց այդ բաժնետոմսերը վաճառել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված մեկ այլ առևտրային կազմակերպությանը, որի դիմաց ստացել է 700,0 հազ. դրամ (100 հազ. x 7,0 հազ. դրամ): Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթերը:

Տվյալ դեպքում բաժնետոմսերի վաճառքի և ձեռք բերման արժեքների դրական տարբերությունը (700,0-500,0=200,0 հազ. դրամ) օտարերկրացու համար համարվում է հայաստանյան աղբյուրներից ստացված նվազեցվող եկամուտ, որից գնորդ առևտրային կազմակերպությունը հարկ չի հաշվարկում:

**(24.2 կետը խմբ., փոփ. 23.02.09 N 187-Ն, փոփ. խմբ. 24.02.11 N 66-Ն)**

25. Վարձու աշխատողների արձակուրդային գումարների հարկումը կատարվում է հետևյալ կերպ.

ա) այն դեպքում, երբ ձևակերպվում է վարձու աշխատողի հերթական կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախորդ տարվա չօգտագործված

արձակուրդը, ապա հաշվարկված արձակուրդային գումարը ներառվում է նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացված եկամուտ, որ ամիսներին նա գտնվում է արձակուրդում:

*Օրինակ 18. Կազմակերպության վարձու աշխատողը (Հայաստանի Հանրապետության քաղաքացին) օգտագործում է հերթական արձակուրդը և գնում արձակուրդ 2009 թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 25-ը: Արձակուրդային գումարը հաշվարկվել է 65,0 հազ. դրամի չափով:*

*Արձակուրդ գնալիս վարձու աշխատողի արձակուրդային գումարները 2009թ. հունվար ամսվա եկամտահարկը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ ձևով՝*

*- 2009թ. հունվար ամսվա աշխատավարձին (օրինակ՝ 70,0 հազ. դրամ) գումարվում է հունվար ամսվանը բաժին ընկնող արձակուրդային գումարը (օրինակ՝ 7,0 հազ. դրամ) և աշխատողի հունվար ամսվա համախառն եկամուտը կազմում է 77,0 հազ. դրամ (70,0+7,0),*

*- հաշվարկվում են հունվար ամսվա նվազեցումները՝ 32,31 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,31 հազ. դրամ),*

*- հաշվարկվում է 2009թ. հունվար ամսվա հարկվող եկամուտը, որպես համախառն եկամտի և նվազեցումների փարբերություն՝ 44,69 հազ. դրամ (77,0-32,31),*

*- 2009 թ. հունվար ամսվա եկամտներից եկամտահարկը կազմում է 4,47 հազ. դրամ (44,69x10%), որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մինչև 2009թ. փետրվարի 20-ը (ներառյալ),*

*- 2009 թ. փետրվար ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարից՝ 58,0 հազ. դրամից (65,0-7,0) կատարվում են փետրվար ամսվա նվազեցումներ՝ 31,74 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 1,74 հազ. դրամ) գումարի չափով և 2009թ. փետրվար ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարից պահվող եկամտահարկը կազմում է 2,63 հազ. դրամ ((58,0-31,74)x10%):*

*Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո 2009թ. փետրվար ամսվա համար աշխատավարձը հաշվարկելիս կատարվում է աճողական կարգով 2009թ. փետրվար ամսվա հարկվող եկամտի և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսվա համար հաշվարկված արձակուրդային և աշխատավարձի գումարներից՝*

*- 2009 թ. փետրվար ամսվա աշխատավարձին (օրինակ՝ 12,0 հազ. դրամ) գումարվում է փետրվար ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարը (65,0-7,0=58,0 հազ. դրամ) և աշխատողի փետրվար ամսվա համախառն եկամուտը կազմում է 70,0 հազ. դրամ (58,0+12,0),*

*- հաշվարկվում են փետրվար ամսվա նվազեցումները՝ 32,1 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,1 հազ. դրամ),*

*- հաշվարկվում է 2009թ. փետրվար ամսվա հարկվող եկամուտը, որպես համախառն եկամտի և նվազեցումների փարբերություն՝ 37,9 հազ. դրամ (70,0-32,1),*

*- 2009 թ. փետրվար ամսվա եկամտահարկը կազմում է 3,79 հազ. դրամ (37,9x10%), որը մինչև 2009թ. մարտի 20-ը (ներառյալ) ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,*

*- 2008 թ. փետրվար ամսվա աշխատավարձից պահվող եկամտահարկի գումարը կազմում է 1,16 հազ. դրամ (3,79-2,63):*

*Նույն օրինակում, եթե վարձու աշխատողը արձակուրդ է գնում 2008թ. դեկտեմբերի 29-ից մինչև 2009թ. հունվարի 25-ը և մինչև արձակուրդ գնալը օրենքով սահմանված ժամկետում վարձու աշխատողին վճարվում է հաշվարկված արձակուրդային գումարը (65,0 հազ. դրամ), ապա*

արձակուրդ գնալիս վարձու աշխատողի արձակուրդային գումարները 2008թ. դեկտեմբեր ամսվա եկամտահարկը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ ձևով՝

- 2008 թ. դեկտեմբեր ամսվա աշխատավարձին (օրինակ՝ 70,0 հազ. դրամ) գումարվում է 2008թ. դեկտեմբեր ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարը (օրինակ՝ 7,0 հազ. դրամ) և աշխատողի 2008թ. դեկտեմբեր ամսվա համախառն եկամուտը կազմում է 77,0 հազ. դրամ (70,0+7,0),

- հաշվարկվում են 2008թ. դեկտեմբեր ամսվա նվազեցումները՝ 27,31 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 25,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,31 հազ. դրամ),

- հաշվարկվում է 2008թ. դեկտեմբեր ամսվա հարկվող եկամուտը, որպես համախառն եկամտի և նվազեցումների տարբերություն՝ 49,69 հազ. դրամ (77,0-27,31) և 2008թ. դեկտեմբեր ամսվան վերաբերող եկամուտներից եկամտահարկը կազմում է 4,97 հազ. դրամ (49,69x10%),

- 2009 թ. հունվար ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարից՝ 58,0 հազ. դրամից (65,0-7,0) կտարվում են 2009թ. հունվար ամսվա նվազեցումներ՝ 26,74 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 25,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 1,74 հազ. դրամ) գումարի չափով և 2009 թ. հունվար ամսվան վերաբերող արձակուրդային գումարից պահվող եկամտահարկը կազմում է 3,13 հազ. դրամ ((58,0-26,74)x10%),

- 2008 թ. դեկտեմբեր ամսին վճարված եկամուտները՝ 155,0 հազ. դրամ (97,0+58,0) և այդ եկամուտներից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը 8,1 հազ. դրամ (4,97+3,13) եկամտահարկի գումարը արտացոլվում են 2008թ. 4-րդ եռամսյակի համար սահմանված ձևի «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի» հաշվարկում, իսկ պահված եկամտահարկի գումարը (8,1 հազ. դրամ) ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մինչև 2009թ. հունվարի 5-ը (ներառյալ):

Վարձու աշխատողի արձակուրդից վերադառնալուց հետո 2009թ. հունվար ամսվա համար աշխատավարձը հաշվարկելիս կտարվում է աճողական կարգով 2009 թ. հունվար ամսվա հարկվող եկամտի և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով այդ ամսվա համար հաշվարկված արձակուրդայինի և աշխատավարձի գումարներից՝

- 2009 թ. հունվար ամսվա աշխատավարձին (օրինակ՝ 12,0 հազ. դրամ) գումարվում է 2009թ. հունվար ամսվան բաժին ընկնող արձակուրդային գումարը (65,0-7,0=58,0 հազ. դրամ) և աշխատողի հունվար ամսվա համախառն եկամուտը կազմում է 70,0 հազ. դրամ (58,0+12,0),

- հաշվարկվում են 2009թ. հունվար ամսվա նվազեցումները՝ 32,1 հազ. դրամ (անձնական նվազեցում՝ 30,0 հազ. դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 2,1 հազ. դրամ),

- հաշվարկվում է 2009թ. հունվար ամսվա հարկվող եկամուտը, որպես համախառն եկամտի և նվազեցումների տարբերություն՝ 37,9 հազ. դրամ (70,0-32,1) և 2009թ. հունվար ամսվա եկամտահարկը կազմում է 3,79 հազ. դրամ (37,9x10%),

- 2009 թ. հունվար ամսվա աշխատավարձը (32,0 հազ. դրամ) և դրան վերաբերող եկամտահարկի գումարը (3,79-3,13=0,66 հազ. դրամ) արտացոլվում են 2009 թ. 1-ին եռամսյակի համար սահմանված ձևի «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի» հաշվարկում, իսկ պահված եկամտահարկի գումարը (0,66 հազ. դրամ) ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մինչև 2009թ. փետրվարի 20-ը (ներառյալ):

բ) այն դեպքում, երբ արձակուրդում գտնվող աշխատողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ են կանչում աշխատանքի, ապա եկամտահարկը հաշվարկելիս՝

- մինչև արձակուրդ գնալը արձակուրդային գումարները հաշվի են առնվում «ա» ենթակետով սահմանված կարգով,

- արձակուրդից հետ կանչելու օրվանից փաստացի աշխատած օրերի համար աշխատավարձը գումարվում է այն ամսվա եկամուտներին (եթե արձակուրդից հետ կանչելու օրերը վերաբերում են երկու ամիսներին, ապա՝ ըստ այդ ամիսների), որ օրերի համար տրվել է աշխատավարձը,

- արձակուրդից հետ կանչելուց եկամտահարկը հաշվարկվում է՝ ելնելով այդ ամսվա համար «ա» ենթակետով սահմանված կարգով հաշվարկված արձակուրդայինի և աշխատավարձի ընդհանուր գումարից (անկախ աշխատողին չօգտագործված արձակուրդի օրերի համար արձակուրդ գնալու իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանելու հանգամանքից):

**(25-րդ կետը փոփ. 30.01.02 N 02/141, 28.09.06 N 1-05/13-Ն, 05.03.07 N 2-Ն, խմբ. 23.02.09 N 187-Ն)**

25.1. Վարձու աշխատողներին (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի) վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ) գումարները ներառվում են նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացված եկամուտներ, որ ամիսների համար այդ նպաստները հաշվարկվել են, սակայն հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում արտացոլվում են դրանց վճարման ամսվան վերաբերող սյունակում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումներին համապատասխանող տողում:

«Օրինակ 19. Դիտենք հիվանդության նպաստի վճարման օրինակը: Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2011թ. փետրվարի 1-ին հաշվարկում է հունվար ամսվա համար աշխատավարձ 100,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ՝ 100,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ  $(100,0 - (3,0 + 32,5))$ ՝ 64,5 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 6,45 հազ. դրամ  $(64,5 \times 10\%)$ :

2011թ. փետրվարի 8-ին կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում և վճարվում է հունվար-փետրվար ամիսների համար հիվանդության նպաստ՝ 72,0 հազ. դրամ գումարով (հունվար ամսվա համար՝ 32,0 հազ. դրամ և փետրվար ամսվա համար՝ 40,0 հազ. դրամ) և կատարվում է 2011թ. հունվար ամսվա աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով հունվար ամսվա համար կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ  $(100,0 + 32,0)$ ՝ 132,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ  $(132,0 - (3,0 + 32,5))$ ՝ 96,5 հազ. դրամ,
- եկամտահարկ  $(8,0 + (96,5 - 80,0) \times 20\%)$ ՝ 11,3 հազ. դրամ:

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է նպաստի գումարից պահվող եկամտահարկի գումարը՝ 4,85 հազ. դրամը (11,3-6,45): Միաժամանակ՝ 2011թ. փետրվար ամսվանը վերաբերող նպաստի գումարից ելնելով հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ՝ 40,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (40,0-32,5)՝ 7,5 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 0,75 հազ. դրամ (7,5x10%):

Ընդամենը վճարված նպաստից եկամտահարկը կազմում է 5,6 հազ. դրամ (4,85+0,75):

2011թ. մարտի 1-ին կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում է փետրվար ամսվա համար աշխատավարձ 130,0 հազ. դրամ գումարով և կատարվում է 2011թ. փետրվար ամսվա աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով փետրվար ամսվա համար կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ (40,0+130,0)՝ 170,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,9 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (170,0-(3,9+32,5))՝ 133,6 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(133,6-80,0)x20%)՝ 18,72 հազ. դրամ:

Հաշվանցելով նպաստից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է աշխատավարձի գումարից պահվող եկամտահարկի գումարը՝ 17,97 հազ. դրամը (18,72-0,75):

Տվյալ դեպքում՝ կազմակերպության կողմից քաղաքացու 2011թ. հունվար ամսվա համար հաշվարկված աշխատավարձը (100,0 հազ. դրամ) և եկամտահարկը (6,45 հազ. դրամ) արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող 2011թ. 1-ին եռամսյակի հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում՝ հունվար ամսին համապատասխանող սյունակներում (դրամներով), իսկ 2011թ. հունվար ամսվա համար հաշվարկված եկամտահարկը (6,45 հազ. դրամ) վճարվում է մինչև 20.02.2011թ. (ներառյալ): Կազմակերպության կողմից քաղաքացու 2011թ. փետրվար ամսվա հաշվարկված աշխատավարձը, 2011թ. հունվար-փետրվար ամիսների համար հաշվարկված և վճարված նպաստը (130,0+72,0=202,0 հազ. դրամ) և եկամտահարկը (17,97+5,6=23,57 հազ. դրամ) արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող 2011թ. 1-ին եռամսյակի հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում՝ փետրվար ամսին համապատասխանող սյունակներում (դրամներով), իսկ 2011թ. փետրվարին հաշվարկված եկամտահարկը (23,57 հազ. դրամ) վճարվում է պետական բյուջե մինչև 20.03.2011թ. (ներառյալ):

Դիտենք հղիության և ծննդաբերության նպաստի վճարման օրինակը: Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2011թ. փետրվարի 1-ին հաշվարկում է հունվար ամսվա համար աշխատավարձ 100,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ՝ 100,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (100,0-(3,0+32,5))՝ 64,5 հազ. դրամ:

Հարկվող եկամտից եկամտահարկը կազմում է 6,45 հազ. դրամ (64,5x10%):

2011թ. հունվարի 14-ին կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում և վճարվում է հունվար-հունիս ամիսների համար հղիության և ծննդաբերության նպաստ՝ 650,0 հազ. դրամ գումարով (հունվար ամսվա համար՝ 65,0 հազ. դրամ, փետրվար ամսվա համար՝ 125,0 հազ. դրամ, մարտ ամսվա համար՝ 155,0 հազ. դրամ, ապրիլ ամսվա համար՝ 140,0 հազ. դրամ, մայիս ամսվա համար՝ 150,0 հազ. դրամ և հունիս ամսվա համար՝ 15,0 հազ. դրամ) և կատարվում է 2011թ. հունվար ամսվա աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով հունվար ամսվա համար կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ (100,0+65,0)՝ 165,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (165,0-(3,0+32,5))՝ 129,5 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(129,5-80,0)×20%)՝ 17,9 հազ. դրամ:

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է նպաստի գումարից պահվող եկամտահարկի գումարը՝ 11,45 հազ. դրամը (17,9-6,45): Միաժամանակ՝ 2011թ. փետրվար-մայիս ամիսներին (հունիս ամսվանը վերաբերող նպաստի գումարը՝ 15,0 հազ. դրամը չի գերազանցում անձնական նվազեցումը՝ 32,5 հազ. դրամը) վերաբերող նպաստի գումարներից ելնելով հարկվող եկամուտը և եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ (փետրվար)՝ 125,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (125,0-32,5)՝ 92,5 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(92,5-80,0)×20%)՝ 10,5 հազ. դրամ.
- համախառն եկամուտ (մարտ)՝ 155,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (155,0-32,5)՝ 122,5 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(122,5-80,0)×20%)՝ 16,5 հազ. դրամ,
- համախառն եկամուտ (ապրիլ)՝ 140,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (140,0-32,5)՝ 107,5 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(107,5-80,0)×20%)՝ 13,5 հազ. դրամ,
- համախառն եկամուտ (մայիս)՝ 150,0 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (150,0-32,5)՝ 117,5 հազ. դրամ,
- եկամտահարկ (8,0+(117,5-80,0)×20%)՝ 15,5 հազ. դրամ:

2011թ. հուլիսի 1-ին կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում է հունիս ամսվա համար աշխատավարձ 130,0 հազ. դրամ գումարով և կատարվում է 2011թ. հունիս ամսվա աճողական կարգով հարկվող եկամտի ու եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով հունիս ամսվա համար կազմակերպության կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով՝

- համախառն եկամուտ (15,0+130,0)՝ 145,0 հազ. դրամ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 3,9 հազ. դրամ,
- անձնական նվազեցում՝ 32,5 հազ. դրամ,
- հարկվող եկամուտ (145,0-(3,9+32,5))՝ 108,6 հազ. դրամ,

- եկամտահարկ  $(8,0+(108,6-80,0)\times 20\%)'$

13,72 հազ. դրամ:

Քանի որ նպաստից եկամտահարկ չի հաշվարկվել, ապա աշխատավարձի գումարից պահվող եկամտահարկի գումարը կազմում է 13,72 հազ. դրամը:

Ընդամենը վճարված նպաստից եկամտահարկը կազմում է 67,45 հազ. դրամ  $(11,45+10,5+16,5+13,5+15,5)$ :

Տվյալ դեպքում՝ կազմակերպության կողմից քաղաքացու 2011թ. հունվար ամսվա համար հաշվարկված աշխատավարձը, 2011թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված և վճարված նպաստը  $(100,0+650,0=750,0$  հազ. դրամ) և եկամտահարկը  $(6,45+67,45=73,9$  հազ. դրամ) արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող 2011թ. 1-ին եռամսյակի հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում՝ հունվար ամսին համապատասխանող սյունակներում (դրամներով), իսկ 2011թ. հունվար ամսվա համար հաշվարկված եկամտահարկը  $(73,9$  հազ. դրամ) վճարվում է մինչև 20.02.2011թ. (ներառյալ): Կազմակերպության կողմից քաղաքացու 2011թ. հունիս ամսվա հաշվարկված աշխատավարձը  $(130,0$  հազ. դրամ) և եկամտահարկը  $(13,72$  հազ. դրամ) արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող 2011թ. 2-րդ եռամսյակի հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում՝ հունիս ամսին համապատասխանող սյունակներում (դրամներով), իսկ 2011թ. հունիսին հաշվարկված եկամտահարկը  $(13,72$  հազ. դրամ) վճարվում է պետական բյուջե մինչև 20.07.2011թ. (ներառյալ):

Հղիության ու ծննդաբերության նպաստներից եկամտահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է 2010 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած ժամանակավոր անաշխատունակության դեպքերի համար:

**(25.1-րդ կետը լրաց. 23.02.09 N 187-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

## Բ Ա Ժ Ի Ն 7

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

26. Սույն հրահանգի 23-րդ կետի «ա» և 24-րդ կետի «ա» ենթակետերով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները եկամտահարկը վճարում են 11% դրույքաչափով (առանց հաշվի առնելու սույն հրահանգով նախատեսված նվազեցումները):

Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները ազատվում են սույն կետի առաջին պարբերությունում նշված դրույքաչափով եկամտահարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունից, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ձեռքբերումը հիմնավորվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնով կամ կրճատ հաշիվ-ապրանքագրով:

Օրինակ 20. Կազմակերպությունը 2011թ. փետրվարի 18-ին շուկայում առանց հիմնավորող փաստաթղթի ձեռք է բերել ապրանք, որի դիմաց վճարել է 20,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում կազմակերպությունը հանդիսանում է հարկային գործակալ և պարտավոր է հաշվարկել եկամտահարկ գնված ապրանքի արժեքից 11% դրույքաչափով  $(20,0\times 11\%=2,2$  հազ. դրամ), որը վճարվում է պետական բյուջե մինչև 20.03.2011թ. (ներառյալ):

**(26-րդ կետը փոփ. 30.01.02 N 02/141, խմբ. 23.02.09 N 187-Ն, 24.02.11 N 66-Ն)**

27. Հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտահարկը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցում ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, բացառությամբ եթե՝

ա) **(ենթակետն ուժը կորցրել է 24.02.11 N 66-Ն)**

բ) եկամուտները հանդիսանում են աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ՝

այս դեպքում սույն հրահանգի 19.3 կետի աղյուսակում նշված դրույքաչափերով պահված (գանձված) եկամտահարկը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվում այդ եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ (իսկ մինչև 2009թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջաններին վերաբերող աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ այդ եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ):

**(27-րդ կետը փոփ. 30.01.02 N 02/141, խմբ. 23.02.09 N 187-Ն, փոփ. 24.02.11 N 66-Ն)**

28. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց հաշվառման վայրի հարկային մարմինն ներկայացնել սույն հրահանգի հավելված 1-ում բերված ձևով հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների (աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտների, պահված (հաշվարկված) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմինն նշված հաշվարկը չեն ներկայացնում, եթե հաշվետու եռամսյակում իրենց կողմից ֆիզիկական անձանց եկամուտներ չեն վճարվել և չունեն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված (գրավոր) աշխատող:

Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված եռամսյակային հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմինն ներկայացնել եկամտահարկի ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար եկամտահարկի պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային մարմինների կողմից հարկային գործակալների մոտ իրականացվող՝ եկամտահարկի գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումների ընթացքում հարկային գործակալի կողմից ներկայացված ստուգվող ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկների ճշտում չի իրականացվում (եկամտահարկի ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում): Եկամտահարկի ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում նաև հարկային մարմինների կողմից կատարված՝ եկամտահարկի գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ ընդգրկված հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստուգված ժամանակաշրջանների համար եկամտահարկի գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

**(28-րդ կետը լրաց. 30.01.02 N 02/141, փոփ. 16.03.04 N 1-05/6-Ն, փոփ., լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն, խմբ. 23.02.09 N 187-Ն, 24.02.11 N 66-Ն)**

29. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են տարին մեկ՝ հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ, իրենց հաշվառման վայրի հարկային մարմինն

ներկայացնել սույն հրահանգի հավելված 2-ում բերված ձևով անվանական տեղեկություններ՝ անցած տարում իրենց կողմից ֆիզիկական անձանց վճարած եկամուտների (այդ թվում՝ վճարված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների) գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, այդ եկամուտներից պահված (գանձված) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Անվանական տեղեկություններ չեն ներկայացվում սույն հրահանգի 9-րդ կետում նշված՝ եկամուտ չհամարվող տարրերի, ինչպես նաև սույն հրահանգի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված նվազեցվող եկամուտների վերաբերյալ, իսկ նվազեցվող եկամուտներից տարբերվող եկամուտներ վճարելու դեպքում՝ եթե տվյալ ֆիզիկական անձին վճարված այդ եկամուտները (այսինքն՝ վճարված եկամուտների հաշվարկային մեծությունը) չեն գերազանցում սույն հրահանգի 17-րդ կետում նշված անձնական նվազեցման չափի 12-ապատիկը:

**(29-րդ կետը փոփ. 28.09.06 N 1-05/13-Ն, 05.03.07 N 2-Ն, խմբ. 29.02.08 N 02-Ն, 23.02.09 N 187-Ն)**

29.1. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարներն իրենց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վճարված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացնում, եթե եկամուտները վճարվել են Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում (հաշվառում) ստացած անհատ ձեռնարկատիրոջը (նոտարին):

**(29.1 կետը փոփ. 30.01.02 N 02/141, փոփ., լրաց. 28.09.06 N 1-05/13-Ն, խմբ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

29.2. Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատերի գործունեության դադարեցման) դեպքում տեղեկությունները հարկային մարմիններին ներկայացվում են կազմակերպության (անհատ ձեռնարկատերի) կողմից լուծարման (գործունեության դադարեցման) մասին պետական գրանցում իրականացնող մարմնին դիմում տալու օրվանից 5-օրյա ժամկետում:

29.3. Որևէ եկամուտների (այդ թվում՝ տոկոսների) հարկումը հարկային մարմիններին չի տալիս այդպիսի եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց վերաբերյալ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու լրացուցիչ իրավասություն:

**(29.3-րդ կետը խմբ. 23.02.09 N 187-Ն)**

30. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով տալ հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների, պահված հարկի գումարների մասին սույն հրահանգի հավելված 4-ում բերված ձևով տեղեկանքներ (մասնավորապես, հարկային մարմիններին ներկայացնելու համար):

**(30-րդ կետը փոփ. 28.09.06 N 1-05/13-Ն)**

## **Բ Ա Ժ Ի Ն 8**

### **ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

31. Ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը, այսինքն՝ ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները.

ա) եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է հարկատուին անվերապահ վճարման (հատուցման), կամ հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս.

բ) հարկատուի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում նշված իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից.

գ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից տոկոսների տեսքով կամ գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ պարտքի կամ վարձակալական պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջաններ, ապա հաշվետու ժամանակաշրջանում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

դ) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ: Բացառությամբ բռնագրավման, նվիրատվության կամ այլ ձևով պետությանը օտարման դեպքերի, հարկվող եկամուտը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն.

ե) հարկվող եկամուտը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ՝ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5%-ից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:

**(31-րդ կետը լրաց. 05.03.07 N 2-Ն, խմբ., լրաց. 23.02.09 N 187-Ն)**

32. Ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և

կոնսերվացման, գույքի պահպանման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Ընդ որում, անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված ծախսերը (այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ այլ ծախսերը) համարվում են ձեռնարկատիրական գործունեության գծով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, եթե այդ ծախսերը կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր և պահպանվել են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես.

ա) նյութական ծախսերը (այդ թվում՝ տեխնոլոգիական կորուստները).

բ) ամորտիզացիոն մասհանումները.

գ) վարձակալական վճարները.

դ) ապահովագրական և պարտադիր սոցիալական ապահովության վճարները.

ե) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները.

զ) տոկոսները.

է) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային այլ ծառայությունների համար վճարները.

ը) գովազդային և մարքեթինգի (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացում) ծախսերը.

թ) ներկայացուցչական և հովանավորչական ծախսերը.

ժ) դատական ծախսերը.

ժա) գործուղման ծախսերը.

ժբ) պատճառած վնասի հատուցումը.

ժգ) տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքների բյուջեներ գանձվող տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների).

ժդ) աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը.

ժե) ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը.

ժզ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

Հարկվող եկամուտը որոշելիս առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվում է՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարների չափով,

- 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար, որոնց իրացումից հասույթը 2008 թվականի ընթացքում չի գերազանցել 50,0 մլն դրամը, 2008 թվականի ընթացքում ձեռք բերված ապրանքանյութական արժեքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքանյութական արժեքների մնացորդների մասով կատարված ծախսերի չափով (սույն հրահանգի 33.4 կետին համապատասխան), եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ

կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (այդ թվում՝ միակողմանի գնման ակտ),

- Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի (այսինքն՝ երբ ձեռքբերման մասով առկա է միակողմանի գնման ակտ) և դրանց մասով սույն հրահանգի 26-րդ կետի համաձայն հաշվարկված և վճարված եկամտահարկի հանրագումարի այն չափով, որը ամսական կտրվածքով չի գերազանցում 3,0 մլն դրամը, իսկ միանվագ գործարքի գծով (այդ թվում՝ եկամտահարկի գումարը)՝ 300,0 հազ. դրամը:

**(32-րդ կետը լրաց. 29.02.08 N 02-Ն, խմբ., լրաց. 23.02.09 N 187-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

33. Ֆիզիկական անձանց կողմից իրականացրած ձեռնարկատիրական գործունեության գծով առևտրային կազմակերպությունների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նորմերը կիրառվում են՝

- ամորտիզացիոն մասհանումների և այլ ծախսերի հաշվարկման մասով,

- համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի, ծախսատեսակների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմաների մասով,

- համախառն եկամտից ծախսերի նվազեցման իրականացման մասով,

- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հաշվետու տարվա վնասների մասով:

33.1. Հիմնական միջոցների համար ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են՝ ելնելով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից:

Սույն հրահանգի իմաստով՝ հիմնական միջոցներն օգտագործվող ապրանքանյութական արժեքների ամբողջություն են, որոնք, որպես աշխատանքի միջոց, բնական տեսքով երկար ժամանակի ընթացքում գործում են ինչպես նյութական արտադրության, այնպես էլ ոչ արտադրական ոլորտում:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար ստորև սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից.

- |  |          |
|--|----------|
| ա) շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար (բացառությամբ՝ սույն կետի «բ» ենթակետում նշվածների)                            | 20 տարի. |
| բ) հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար՝ | 10 տարի. |
| գ) չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար՝   | 3 տարի.  |
| դ) հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար՝   | 1 տարի.  |
| ե) այլ հիմնական միջոցների (այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների) համար՝     | 5 տարի:  |

Մինչև 50,0 հազ. դրամ արժողությամբ, ինչպես նաև աղետի գոտում գտնվող՝ «ա» և «բ» ենթակետերում նշված հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի: Սույն մասում նշված՝ աղետի գոտու տարածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հարկման նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար վերոհիշյալ ժամկետներից ոչ պակաս:

Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և հիմնական միջոցի տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

33.2. Ոչ նյութական ակտիվների համար ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են՝ ելնելով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից:

Սույն հրահանգի իմաստով՝ ոչ նյութական ակտիվներն տնտեսական գործունեության մեջ երկար ժամանակահատվածում (մեկ տարուց ավելի) օգտագործվող և եկամուտ բերող իրավունքներն են:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է հարկատուն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 10 տարի, սակայն ոչ ավելի հարկատուի գործունեության ժամկետից:

Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես ոչ նյութական ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և այդ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

33.3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նորմաների (չափերի) սահմաններում համախառն եկամտից նվազեցվում են, մասնավորապես, հետևյալ ծախսերը (ծախսատեսակները).

ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կատարված վճարները.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքեթինգի ծախսերը.

գ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կադրերի պատրաստման ծախսերը.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կադրերի վերապատրաստման ծախսերը.

ե) հատուկ սննդի համար կատարված ծախսերը.

զ) արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը.

ը) գործուղման (այդ թվում՝ առանց հիմնավորող փաստաթղթերի օրապահիկի) ծախսերը.

ե) ներկայացուցչական և հովանավորչական ծախսերը:

Համախառն եկամտից նշված ծախսերը (ծախսատեսակները) նվազեցնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմաները հաշվարկվում են ելնելով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից:

Հաշվետու տարում օրենքով սահմանված կարգով բացառապես ԱԱՀ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերի համար սույն կետում նշված ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ (բացառությամբ՝ օրապահիկի, դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների): Օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերը ընթացիկ տարում ԱԱՀ վճարող համարվելու դեպքում սույն կետում նշված ծախսերը համախառն եկամտից նվազեցնում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նորմաների (չափերի) սահմաններում:

**(33.3 կետը լրաց. 30.01.02 N 02/141, 23.02.09 N 187-Ն)**

33.4. Հարկման նպատակով գույքը և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով: Ընդ որում.

ա) արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան.

բ) առևտրային գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացմանը համապատասխան.

գ) գույքի այլ տեսակների արժեքի (մասնավորապես, նյութական ռեսուրսների համար՝ ձեռքբերման, իսկ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների համար՝ մնացորդային արժեքի) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց իրացմանը համապատասխան:

դ) հարկատուի գործունեության հետ կապված ընդհանուր տնտեսական ծախսերի, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի, ոչ արտադրական այլ ծախսերի, տոկոսների, վարձավճարների և նմանատիպ այլ ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (այդ ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում):

ե) նախորդ տարիներում պակաս ցույց տրված ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց հայտնաբերման տարվա ընթացքում:

Սույն հրահանգի իմաստով ուղղակի տնտեսական ծախսեր են համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը, իսկ ընդհանուր տնտեսական ծախսեր են համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ կապված վարչական և ուղղակի տնտեսական ծախսերին չվերաբերվող այլ ծախսերը:

**(33.3 կետը լրաց. 23.02.09 N 187-Ն)**

33.5. Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է անհատ ձեռնարկատիրոջ մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեությունից վնասը սույն բաժնով սահմանված ծախսերի գերազանցումն է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների նկատմամբ:

Սույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ և կարող է նվազեցվել միայն ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից (այսինքն՝ չի նվազեցվում վնասի առաջացման և հաջորդող տարիներին ստացված այլ եկամուտներից):

Ընդ որում, մինչև 2001 թ. հունվարի 1-ը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված վնասը հաջորդ տարիներ չի փոխանցվում:

34. Ձեռնարկատիրական գործունեության գծով առանձնահատկություններն են.

ա) ծախս չեն հանդիսանում որևէ կազմակերպության կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները:

բ) հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները ճանաչվում են որպես այդպիսին միայն որպես անհատ ձեռնարկատեր դրանք ձեռքբերելու դեպքում:

գ) հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի դասակարգումը ըստ կապիտալ և ընթացիկ բնույթի չի կատարվում (հաշվետու տարում ծախս են ընդունվում միայն որպես անհատ ձեռնարկատեր ձեռքբերված կամ վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը՝ ամբողջությամբ):

դ) փոքրարժեք, արագամաշ առարկաների արժեքը մարվում է շահագործման հանձնման պահին 100%-ի չափով՝ մաշվածքի հաշվարկման միջոցով:

ե) փաստաթղթերով հիմնավորված բնական կամ փաստացի այլ կորուստները ծախս չեն համարվում, սակայն համախառն եկամտից նվազեցվում են դրանց տեղի ունենալու տարվա

ընթացքում՝ միայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով որոշված չափի շրջանակներում.

զ) պահուստների (պահուստաֆոնդերի) ստեղծում չի նախատեսվում.

է) գույքահարկը հաշվի է առնվում միայն որպես անհատ ձեռնարկատեր ձեռքբերված շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասով՝ ֆիզիկական անձանց համար սահմանված կարգով և չափերով.

ը) հողի հարկը հաշվի է առնվում միայն որպես անհատ ձեռնարկատեր ձեռքբերված հողակտորների մասով՝ ֆիզիկական անձանց համար սահմանված կարգով և չափերով.

թ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսերը հաշվի են առնվում, եթե այդ ծախսերը կատարվել են միայն որպես անհատ ձեռնարկատեր:

35. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է սույն հրահանգի 19.2 կետով սահմանված դրույքաչափերով:

Օրինակ 21. Անհատ ձեռնարկատերը 2007թ. 4-րդ եռամսյակում ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել, իսկ 2008 թ. ընթացքում իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացել եկամուտներ հետևյալ գործարքներից՝

- մարտին մատուցվել են ծառայություններ 300,0 հազ. դրամ գումարի չափով, որի դիմաց վճարումը կատարվել է սեպտեմբերին,

- հոկտեմբերին առաքվել են հուլիսին ձեռքբերված ապրանքների (ձեռքբերման արժեքը՝ 600,0 հազ. դրամ) 50%-ը, որի իրացումից հասույթը կազմել է 700,0 հազ. դրամ, իսկ վճարումը կատարվելու է 2009 թ. հունվարին:

Տարվա ընթացքում կատարվել են հետևյալ ծախսերը՝

- տարվա սկզբից, որպես ֆիզիկական անձ, վարձակալվել է տարածք, որի դիմաց վճարվել է ամսական 20,0 հազ. դրամ,

- հուլիսին, որպես անհատ ձեռնարկատեր, ձեռք են բերվել ապրանքներ 600,0 հազ. դրամ արժողությամբ, որի դիմաց վճարվել է 500,0 հազ. դրամ, իսկ մնացած 100,0 հազ. դրամը վճարվել է 2009 թ. հունվարին,

- ապրանք ձեռք բերելու համար հուլիսին 2 օրով, որպես անհատ ձեռնարկատեր, գործուղվել է Թբիլիսի և կատարել է գործուղման ծախսեր 100,0 հազ. դրամ գումարի չափով (տրանսպորտային ծախսերը և գիշերավարձը փաստաթղթերով հիմնավորված են, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով օրապահիկի ծախսերը փաստաթղթերով հիմնավորված չեն),

- վարձակալված տարածքի համար տարվա ընթացքում, որպես անհատ ձեռնարկատեր, կատարվել են էլեկտրաէներգիայի և հեռախոսավարձի ծախսեր՝ 100,0 հազ. դրամ գումարի չափով,

- Հայաստանի Հանրապետության տարածքում, որպես անհատ ձեռնարկատեր, կատարվել են գովազդային ծախսեր՝ 40,0 հազ. դրամ գումարի չափով,

- Հայաստանի Հանրապետությունում որպես անհատ ձեռնարկատեր ձեռք է բերել գրենական պիտույքներ՝ 10,0 հազ. դրամ ընդհանուր գումարով, որի վերաբերյալ բացակայում են հիմնավորված փաստաթղթեր:

Տվյալ դեպքում 2008 թ. ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ ձևով.

ա) համախառն եկամուտ (300,0+700,0)՝ 1000,0 հազ. դրամ.

բ) համախառն եկամտից նվազեցվող ծախսեր՝ 490,0 հազ. դրամ,

այդ թվում՝

- վաճառված ապրանքների ձեռքբերման արժեքը (600,0x50%)՝ 300,0 հազ. դրամ,
- գործուղման ծախսեր (նորմայի սահմաններում՝ 1000,0x5%)՝ 50,0 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի և հեռախոսավարձի ծախսեր՝ 100,0 հազ. դրամ,
- գովազդային ծախսեր՝ 40,0 հազ. դրամ.
- զ) պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 76,5 հազ. դրամ.
- դ) անձնական նվազեցումներ (12x25,0)՝ 300,0 հազ. դրամ.
- ե) ընդամենը նվազեցումներ (490,0+76,5+300,0)՝ 866,5 հազ. դրամ.
- զ) հարկվող եկամուտ (1000,0-866,5)՝ 133,5 հազ. դրամ.
- է) եկամտահարկ (133,5x10%)՝ 13,35 հազ. դրամ.
- ը) նվազագույն եկամտահարկ (300,0x1%)՝ 3,0 հազ. դրամ:

Քանի որ տարածքը չի վարձակալվել անհատ ձեռնարկատիրոջ անունից, ապա այդ ծախսերը համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Որպես հարկային գործակալ, անհատ ձեռնարկատերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցում 0,3 հազ. դրամ (10,0x3%):

Եկամտահարկի նվազագույն գումարը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2008 թ. հունիսի 15-ից ոչ ուշ: Քանի որ 2008 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը (13,35 հազ. դրամ) գերազանցում է եկամտահարկի նվազագույն գումարը (3,0 հազ. դրամ), անհատ ձեռնարկատերը մինչև 2009 թ. մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցում 10,35 հազ. դրամ (13,35-3,0):

**(Օրինակ 21-ը խմբ. 29.02.08 N 02-Ե)**

Օրինակ 22. Անհատ ձեռնարկատերը 2007 թ. 4-րդ եռամսյակում իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացել է 500,0 հազ. դրամի չափով եկամուտներ (ծառայությունների մատուցումից), իսկ 2008 թ. ընթացքում իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից (ծառայությունների մատուցումից) ստացել է 1000,0 հազ. դրամի չափով եկամուտներ (ըստ եռամսյակների՝ 100,0 հազ. դրամ, 200,0 հազ. դրամ, 300,0 հազ. դրամ և 400,0 հազ. դրամ), որոնց գծով կատարել է 900,0 հազ. դրամ անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսեր:

Տվյալ դեպքում 2008 թ. ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով կատարվում է հետևյալ հաշվարկը.

- ա) համախառն եկամուտ՝ 1000,0 հազ. դրամ.
- բ) համախառն եկամտից նվազեցվող ծախսեր՝ 900,0 հազ. դրամ.
- գ) պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 60,0 հազ. դրամ.
- դ) անձնական նվազեցումներ (12x25,0)՝ 300,0 հազ. դրամ.
- ե) ընդամենը նվազեցումներ (900,0+60,0+300,0)՝ 1260,0 հազ. դրամ.
- զ) նվազագույն եկամտահարկ ((500,0+100,0+200,0+300,0)x1%)՝ 11,0 հազ. դրամ:

Քանի որ համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունը բացասական է, ապա հարկվող եկամուտ չի առաջանում և եկամտահարկ չի հաշվարկվում, ընդ որում՝ այդ տարբերությունը չի համարվում որպես ձեռնարկատիրական գործունեությունից ստացված վնաս (քանի որ 1000,0-900,0-60,0>0) և հաջորդ տարի չի փոխանցվում (նույն օրինակում, եթե համախառն եկամտից նվազեցվող ծախսերը կազմեին 950,0 հազ. դրամ, ապա համախառն եկամտի և նվազեցվող ծախսերի ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների

բացասական փարբերությունը՝ 10,0 հազ. դրամը (1000,0-(950,0+60,0)) կհամարվի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված վնաս և կփոխանցվի հաջորդ փարբի):

Եկամտահարկի նվազագույն գումարները ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հերկյալ ժամկետներում և չափերով. 15.03.2008 թ.՝ 5,0 հազ. դրամ, 15.06.2008 թ.՝ 1,0 հազ. դրամ, 15.09.2008 թ.՝ 2,0 հազ. դրամ, 15.12.2008 թ.՝ 3,0 հազ. դրամ, 15.03.2009 թ.՝ 4,0 հազ. դրամ: Քանի որ 2008 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը (0 դրամ) պակաս է եկամտահարկի նվազագույն գումարից (11,0 հազ. դրամ), ապա այդ գումարը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ եկամտահարկի կանխավճարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն հարկատուի գալիք ժամանակաշրջանի համար հաշվարկված եկամտահարկի գումարներից:

**(Օրինակ 22-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

**(35-րդ կետը փոփ., լրաց. 18.03.03 N 03/08-Ն, խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն)**

36. Հաշվետու տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ ստացող անհատ ձեռնարկատերը պարտավոր է կատարել եկամտահարկի եռամսյակային վճարումներ՝ եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարի և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի առավելագույնի (այսուհետ՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումար) չափով: Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկումը կատարվում է 2006 թվականի 1-ին եռամսյակից սկսած և նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը (նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հանրագումար) 2006 թվականի համար որոշվում է 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին՝ 2005 թվականի 4-րդ, 2006 թվականի 1-ին, 2-րդ ու 3-րդ եռամսյակների համար հաշվարկված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հանրագումարով:

Եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը տվյալ եռամսյակի նվազագույն եկամտահարկի գումարից պակաս լինելու դեպքում (այդ թվում՝ երբ տվյալ եռամսյակի համար կանխավճարը չի հաշվարկվում)՝ անհատ ձեռնարկատերը այդ եռամսյակում կատարում է նվազագույն եկամտահարկի եռամսյակային վճարում: Այդ դեպքում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի մեջ ներառվում է եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը:

Եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը տվյալ եռամսյակի նվազագույն եկամտահարկի գումարին հավասար կամ այդ գումարից ավելի լինելու դեպքում (այդ թվում՝ երբ բացակայում է տվյալ եռամսյակի նվազագույն եկամտահարկի գումարի հաշվարկման բազան)՝ անհատ ձեռնարկատերը այդ եռամսյակում կատարում է եկամտահարկի կանխավճարի եռամսյակային վճարում: Այդ դեպքում եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարի մեջ ներառվում է նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը:

Ընթացիկ տարում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները վճարում են նաև այն անհատ ձեռնարկատերերը, որոնք նախորդ տարում ունեցել են հարկային վնաս կամ նախորդ տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը չի գերազանցել 500,0 հազ. դրամը:

Եկամտահարկի նվազագույն գումարի սահմանումը առնչություն չունի անհատ ձեռնարկատիրոջ կողմից որպես հարկային գործակալ վճարվող եկամտահարկի հետ:

Եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ (2006 թվականին

նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի առաջին վճարումը կատարվում է 2006 թվականի մարտի 15-ից ոչ ուշ): սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների մուծումներ չկատարելու դեպքում հարկային մարմիններն այդ գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում՝ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են միայն անհատ ձեռնարկատիրոջ մոտ իրականացված ստուգման ընթացքում:

Հարկ վճարողի հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը (մինչև սույն հրահանգի 48-րդ կետին համապատասխան տվյալ տարվա համար կատարվող նվազեցումների) չի կարող պակաս լինել այդ տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար հաշվարկված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հանրագումարից (նվազագույն եկամտահարկի տարեկան գումարից):

**(36-րդ կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 23.02.09 N 187-Ն)**

36.1. Բացառությամբ սույն հրահանգի 36.4 կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված դեպքերի ընթացիկ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ տարվա ընթացքում որպես անհատ ձեռնարկատեր իրականացվող գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարի, նախորդ տարվա արտոնագրային վճարի և (կամ) եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարի մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարների հանրագումարի 1/6-ի չափով: Նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի մեծությունը չի ազդում հաջորդ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարի մեծության վրա:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների (այդ թվում՝ արտարժույթի)), արտադրանքի (բացառությամբ՝ սույն հրահանգի 14-րդ կետով սահմանված) իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամուտներից (իրացումից ստացվող հասույթից) ելնելով, ներառելով վարկերի (փոխառությունների) դիմաց ստացվող տոկոսները և վարձավճարները (այսուհետ՝ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազա): Արտարժույթի առք ու վաճառքի գործունեության մասով անհատ ձեռնարկատերերը եկամտահարկի նվազագույն գումարներ չեն հաշվարկում և չեն վճարում:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հաշվարկման բազայում չեն ներառվում, մասնավորապես՝ ռոյալթիները, շահաբաժինները, ապահովագրական հատուցումները, անհատույց ստացվող գույքը, պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները, գույքային սանկցիաները (տույժեր, տուգանքներ), գույքագրման և ստուգումների ժամանակ բացահայտված գույքի ավելցուկը:

Զբոսաշրջության բնագավառում գործունեություն իրականացնող զբոսաշրջային օպերատորների համար նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հաշվարկման բազայում չեն ներառվում նաև զբոսաշրջային փաթեթով նախատեսված՝ այլ անձանց կողմից մատուցվող ծառայությունների (զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայությունների) արժեքը, եթե այդ ծառայությունների

մատուցումը հիմնավորվում է սկզբնական (հաշվարկային) փաստաթղթերով, որոնք բավարարում են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պահանջներին:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հաշվարկման բազայում չեն ներառվում նաև այդ եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերը (ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ): Դա նշանակում է, որ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայում չեն ներառվում.

ա) Հայաստանի Հանրապետություն ներմուծված ծխախոտի արտադրանքը (սիգարներ, սիգարելաներ, սիգարետներ) անմիջապես ներմուծողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման դեպքում՝ իրացված ծխախոտի արտադրանքի համար մաքսային սահմանին վճարված հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ակցիզային հարկին և ավելացված արժեքի հարկին բաժին ընկնող հաշվարկային մեծությունները.

բ) Հայաստանի Հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքները (բացառությամբ՝ ծխախոտի արտադրանքի) անմիջապես ներմուծողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման դեպքում՝ իրացված ենթակցիզային ապրանքների համար մաքսային սահմանին վճարված ակցիզային հարկի գումարները.

գ) Հայաստանի Հանրապետությունում արտադրված ծխախոտի արտադրանքը (սիգարներ, սիգարելաներ, սիգարետներ) անմիջապես արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման դեպքում՝ իրացված ծխախոտի արտադրանքի համար վճարված հաստատագրված վճարի գումարները:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հաշվարկման բազան նվազեցվում է այդ եռամսյակների համար հաշվարկված՝ եկամտահարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող և որպես անհատ ձեռնարկատեր ձեռք բերված, հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով (բայց ոչ ավելի, քան այդ եռամսյակների նվազագույն եկամտահարկի գումարի հաշվարկման բազայի 50%-ը), բացառությամբ այն անհատ ձեռնարկատերերի, որոնք նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների հաշվարկման բազային վերաբերող եռամսյակում չեն հանդիսացել ԱԱՀ վճարող: Սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի հաստատած սակագներ կիրառող անհատ ձեռնարկատերերի, առողջապահության և կրթության ոլորտներում ծառայություններ մատուցող, թերթերի և ամսագրերի տպագրության և իրացման, ինչպես նաև թանկարժեք քարերի մշակման ոլորտում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը հաշվարկվում է նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայի և դրանից կատարված նվազեցումների տարբերության գումարի 1%-ի չափով:

**(Պարբերությունն ուժը կորցրել է 24.02.11 N 66-Ն)**

**(36.1 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն, փոփ. 24.02.11 N 66-Ն)**

36.2. Անհատ ձեռնարկատերը եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները չի վճարում հետևյալ դեպքերում.

ա) ձեռնարկատիրական գործունեությունը նոր սկսող հարկատուն՝

- պետական գրանցման (հաշվառման) տարվա ընթացքում,

- պետական գրանցմանը (հաշվառմանը) հաջորդող տարվա առաջին և երկրորդ եռամսյակների համար.

բ) այն հարկատուն, որը նախորդ տարում ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտ չի ունեցել՝ այդ (նախորդ) տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելուց հետո.

գ) այն հարկատուն, որի նախորդ տարվա ընթացքում իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարը չի գերազանցել 500,0 հազ. դրամը՝ այդ (նախորդ) տարվա տարեկան եկամուտների հաշվարկը ներկայացնելուց հետո.

դ) այն հարկատուն, որը ընթացիկ տարում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ չի նախատեսում (ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնելու)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.01.2011թ. «Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունների ձևերը հաստատելու մասին» N 20-Ն հրամանով հաստատված «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունը ներկայացնելուց հետո.

ե) այն հարկատուն, որը ընթացիկ տարվա որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկվող գործունեություն (այդ թվում՝ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում որևէ ժամանակաշրջանում սահմանային չափերը գերազանցելու դեպքում)՝ տվյալ եռամսյակում.

զ) այն հարկատուն, որը ընթացիկ տարվա որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող արտոնագրային վճարով հարկվող գործունեություն՝ տվյալ եռամսյակում.

է) այն հարկատուն, որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող՝ այդ (նախորդ) տարվա տարեկան եկամուտների հաշվարկը ներկայացնելուց հետո, կամ հանդիսացել է բացառապես արտոնագրային վճար վճարող կամ բացառապես եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ ընթացիկ տարում ԱԱՀ վճարող կամ չվճարող համարվելու հանգամանքից):

**(36.2 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.12.08 N 02-Ն, փոփ., լրաց. 23.02.09 N 187-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

36.3. Անհատ ձեռնարկատերը նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները չի հաշվարկում (և չի վճարում) հետևյալ դեպքերում.

ա) այն հարկատուն, որն ընթացիկ տարվա որևէ եռամսյակում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազա չի ունեցել՝ տվյալ եռամսյակում.

բ) այն հարկատուն, որն ընթացիկ տարվա որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկվող գործունեություն (այդ թվում՝ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում որևէ ժամանակաշրջանում սահմանային չափերը գերազանցելու դեպքում)՝ տվյալ եռամսյակում.

գ) այն հարկատուն, որն ընթացիկ տարվա որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող արտոնագրային վճարով հարկվող գործունեություն՝ տվյալ եռամսյակում:

**(36.3 կեպը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 23.02.09 N 187-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

36.4. Եկամտահարկի եռամսյակային վճարման գումարը հաշվարկելիս հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա) այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հանդիսացել է եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող, իսկ ընթացիկ տարում իրականացնում է եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով չհարկվող գործունեություն և եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է տարվա սկզբից), ընթացիկ տարում եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկում է՝ հաշվի առնելով նախորդ տարվա համար հաշվարկված հաստատագրված վճարի մեջ եկամտահարկին բաժին ընկնող (իսկ օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու դեպքում՝ ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված եկամտահարկի) գումարները:

Օրինակ 23. Անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 400,0 հազ. դրամ, իսկ եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով հաստատագրված վճարի եկամտահարկին բաժին ընկնող մասը (40%) կազմում է 800,0 հազ. դրամ: 2006 թ. համար անհատ ձեռնարկատերը եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով: 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիրը հարկային մարմին ներկայացվել է 2006 թ. հունվարի 20-ին:

Տվյալ դեպքում 2006 թ. եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը կազմում է 200,0 հազ. դրամ ( $(400,0+800,0):6$ ), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2006 թ. մարտի 15-ից ոչ ուշ (ենթադրվում է, որ փվյալ եռամսյակի եկամտահարկի նվազագույն գումարի մեծությունը չի գերազանցում 200,0 հազ. դրամը):

Այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ եռամսյակում հանդիսացել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող (անկախ օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցելու հանգամանքից), իսկ ընթացիկ եռամսյակում իրականացնում է եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով չհարկվող գործունեություն և եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է եռամսյակի սկզբից), ընթացիկ եռամսյակից սկսած եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները, իսկ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները՝ ընթացիկ եռամսյակին հաջորդող եռամսյակից, վճարում է ընդհանուր սահմանված կարգով (ընթացիկ եռամսյակում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումար չի վճարում):

Օրինակ 24. Անհատ ձեռնարկատերը 2005 թ. գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 1200,0 հազ. դրամ: 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիրը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացվել է 2006 թ. հունվարի 20-ին: 2006 թ. 1-ին կիսամյակում անհատ ձեռնարկատերը հանդիսացել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող, իսկ 2-րդ կիսամյակից սկսած իրականացնում է եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով չհարկվող գործունեություն և եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով:

Տվյալ դեպքում 2006 թ. եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը կազմում է 200,0 հազ. դրամ ( $(1200,0):6$ ), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2006 թ. սեպտեմբերի 15-

ից ոչ ուշ, իսկ 2006 թ. 4-րդ եռամսյակից սկսած անհատ ձեռնարկատերերը հաշվարկում է նաև նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարներ.

բ) այն անհատ ձեռնարկատերերը, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հանդիսացել է արտոնագրային վճար վճարող, իսկ ընթացիկ տարում եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է տարվա սկզբից), ընթացիկ տարում եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարները հաշվարկում է՝ հաշվի առնելով նախորդ տարվա համար հաշվարկված արտոնագրային վճարի մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարները:

Օրինակ 25. Անհատ ձեռնարկատիրոջ 2011թ. գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 468,0 հազ. դրամ, իսկ արտոնագրային վճարի եկամտահարկին բաժին ընկնող մասը (40%) կազմում է 72,0 հազ. դրամ: 2011թ. համար անհատ ձեռնարկատերը եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով: 2011թ. տարեկան եկամուտների մասին հաշվարկը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացվել է 2012թ. հունվարի 20-ին:

Տվյալ դեպքում՝ 2012թ. եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը կազմում է 90,0 հազ. դրամ ((468,0+72,0):6), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2012թ. մարտի 15-ից ոչ ուշ (ենթադրվում է, որ տվյալ եռամսյակի եկամտահարկի նվազագույն գումարի մեծությունը չի գերազանցում 90,0 հազ. դրամը):

Այն անհատ ձեռնարկատերերը, որը նախորդ եռամսյակում հանդիսացել է արտոնագրային վճարող, իսկ ընթացիկ եռամսյակում եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն հարկման կարգերի փոփոխությունը կատարվում է եռամսյակի սկզբից), ընթացիկ եռամսյակից սկսած եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները, իսկ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները՝ ընթացիկ եռամսյակին հաջորդող եռամսյակից, վճարում է ընդհանուր սահմանված կարգով (ընթացիկ եռամսյակում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումար չի վճարում):

Օրինակ 26. Անհատ ձեռնարկատիրոջ 2010թ. գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 540,0 հազ. դրամ: 2010թ. տարեկան եկամուտների մասին հաշվարկը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացվել է 2011թ. հունվարի 20-ին: 2011թ. 1-ին կիսամյակում անհատ ձեռնարկատերը հանդիսացել է միայն արտոնագրային վճար վճարող, իսկ 2-րդ կիսամյակից սկսած եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով:

Տվյալ դեպքում՝ 2011թ. եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը կազմում է 90,0 հազ. դրամ (540,0:6), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2011թ. սեպտեմբերի 15-ից ոչ ուշ, իսկ 2011թ. 4-րդ եռամսյակից սկսած անհատ ձեռնարկատերը հաշվարկում է նաև նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարներ.

գ) այն անհատ ձեռնարկատերերը, որն ընթացիկ եռամսյակի մի ժամանակահատվածում հանդիսացել է միայն հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող, իսկ մյուս ժամանակահատվածից սկսած՝ եկամտահարկը հաշվարկում (և վճարում) է ընդհանուր սահմանված կարգով (այսինքն հարկման կարգերի փոփոխությունը կատարվել է եռամսյակի ընթացքում)

- եթե հարկման կարգերի փոփոխման պահը կատարվել է մինչև ընթացիկ եռամսյակի վերջին ամսվա 15-ը (ներառյալ), ապա այդ եռամսյակից սկսած եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները, իսկ նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները՝ այդ եռամսյակին հաջորդող եռամսյակից, վճարում է ընդհանուր սահմանված կարգով (ընթացիկ

եռամսյակում նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումար չի վճարում, իսկ այդ եռամսյակի հաշվով հաջորդ եռամսյակում հաշվարկված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայում ներառում է միայն հարկման կարգերի փոփոխության պահից մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 1-ը ընկած ժամանակահատվածը),

- եթե հարկման կարգերի փոփոխման պահը կատարվել է ընթացիկ եռամսյակի վերջին ամսվա 15-ից հետո, ապա հաջորդ եռամսյակից սկսած եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները վճարում է ընդհանուր սահմանված կարգով (ընթացիկ եռամսյակի հաշվով հաջորդ եռամսյակում հաշվարկված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայում ներառում է միայն հարկման կարգերի փոփոխության պահից մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 1-ը ընկած ժամանակահատվածը)։

դ) մինչև նախորդ տարվա եկամտահարկի գումարի հաշվարկումը անհատ ձեռնարկատերը եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները հաշվարկում է նախորդ տարվա վերջին եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարից ոչ պակաս չափով։

Նախորդ տարվա եկամտահարկի գումարը հայտնի դառնալուց հետո տարեկան եկամուտների հաշվարկի ներկայացմանը հաջորդող՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարի առաջին մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների ճշտում (այդ թվում՝ նաև նախորդ տարում եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարներ չունեցող, սակայն այդ տարվա արդյունքներով ընթացիկ տարում եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարներ ունեցող անհատ ձեռնարկատերերի կողմից)՝ եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարները ճշտվում են տարվա սկզբից աճող հանրագումարով և սույն հրահանգի 36.1 կետում նշված չափերով։

Օրինակ 27. Անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. հաշվարկված եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարը կազմել է 100,0 հազ. դրամ։ Անհատ ձեռնարկատերը 2006 թ. փետրվարի 9-ին վճարում է 2006 թ. 1-ին եռամսյակի համար կանխավճար 100,0 հազ. դրամ գումարի չափով, իսկ 2006 թ. փետրվարի 21-ին հարկային մարմին ներկայացնում է 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնակապիթական գոծունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 720,0 հազ. դրամ։ Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի և 2006 թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվով հաշվարկված 2006 թ. նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը կազմում է 130,0 հազ. դրամ։

Տվյալ դեպքում 2006 թ. եկամտահարկի եռամսյակային կանխավճարի չափը կկազմի 120,0 հազ. դրամ (720,0:6)։ Անհատ ձեռնարկատերը 2005 թ. եկամտահարկի փարեկան գումարի և 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- |   |                                  |
|---|----------------------------------|
| - 15.03.2006 թ.՝                                | 30,0 հազ. դրամ (130,0-100,0),    |
| - 01.05.2006 թ.՝                                | 320,0 հազ. դրամ (720,0-4x100,0), |
| - 15.06.2006 թ., 15.09.2006 թ. և 15.12.2006 թ.՝ | 130,0 հազ. դրամ (120,0<130,0),   |

2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 520,0 հազ. դրամ (4x130,0), նվազագույն եկամտահարկի փարեկան գումարը՝ 520,0 հազ. դրամ (4x130,0), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 480,0 հազ. դրամ (4x120,0)։

Օրինակ 28. Անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. հաշվարկված եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարը կազմել է 100,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. փետրվարի 9-ին վճարում է 2006 թ. 1-ին եռամսյակի համար կանխավճար 100,0 հազ. դրամ գումարի չափով, իսկ 2006 թ. փետրվարի 21-ին հարկային մարմին ներկայացնում է 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 480,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի և 2006 թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվով հաշվարկված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը կազմում է 50,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում 2006 թ. եկամտահարկի եռամսյակային կանխավճարի չափը կկազմի 80,0 հազ. դրամ (480,0:6): Անհատ ձեռնարկատերը 2005 թ. եկամտահարկի փարեկան գումարի և 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 15.03.2006 թ.՝ - 20,0 հազ. դրամ (80,0-100,0),
- 01.05.2006 թ.՝ 60,0 հազ. դրամ (480,0-4x100,0-20,0),
- 15.06.2006 թ., 15.09.2006 թ. և 15.12.2006 թ.՝ 80,0 հազ. դրամ (80,0>50,0):

2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 320,0 հազ. դրամ (4x80,0), նվազագույն եկամտահարկի փարեկան գումարը՝ 200,0 հազ. դրամ (4x50,0), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 320,0 հազ. դրամ (4x80,0).

ե) նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը պակաս նախատեսելու դեպքում անհատ ձեռնարկատերը եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարները որոշում (հաշվարկում) է ինքնուրույն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.01.2011թ. «Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունների ձևերը հաստատելու մասին» N 20-Ն հրամանով հաստատված «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունը ներկայացնելուց հետո: Տվյալ տարվա համար մեկից ավելի հայտարարություն ներկայացնելու դեպքում յուրաքանչյուր հայտարարությունը կարող է ազդեցություն ունենալ միայն տվյալ հայտարարության ներկայացման օրվանից սկսած սույն հրահանգի 36-րդ կետում նշված ժամկետներում վճարվող կանխավճարների գումարների մեծության վրա:

Օրինակ 29. Անհատ ձեռնարկատիրոջ 2010թ. հաշվարկված և վճարված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարը կազմել է 85,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2011թ. հունվարի 20-ին հարկային մարմին ներկայացրել է 2010թ. փարեկան եկամուտների մասին հաշվարկ, ըստ որի 2010թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 540,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2011թ. հուլիսի 12-ին հարկային մարմին ներկայացնում է հայտարարություն, համաձայն որի 2011թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը նախատեսվում է 2010թ. հարկվող եկամտից պակաս և ընթացիկ տարվա մնացած ժամանակահատվածի համար եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկելու է հետևյալ չափերով. 3-րդ եռամսյակի համար՝ 5,0 հազ. դրամ և 4-րդ եռամսյակի համար՝ 75,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2010թ. 4-րդ եռամսյակի և 2011թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվով հաշվարկված 2011թ. նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը կազմում է 80,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում՝ 2011թ. եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը կազմում է 90,0 հազ. դրամ (540,0:6): Անհատ ձեռնարկատերը 2010թ. եկամտահարկի տարեկան գումարի և 2011թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 15.03.2011թ.՝ 90,0 հազ. դրամ (90,0>80,0),
- 01.05.2011թ.՝ 200,0 հազ. դրամ (540,0-4x85,0),
- 15.06.2011թ.՝ 90,0 հազ. դրամ (90,0>80,0),
- 15.09.2011թ. և 15.12.2011թ.՝ 80,0 հազ. դրամ (5,0<80,0 և 75,0<80,0):

2011թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 340,0 հազ. դրամ (2x90,0+2x80,0), նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը՝ 320,0 հազ. դրամ (4x80,0), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 260,0 հազ. դրամ (2x90,0+5,0+75,0):

զ) սույն հրահանգով սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմնին ներկայացված նախորդ տարվա տարեկան եկամուտների հաշվարկում արտացոլված տվյալներում ճշգրտումներ մտցնելու դեպքում (այդ թվում՝ նաև ընթացիկ տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսերի գծով, եթե այդ ծախսերը կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր) կատարվում է նաև ընթացիկ տարվա համար հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկված և չվճարված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների նկատմամբ տույժերի վերահաշվարկ:

Օրինակ 30. Անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարը կազմել է 10,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. հունվարի 23-ին հարկային մարմին ներկայացրել է 2005 թ. տարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը և եկամտահարկի գումարը կազմել են, համապատասխանաբար, 660,0 հազ. դրամ և 66,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ապրիլի 20-ին հարկային մարմին ներկայացնում է 2005 թ. տարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը և հաշվարկված եկամտահարկի գումարը կազմում են, համապատասխանաբար, 960,0 հազ. դրամ և 96,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի և 2006 թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվով հաշվարկված 2006 թ. նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները (ըստ եռամսյակների) կազմում են 5,0 հազ. դրամ, 10,0 հազ. դրամ, 15,0 հազ. դրամ և 20,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում տարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելուց հետո անհատ ձեռնարկատերը կատարում է եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հաշվարկ, ըստ որի եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները կազմում են 11,0 հազ. դրամ (66,0:6), և անհատ ձեռնարկատերը մինչև տարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագրի ներկայացումը եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 15.03.2006 թ. 11,0 հազ. դրամ (11,0>5,0):

Տարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագիրը ներկայացնելուց հետո կատարվում է հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ, ըստ որի եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները կազմում են 16,0 հազ. դրամ

(96,0:6): 2006 թ. հունվարի 23-ին հարկային մարմին ճիշտ լրացված փարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելու դեպքում անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կկատարեր հետևյալ ժամկետներում և չափերով.

15.03.2006 թ.՝	16,0 հազ. դրամ (16,0>5,0),
15.06.2006 թ.՝	16,0 հազ. դրամ (16,0>10,0),
15.09.2006 թ.՝	16,0 հազ. դրամ (16,0>10,0),
15.12.2006 թ.՝	20,0 հազ. դրամ (16,0<20,0):

2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 68,0 հազ. դրամ ( $3 \times 16,0 + 20,0$ ), նվազագույն եկամտահարկի փարեկան գումարը՝ 50,0 հազ. դրամ ( $5,0 + 10,0 + 15,0 + 20,0$ ), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 64,0 հազ. դրամ ( $4 \times 16,0$ ):

Օրինակ 31. Անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարը կազմել է 10,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. հունվարի 23-ին հարկային մարմին ներկայացրել է 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը և եկամտահարկի գումարը կազմել են, համապատասխանաբար, 960,0 հազ. դրամ և 96,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ապրիլի 20-ին հարկային մարմին ներկայացնում է 2005 թ. փարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը և հաշվարկված եկամտահարկի գումարը կազմում են, համապատասխանաբար, 660,0 հազ. դրամ և 66,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի և 2006 թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվով հաշվարկված 2006 թ. նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները (ըստ եռամսյակների) կազմում են 5,0 հազ. դրամ, 10,0 հազ. դրամ, 15,0 հազ. դրամ և 20,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում փարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելուց հետո անհատ ձեռնարկատերը կատարում է եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հաշվարկ, ըստ որի եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները կազմում են 16,0 հազ. դրամ (96,0:6), և անհատ ձեռնարկատերը մինչև փարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագրի ներկայացումը եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 15.03.2006թ.՝	16,0 հազ. դրամ (16,0>5,0):
-----------------	----------------------------

Տարեկան եկամուտների նոր (ճշտված) հայտարարագիրը ներկայացնելուց հետո կատարվում է հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ, ըստ որի եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները կազմում են 11,0 հազ. դրամ (66,0:6): 2006 թ. հունվարի 23-ին հարկային մարմին ճիշտ լրացված փարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելու դեպքում անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների վճարումները կկատարեր հետևյալ ժամկետներում և չափերով.

15.03.2006 թ.՝	11,0 հազ. դրամ (11,0>5,0),
15.06.2006 թ.՝	11,0 հազ. դրամ (11,0>10,0),
15.09.2006 թ.՝	15,0 հազ. դրամ (11,0<15,0),
15.12.2006 թ.՝	20,0 հազ. դրամ (11,0<20,0):

2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 57,0 հազ. դրամ (2x11,0+15,0+20,0), նվազագույն եկամտահարկի փարեկան գումարը՝ 50,0 հազ. դրամ (5,0+10,0+15,0+20,0), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 44,0 հազ. դրամ (4x11,0)։

է) սույն հրահանգի 53-րդ կետում նշված ժամկետներից հետո անհատ ձեռնարկատիրոջ կողմից ինքնուրույն հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսերը (եթե այդ ծախսերը կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից նվազեցվում են հայտնաբերման տարում, եթե այդ ծախսերը չեն վերաբերում հարկային մարմինների կողմից կատարված՝ եկամտահարկի գծով բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ ընդգրկված տարիներին և այդ (հայտնաբերման), ինչպես նաև նախորդ տարիների եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ չի կատարվում։

Այդ դեպքերում հայտնաբերված գումարները չեն ազդելու ընթացիկ տարվա նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների մեծությունների վրա։

**(36.4 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն, 23.02.09 N 187-Ն, խմբ., լրաց. 24.02.11 N 66-Ն)**

36.5. Ընթացիկ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկելիս հաշվի չեն առնվում նախորդ տարում ստուգմամբ հայտնաբերված եկամտահարկի գումարները՝ անկախ այն հանգամանքից, թե որ տարիներին են վերաբերում հայտնաբերված լրացուցիչ գումարները (այդ թվում՝ այն դեպքերում, երբ այդ տարիների համար մինչև ստուգման ակտում արձանագրումը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացված չեն եղել տարեկան եկամուտների հաշվարկ)։

Օրինակ 32. Անհատ ձեռնարկատիրոջ մոտ 2005 թ. հոկտեմբերին հարկային մարմինների կողմից կատարված ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերվել են եկամտահարկի գումարներ, որոնք վերաբերում են անհատ ձեռնարկատիրոջ 2003 թ. և 2004 թ. գործունեությանը՝ ընդամենը 90,0 հազ. դրամ գումարի չափով։ Այդ գումարները չեն ներառվում անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագրում, որը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացվել է 2006 թ. հունվարի 20-ին։ Ըստ հայտարարագրի, անհատ ձեռնարկատիրոջ 2005 թ. գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 120,0 հազ. դրամ։ Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի արդյունքներով նվազագույն եկամտահարկի հաշվարկման բազան բացակայում է։

Տվյալ դեպքում 2006 թ. եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները կազմում են 20,0 հազ. դրամ (120,0:6), որի առաջին վճարումը պետք է կատարվի 2006 թ. մարտի 15-ից ոչ ուշ։

Ընթացիկ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկելիս հաշվի են առնվում նախորդ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ այդ տարվա հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների կամ արտոնագրային վճարների լրացուցիչ գումարները՝ ելնելով լրացուցիչ հայտնաբերված հաստատագրված վճարների կամ արտոնագրային վճարների մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարներից։

**(36.5 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն, 24.02.11 N 66-Ն)**

36.6. Նախորդ տարիներում ձեռնարկատիրական գործունեության գծով ավելի կամ պակաս հաշվարկված եկամտահարկը ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերման դեպքում կատարվում

է նաև հաշվարկված եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ՝ այն տարվանը հաջորդող տարվանից սկսած, որի համար հայտնաբերվել է ձեռնարկատիրական գործունեության գծով ավելի կամ պակաս հաշվարկված եկամտահարկի գումար, ինչպես նաև վերահաշվարկված կանխավճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկ:

*Օրինակ 33. Անհատ ձեռնարկատերը 2005 թ. ընթացքում եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վճարող չի եղել: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. փետրվարի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 60,0 հազ. դրամ: 2006 թ. մարտ ամսին հարկային մարմինների կողմից անհատ ձեռնարկատիրոջ մոտ կատարված ստուգմամբ լրացուցիչ գանձման է առաջադրվել եկամտահարկ (40,0 հազ. դրամ), որը վերաբերում է անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2005 թ. իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը (այլ եկամուտների գծով եկամտահարկի լրացուցիչ գումարներ չեն հայտնաբերվել): Ստուգման ակտը կազմվել է 2006 թ. մարտի 22-ին: Ընդունենք, որ 2005 թ. 4-րդ եռամսյակի արդյունքներով նվազագույն եկամտահարկի հաշվարկման բազան բացակայում է:*

*Տվյալ դեպքում 2005 թ. փարեկան եկամուտների հայտարարագրում արտացոլված և ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերված 2005 թ. ձեռնարկատիրական գործունեության գծով եկամտահարկի գումարները (համապատասխանաբար՝ 60,0 և 40,0 հազ. դրամ) անհատ ձեռնարկատերը պարտավոր է վճարել մինչև 2006 թ. մայիսի 1-ը: Այդ ժամկետից սկսած հաշվարկվում են տույժեր «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով՝ եկամտահարկի չվճարված գումարների նկատմամբ: Ընդ որում՝ 2006 թ. եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները ենթակա են վերահաշվարկման՝ այն կազմելու է եռամսյակային 16,7 հազ. դրամ  $((60,0+40,0):6)$  և, մինչև 2006 թ. մարտի 15-ը (ներառյալ) 1-ին եռամսյակի համար եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը հաշվարկված և վճարված լինելու դեպքում, այդ օրվանից սկսած հաշվարկվում են տույժեր 6,7 հազ. դրամ  $(16,7-60,0:6)$  գումարի նկատմամբ (լրացուցիչ հայտնաբերված եկամտահարկի գծով հաշվարկված եռամսյակային կանխավճարի գումար):*

Եթե ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերվել են նախորդ տարիների հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների կամ արտոնագրային վճարների լրացուցիչ գումարներ, ապա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հաշվարկը (կամ վերահաշվարկը) կատարվում է այդ տարիների տարեկան եկամուտների հաշվարկի օրենքով սահմանված ներկայացման ժամկետից սկսած՝ ելնելով լրացուցիչ հայտնաբերված հաստատագրված վճարների կամ արտոնագրային վճարների մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարներից:

Ընթացիկ տարում ստուգմամբ՝ նախորդ տարիներում ավելի (կամ պակաս) վճարված (կամ չվճարված) նվազագույն եկամտահարկի եռամսյակային վճարման գումարներ հայտնաբերելու դեպքում կատարվում է այդ եռամսյակների համար նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների վերահաշվարկ:

**(36.6 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն, 24.02.11 N 66-Ն)**

36.7. Ընթացիկ տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ տարիներում պակաս վճարված (կամ չվճարված) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների նկատմամբ հաշվարկվում են միայն տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով, և հարկային օրենսդրությամբ սահմանված տուգանքները (այդ թվում՝

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված տուգանքը) չեն կիրառվում:

**(36.7 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն)**

36.8. Եթե ընթացիկ տարում՝ մինչև նախորդ տարվա տարեկան եկամուտների հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետը (բայց անհատ ձեռնարկատիրոջ կողմից նախորդ տարվա տարեկան եկամուտների հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո), տվյալ անհատ ձեռնարկատիրոջ մոտ կատարված ստուգմամբ հայտնաբերվել է նախորդ տարվա լրացուցիչ եկամտահարկի գումարներ, ապա հաշվարկված տուգանքները ենթակա են պետական բյուջե վճարման ստուգման ակտ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ հայտնաբերված եկամտահարկի գումարը՝ մինչև ընթացիկ տարվա մայիսի 1-ը: Այդ ժամկետից սկսվում է նախորդ տարվա հաշվարկված եկամտահարկի (այդ թվում՝ լրացուցիչ հայտնաբերված) չվճարված գումարների գծով տույժերի հաշվարկը՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով, իսկ չվճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը դադարեցվում է անհատ ձեռնարկատիրոջ կողմից տարեկան եկամուտների հաշվարկը ներկայացնելու պահին:

*Օրինակ 34. Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարներ չի վճարում: Անհատ ձեռնարկատերը 2007 թ. փետրվարի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2006 թ. տարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի 2006 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 60,0 հազ. դրամ: 2007 թ. փետրվարին հարկային մարմինների կողմից անհատ ձեռնարկատիրոջ մոտ կատարված ստուգմամբ լրացուցիչ գանձման է առաջադրվել եկամտահարկ (40,0 հազ. դրամ), որը վերաբերում է 2006 թ. անհատ ձեռնարկատիրոջ գործունեությանը: Ստուգման ակտը կազմվել է 2007 թ. մարտի 10-ին:*

*Տվյալ դեպքում հաշվարկված տուգանքները անհատ ձեռնարկատերը պարտավոր է վճարել մինչև 2007 թ. մարտի 20-ը, իսկ 2006 թ. տարեկան եկամուտների հայտարարագրում արտացոլված և ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերված 2006 թ. եկամտահարկի գումարները (60,0 և 40,0 հազ. դրամ)՝ մինչև 2007 թ. մայիսի 1-ը: Այդ ժամկետից սկսած հաշվարկվում են տույժեր՝ եկամտահարկի չվճարված գումարի նկատմամբ: Ընդ որում՝ 2007 թ. եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները վերահաշվարկվում են:*

Եթե ընթացիկ տարում՝ մինչև նախորդ տարվա տարեկան եկամուտների հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետը (բայց անհատ ձեռնարկատիրոջ կողմից նախորդ տարվա տարեկան եկամուտների հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո), տվյալ անհատ ձեռնարկատիրոջ մոտ կատարված ստուգմամբ հայտնաբերվել է նախորդ տարվա լրացուցիչ եկամտահարկի գումարներ, որոնք նվազագույն եկամտահարկի գումարների պակաս հաշվարկելու արդյունք է, ապա լրացուցիչ հայտնաբերված եկամտահարկի գումարը ենթակա է պետական բյուջե վճարման՝ մինչև ընթացիկ տարվա մայիսի 1-ը: Այդ ժամկետից սկսվում է նախորդ տարվա հաշվարկված եկամտահարկի (այդ թվում՝ լրացուցիչ հայտնաբերված) չվճարված գումարների գծով տույժերի հաշվարկը՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով, իսկ չվճարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը դադարեցվում է անհատ ձեռնարկատիրոջ կողմից տարեկան եկամուտների հաշվարկը ներկայացնելու պահին:

*Օրինակ 35. Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարներ չի վճարում: Անհատ ձեռնարկատերը 2007 թ. փետրվարի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2006 թ. տարեկան եկամուտների հայտարարագիր, ըստ որի*

2006 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 60,0 հազ. դրամ: 2007 թ. փետրվարին հարկային մարմինների կողմից անհատ ձեռնարկատիրոջ մոտ կատարված ստուգմամբ լրացուցիչ գանձման է առաջադրվել եկամտահարկ (40,0 հազ. դրամ), որը վերաբերում է 2006 թ. անհատ ձեռնարկատիրոջ գործունեությանը և 2006 թ. նվազագույն եկամտահարկի գումարների պակաս հաշվարկման արդյունք է: Ստուգման ակտը կազմվել է 2007 թ. մարտի 10-ին:

Տվյալ դեպքում 2006թ. տարեկան եկամուտների հայտարարագրում արտացոլված և ստուգմամբ լրացուցիչ հայտնաբերված 2006թ. եկամտահարկի գումարները (60,0 և 40,0 հազ. դրամ) անհատ ձեռնարկատիրը պարտավոր է վճարել մինչև 2007թ. մայիսի 1-ը: Այդ ժամկետից սկսած հաշվարկվում են տույժեր՝ եկամտահարկի չվճարված գումարի նկատմամբ, իսկ չվճարված նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը դադարեցվում է 2007թ. փետրվարի 10-ին: Ընդ որում՝ 2007թ. եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների վերահաշվարկ չի կատարվում:

**(36.8 կետը խմբ. 18.03.03 N 03/08-Ն, 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն)**

36.9. Հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը նվազագույն եկամտահարկի տարեկան գումարից պակաս լինելու դեպքում դրանց տարբերությունը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման (լուծարման) դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն անհատ ձեռնարկատիրոջ հետագա տարիների եկամտահարկի գումարներից (այդ տարիների գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը գերազանցելու դեպքում): Ընդ որում.

ա) եթե հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը գերազանցում է նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը, իսկ տվյալ տարում կատարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը.

- գերազանցում է հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը, ապա՝

կատարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի տարբերությունը ենթակա է հաշվանցման անհատ ձեռնարկատիրոջ այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով.

- չի գերազանցում հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը և գերազանցում է նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը, ապա՝

հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի և կատարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարի տարբերությունը վճարվում է պետական բյուջե, ընդ որում՝ այդ տարբերության գումարից առաջնահերթ նվազեցվում են նախորդ հաշվետու տարիներում վճարված և մինչ այդ չնվազեցված նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները.

- չի գերազանցում նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը, ապա՝

հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի և կատարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարի

տարբերությունը վճարվում է պետական բյուջե, ընդ որում՝ հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի և նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի տարբերության գումարից առաջնահերթ նվազեցվում են նախորդ հաշվետու տարիներում վճարված և մինչ այդ չնվազեցված նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները.

բ) եթե հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը չի գերազանցում նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը, իսկ տվյալ տարվա համար կատարված եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը.

- գերազանցում է նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը, ապա՝

կատարված եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների հանրագումարի և նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի տարբերությունը ենթակա է հաշվանցման անհատ ձեռնարկատիրոջ այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով,

նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի տարբերությունը որպես նվազագույն եկամտահարկի գումար ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման (լուծարման) դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն հետագա տարիների անհատ ձեռնարկատիրոջ գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարներից (վերջիններս այդ տարիների նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները գերազանցելու դեպքում).

- չի գերազանցում նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը և գերազանցում է հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումարը, ապա՝

նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի և կատարված եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների տարբերությունը վճարվում է պետական բյուջե,

կատարված եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների հանրագումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարի տարբերությունը որպես նվազագույն եկամտահարկի գումար ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման (լուծարման) դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն հետագա տարիների անհատ ձեռնարկատիրոջ գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարներից (վերջիններս այդ տարիների նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները գերազանցելու դեպքում).

- չի գերազանցում հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի վճարվող գումարը, ապա՝

նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի և կատարված եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների տարբերությունը վճարվում է պետական բյուջե:

2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար 2008 թվականի

վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար վճարման ենթակա եկամտահարկը չեն կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից (այդ գումարները համարվում են 2008 և 2009 թվականների համար եկամտահարկի վերջնական գումարներ): Այսինքն, եթե նշված անհատ ձեռնարկատերերի այդ տարիների համար ընդհանուր կարգով (հարկվող եկամտից համապատասխան դրույքաչափերով) հաշվարկված եկամտահարկի գումարը՝

- փոքր է համախառն եկամտի 2%-ից, ապա տվյալ տարվա վճարման ենթակա եկամտահարկի գումարը կազմում է համախառն եկամտի 2%-ը և տարբերությունը որևէ ձևով ազդեցություն չունի հետագա տարիների եկամտահարկի գումարների հաշվարկի վրա, իսկ վճարված նվազագույն եկամտահարկի և փաստացի եկամտահարկի դրական տարբերությունն առաջանալու դեպքում այդ տարբերությունը չի փոխանցվում հաջորդ տարիներ,

- գերազանցում է համախառն եկամտի 10%-ը, ապա տվյալ տարվա վճարման ենթակա եկամտահարկի գումարը կազմում է համախառն եկամտի 10%-ը և տարբերությունը որևէ ձևով ազդեցություն չունի հետագա տարիների եկամտահարկի գումարների հաշվարկի վրա:

**(36.9 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

36.10. Սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների մուծումներ չկատարելու դեպքում տույժերը կիրառվում են ժամանակին չմուծված եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների նկատմամբ՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափերով: Հաշվետու տարվա եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը դադարեցվում է հարկային մարմնին հաշվետու տարվա եկամտահարկի գումարի հայտնի դառնալու (տարեկան եկամուտների հաշվարկը ներկայացնելու) օրը (բայց մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը): Եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները վերահաշվարկման կամ վերադարձման ենթակա չեն (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ փոխվում է եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների հաշվարկման բազան):

*Օրինակ 36. Անհատ ձեռնարկատերը 2007 թ. փետրվարի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2006 թ. փարեկան եկամուտների հայտարարագիրը, ըստ որի 2006 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 600,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 400,0 հազ. դրամ (2x80,0+2x120,0), նվազագույն եկամտահարկի փարեկան գումարը՝ 360,0 հազ. դրամ (2x60,0+2x120,0), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 320,0 հազ. դրամ (4x80,0): Ընդունենք նաև, որ 2006 թ. 4-րդ եռամսյակի հաշվով հաշվարկված 2007 թ. 1-ին եռամսյակի նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը կազմում է 150,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում (1-ին և 2-րդ եռամսյակներում՝ եռամսյակային 80,0 հազ. դրամ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ եռամսյակային 120,0 հազ. դրամ) և 2007 թ. 1-ին եռամսյակում (եռամսյակային 150,0 հազ. դրամ) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները վճարել է սահմանված ժամկետներում և չափերով:*

*Տվյալ դեպքում մինչև 2007 թ. մայիսի 1-ը անհատ ձեռնարկատերը վճարում է եկամտահարկի գումար՝ 200,0 հազ. դրամ (600,0-400,0):*

*Նույն օրինակում, եթե անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում և 2007 թ. 1-ին եռամսյակում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները վճարել է ոչ ամբողջությամբ*

(օրինակ՝ եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների 60%-ի չափով) և մինչև 2007 թ. մայիսի 1-ը վճարել է 200,0 հազ. դրամ եկամտահարկի գումար, ապա 2006 թ. համար չվճարված (մասնակի վճարված) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների (այսինքն՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների 40%-ի) նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ մինչև 2007 թ. փետրվարի 10-ը: Տույժերի հաշվարկի դադարեցումը չի վերաբերում 2007 թ. 1-ին եռամսյակում չվճարված (մասնակի վճարված) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարին: Միաժամանակ, 2007 թ. մայիսի 1-ից տույժեր են հաշվարկվում 2006 թ. եկամտահարկի չվճարված (մասնակի վճարված) գումարի՝ 160,0 հազ. դրամի ( $600,0 - (400,0 \times 60\% + 200,0)$ ) նկատմամբ:

Օրինակ 37. Անհատ ձեռնարկատերը 2007 թ. փետրվարի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2006 թ. տարեկան եկամուտների հայտարարագիրը, ըստ որի 2006 թ. հաշվարկված եկամտահարկի գումարը կազմել է 480,0 հազ. դրամ: Ընդունենք, որ 2006 թ. եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների հանրագումարը կազմում է 600,0 հազ. դրամ ( $2 \times 100,0 + 2 \times 200,0$ ), նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը՝ 560,0 հազ. դրամ ( $2 \times 80,0 + 2 \times 200,0$ ), եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը՝ 400,0 հազ. դրամ ( $4 \times 100,0$ ): Ընդունենք նաև, որ 2006 թ. 4-րդ եռամսյակի հաշվով հաշվարկված 2007 թ. 1-ին եռամսյակի նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը կազմում է 150,0 հազ. դրամ: Անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում (1-ին և 2-րդ եռամսյակներում՝ եռամսյակային 100,0 հազ. դրամ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ եռամսյակային 200,0 հազ. դրամ) և 2007 թ. 1-ին եռամսյակում (եռամսյակային 150,0 հազ. դրամ) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները վճարել է սահմանված ժամկետներում և չափերով:

Տվյալ դեպքում անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2006 թ. համար ավելի վճարված եկամտահարկի գումարը 40,0 հազ. դրամ ( $600,0 - 560,0$ ) ենթակա է հաշվանցման անհատ ձեռնարկատիրոջ այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի և հաշվարկված եկամտահարկի գումարի տարբերությունը՝ 80,0 հազ. դրամ ( $560,0 - 480,0$ ) հաշվանցվում է միայն անհատ ձեռնարկատիրոջ հետագա տարիների եկամտահարկի գումարներից:

Նույն օրինակում, եթե անհատ ձեռնարկատերը 2006 թ. ընթացքում և 2007 թ. 1-ին եռամսյակում եկամտահարկի եռամսյակային վճարման գումարները վճարել է ոչ ամբողջությամբ (օրինակ՝ եկամտահարկի եռամսյակային վճարների գումարների 60%-ի չափով, որը կազմում է  $600,0 \times 60\% = 360,0$  հազ. դրամ) և մինչև 2007 թ. մայիսի 1-ը վճարել է 120,0 հազ. դրամ ( $480,0 - 360,0$ ) եկամտահարկի գումար, ապա 2006 թ. համար չվճարված (մասնակի վճարված) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների (այսինքն՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների 40%-ի) նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ մինչև 2007 թ. փետրվարի 10-ը: Տույժերի հաշվարկի դադարեցումը չի վերաբերում 2007 թ. 1-ին եռամսյակում չվճարված (մասնակի վճարված) եկամտահարկի եռամսյակային վճարման գումարներին: Միաժամանակ, 2007 թ. մայիսի 1-ից տույժեր են հաշվարկվում 2006 թ. եկամտահարկի չվճարված (մասնակի վճարված) գումարի՝ 80,0 հազ. դրամի ( $560,0 - (600,0 \times 60\% + 120,0)$ ) նկատմամբ:

Սույն հրահանգի 36.2-րդ կետի «դ» ենթակետի և 36.4 կետի «ե» ենթակետի պայմաններում հաշվարկված կանխավճարների եռամսյակային գումարների հանրագումարը տվյալ տարվա եկամտահարկի գումարի 2/3-ից պակաս լինելու դեպքում անհատ ձեռնարկատերը վճարում է տույժ (տվյալ տարվա եկամտահարկի գումարի 1/6-ի հաշվով հաշվարկված եկամտահարկի

կանխավճարի եռամսյակային գումարի և տվյալ եռամսյակի վճարված եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարի տարբերության նկատմամբ՝ եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարի համար հրահանգի 36-րդ կետում նշված վճարման օրվանից մինչև հարկային մարմնին եկամտահարկի գումարի հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելու) օրը:

**(36.10 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

36.11. Հաշվարկված եկամտահարկի գումարները (այդ թվում՝ եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները), նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները, եկամտահարկի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից այդ գումարների վճարումները հարկային մարմինների կողմից հաշվառվում են հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում:

Հարկային մարմինների կողմից նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները անձնական հաշվի քարտերում չեն հաշվառվում:

Եկամտահարկի պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև եկամտահարկի պարտավորություններից ավելի վճարված գումարները անձնական հաշվի քարտում հաշվառվում են դրամով (առանց լումաների): Հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում, տեղեկություններում և այլ փաստաթղթերում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից տրվող տեղեկանքներում և այլ փաստաթղթերում եկամտահարկի պարտավորությունների և հաշվանցվող գումարների հաշվառման համար որպես չափման միավոր ընդունվում է դրամը (առանց լումաների): Հարկ վճարողի լուծարման դեպքում եկամտահարկի մինչև 100 դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Եկամտահարկի պարտավորությունները (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի նվազագույն եկամտահարկի տարեկան գումարները և եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարները) անձնական հաշվի քարտում հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն՝ տվյալ եկամտահարկի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ անկախ հաշվարկների ներկայացման ամսաթվից: Նշվածը վերաբերում է նաև ճշտված հաշվարկներով առաջացող եկամտահարկի պարտավորություններին:

Որևէ հաշվետու ժամանակաշրջան (հարկային գործակալների կողմից ներկայացվող հաշվարկների համար՝ եռամսյակ, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և այլ ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող տարեկան եկամուտների մասին հաշվարկների համար՝ տարի) սկսվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի առաջին ամսվա 1-ից (նոր ստեղծված հարկ վճարողների համար՝ պետական գրանցման (հաշվառման) պահից) և ավարտվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա վերջին օրով: Հարկային մարմին հաշվարկները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (բացառությամբ՝ հարկային գործակալի լուծարման կամ ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքերի): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկների ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը (վերջնաժամկետը) և դրանից հետո ներկայացված մեկից ավելի հաշվարկներ ներկայացված լինելու դեպքում առաջինը ներկայացված հաշվարկը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հաշվարկներ:

Հարկային գործակալի լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի գործունեության դադարեցման) դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացված միջանկյալ և լուծարային հաշվարկները համարվում են հաշվետու

Ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ, եթե այդ հաշվարկները ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկ վճարողը (հարկային գործակալը) որևէ գործարք կամ գործառնություն չի կատարել: Հարկ վճարողի (հարկային գործակալի)՝ միջանկյալ և (կամ) լուծարային հաշվարկները ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը որևէ գործարք կամ գործառնություն իրականացնելու դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվում են հաշվարկներ, որոնք չեն համարվում ճշտված հաշվարկներ:

Անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ այլ ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացվող հաշվարկները համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ, և հաշվետու ժամանակաշրջանների ավարտից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող հաշվարկները համարվում են ճշտված հաշվարկներ:

Հաշվարկված եկամտահարկի պարտավորության գումարները և հաշվանցվող գումարները չեն կարող փոփոխվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է 3 տարի՝ այդ ժամկետը լրանալուց հետո եկամտահարկի պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարները փոփոխող հաշվարկներ չեն կարող ներկայացվել (այսինքն՝ ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում):

Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում եկամտահարկի գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող 3 տարի հետո (նշված վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե հարկ վճարողի, դրա պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ եկամտահարկի գծով պարտավորությունների հաշվարկման հարկային մարմնի փորձը ձախողվել է՝ ձախողման փաստը հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2010թ. «Հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների ձախողման փաստն արձանագրելու կարգը սահմանելու մասին» N 972-Ն որոշմամբ սահմանված կարգով արձանագրելու պահից, և կասեցման հիմքերի դադարումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե հարկային մարմինը կամ դրա համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարման մասին): Հաշվարկված եկամտահարկի պարտավորության գումարները ստուգմամբ չեն կարող նվազեցվել, իսկ հաշվանցվող գումարները չեն կարող ավելացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է 3 տարի:

Հարկ վճարողի (հարկային գործակալի) եկամտահարկի պարտավորությունների դիմաց հաշվանցումը, եկամտահարկի գերավճարի հաշվին պետական բյուջեի նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձը իրականացվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և այդ օրենքի 1-ին հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

**(36.11 կետը խմբ. 28.09.06 N 1-05/13-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

36.12. Անհատ ձեռնարկատիրոջ անվճարունակությունը կարգավորող օրենսդրության համաձայն հարկատուին անվճարունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից եկամտահարկի վճարումները կասեցվում են մինչև պարտատերերի պահանջների բավարարման՝ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթը հասնելը:

37. (37-րդ կետն ուժը կորցրել է 28.09.06 N 1-05/13-Ն)

38. (38-րդ կետն ուժը կորցրել է 23.02.09 N 187-Ն)

## Բ Ա Ժ Ի Ն 9

### ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

(Վերնագիրը փոփ. 30.01.02 N 02/141)

39. Հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական և այլ պայմանագրերից հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման «ըստ վճարման (դրամարկղային)» մեթոդը:

Եթե Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպություններից կամ անհատ ձեռնարկատերերից ստացված եկամուտներից եկամուտների վճարման աղբյուրի մոտ հարկի պահում (գանձում) նախատեսված չէ (այդ թվում՝ նաև սույն հրահանգի 52-րդ կետում նշված դեպքում), ապա տարվա ընթացքում եկամուտներ ստացող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք պարտավոր են յուրաքանչյուր ամիս կատարել եկամտահարկի վճարների մուծումներ՝ տվյալ ամսվա համախառն եկամտի (հաշվի առնելով միայն սույն հրահանգի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանված նվազեցումները) 10 տոկոսի չափով՝ այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Սույն կետով սահմանված եկամտահարկի վճարների մուծումները նշված ժամկետից ուշացնելու համար տույժերը հաշվարկվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված չափերով:

Հաշվետու տարվա ավարտից հետո ֆիզիկական անձինք հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հաշվարկով վերահաշվարկում են եկամտահարկի գումարը՝ ելնելով սույն հրահանգի 46.1-46.4-րդ կետերին համապատասխան հաշվարկված հարկվող եկամտից և հաշվանցելով տվյալ տարվա համար սույն կետին համապատասխան մուծված եկամտահարկի վճարները:

Եթե հաշվետու տարվա փաստացի եկամտահարկի գումարը պակաս է տվյալ տարվա համար կատարված եկամտահարկի վճարների մուծումների հանրագումարից, ապա դրանց տարբերությունը ենթակա է հաշվանցման հարկատուի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի համաձայն:

Եթե հաշվետու տարվա փաստացի եկամտահարկի գումարը ավել է տվյալ տարվա համար կատարված եկամտահարկի վճարների մուծումների հանրագումարից, ապա հարկատուն պարտավոր է առաջացած տարբերությունը վճարել բյուջե: Եկամտահարկի գումարի վճարումն

ուշացնելու համար տույժերի հաշվարկը սկսվում է տվյալ հաշվետու տարվանը հաջորդող տարվա մայիսի 1-ից՝ եկամտահարկի գումարի չվճարված մասի նկատմամբ, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված չափերով:

**(39-րդ կետը փոփ. 30.01.02 N 02/141, լրաց. 16.03.04 N 1-05/6-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն)**

39.1. Հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է այդ պայմանագրերից ստացված եկամուտների (բացառությամբ՝ ռոյալթիների, տոկոսների և վարձավճարների) գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես եկամտի ստացման հետ կապված ծախսերը:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես.

ա) նյութական ծախսերը.

բ) վարձակալական վճարները.

գ) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը (բացառությամբ՝ գույքահարկի և հողի հարկի), տուրքերը և այլ պարտադիր վճարները.

դ) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային այլ ծառայությունների համար վճարները.

ե) դատական ծախսերը.

զ) գործուղման ծախսերը.

է) պատճառած վնասի հատուցումը.

ը) տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով գանձվող տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների).

թ) աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը:

**(39.1 կետը փոփ. 30.01.02 N 02/141)**

39.2. Հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով առանձնահատկություններն են.

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նորմաների (չափերի) սահմաններում համախառն եկամտից նվազեցվում են միայն գործուղման (այդ թվում՝ առանց հիմնավորող փաստաթղթերի օրապահիկի) ծախսերը, ընդ որում՝

- համախառն եկամտից նշված ծախսերը նվազեցնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմաները հաշվարկվում են ելնելով հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներից,

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կատարված վճարները, կադրերի պատրաստման ծախսերը, կադրերի վերապատրաստման ծախսերը, հատուկ սննդի համար կատարված ծախսերը, արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, հովանավորչական ծախսերը, գովազդային ծախսերը, մարքեթինգի ծախսերը որպես այդպիսին չեն ճանաչվում (համախառն եկամտից չեն նվազեցվում).

բ) ծախս չեն հանդիսանում որևէ կազմակերպության կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները.

գ) հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները չեն ճանաչվում որպես այդպիսին (այսինքն՝ համախառն եկամտից նվազեցվում է ծախսը կատարելու տարում ամբողջությամբ)։

դ) փոքրարժեք, արագամաշ առարկաների ձեռք բերումը դիտվում է որպես նյութական ծախս։

ե) բնական և այլ կորուստները, բնական կորուստը գերազանցող կորուստները, պատահական կորուստները հաշվի չեն առնվում (համախառն եկամտից չեն նվազեցվում)։

զ) տոկոսները, գույքի ապահովագրական վճարները հաշվի չեն առնվում (համախառն եկամտից չեն նվազեցվում)։

է) եկամտահարկի կանխավճարային մուծումներ չեն կատարվում։

**Օրինակ 38.** Ֆիզիկական անձը 2008 թ. նոյեմբերին ստացել է 5000,0 հազ. դրամ եկամուտ՝ քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում մարտ-սեպտեմբեր ամիսների ընթացքում կատարված աշխատանքների դիմաց։ Այդ պայմանագիրը կատարելու համար ֆիզիկական անձը 2008 թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 3-ը մեկնել է գործուղում Մոսկվա, որի վերաբերյալ առկա են հիմնավորող փաստաթղթեր (բացառությամբ՝ օրապահիկի), ըստ որոնց (արտարժույթով կատարված ծախսերը վերահաշվարկվել են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց կատարման օրերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից)՝

- ճանապարհածախս (Երևան-Մոսկվա-Երևան)՝ 100,0 հազ. դրամ,

- օդային ուղևորների ելքի համար պետական տուրք՝ 10,0 հազ. դրամ,

- օրապահիկ (6 օր x 25,0 հազ. դրամ)՝ 150,0 հազ. դրամ,

ընդամենը գործուղման ծախսեր՝ 260,0 հազ. դրամ։

Պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմում են 357,5 հազ. դրամ, իսկ անձնական նվազեցումները՝ 175,0 հազ. դրամ (7x25,0)։ Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են 250,0 հազ. դրամ գումարի չափով գործուղման ծախսերը (քանի որ 260,0 > 250,0 (5000,0 x 5%))։

Այսպիսով՝ տարեկան հարկվող եկամուտը կազմում է 4217,5 հազ. դրամ (5000,0 - (250,0 + 357,5 + 175,0))։

**(Օրինակ 38-ը խմբ. 29.02.08 N 02-Լ)**

**(39.2 կետը փոփ. 30.01.02 N 02/141, լրաց. 23.02.09 N 187-Լ)**

40. Բացառությամբ սույն հրահանգի 52 կետում նշված դեպքերի հարկային գործակալների միջոցով չհարկվող։

ա) ոռյալթիներից, վարձավճարներից և տոկոսներից, ինչպես նաև բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում չհարկվող շենք գերազանցող տարածքների վաճառքից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է սույն հրահանգի 19.1 ենթակետով սահմանված դրույքաչափերով։

բ) քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված և այլ եկամուտներից (այդ թվում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից)՝ եկամտահարկը հաշվարկվում է սույն հրահանգի 19.2 ենթակետով սահմանված դրույքաչափերով։

Հարկային գործակալներից ռեզիդենտ օտարերկրացիների քաղաքացիաիրավական պայմանագրերով ստացված եկամուտներից, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերով պայմանավորված եկամուտներից (այդ թվում՝ նյութական օգնության գումարներից) և նվազեցվող

եկամուտներից պահված եկամտահարկը վերահաշվարկվում է սույն հրահանգի 19.3 ենթակետով սահմանված դրույքաչափերով:

**(40-րդ կետը խմբ. 30.01.02 N 02/141, լրաց. 05.03.07 N 2-Ն)**

41. Ֆիզիկական անձի կողմից սույն բաժնում և 8-րդ բաժնում նշված եկամուտները տարվա ընթացքում միաժամանակ ստանալու դեպքում եկամտահարկը հաշվարկելիս հաշվի է առնվում հետևյալը.

ա) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները և ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին միայն այն դեպքում, եթե վերջիններս ստացվել (կատարվել) են որպես անհատ ձեռնարկատեր (այդ թվում՝ ոռյալթիները, վարձավճարները և տոկոսները).

բ) ձեռնարկատիրական գործունեության գծով ստացված եկամուտների և նվազեցումների (բացառությամբ՝ սույն հրահանգի 16 և 17 կետերով սահմանված նվազեցումների) բացասական տարբերություն (արդյունք) առաջանալու դեպքում այն որպես վնաս տեղափոխվում է հաջորդ տարի՝ տվյալ տարվա եկամտահարկը հաշվարկվում է միայն այլ եկամուտներից.

Օրինակ 39. Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր, 2008 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների մատուցումից ստացել է 4000,0 հազ. դրամ եկամուտ, որի գծով կատարել է 6000,0 հազ. դրամի չափով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր: Նույն տարում որպես քաղաքացի Հայաստանի Հանրապետությունում գրանցված՝ հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպության համար կատարել է շենքի ընթացիկ նորոգում (կազմակերպության հումքով և նյութերով), որի դիմաց ստացել է 500,0 հազ. դրամ եկամուտ:

Տվյալ դեպքում կատարվում է հետևյալ հաշվարկը (պարզեցման համար հաշվարկները բերված են առանց պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու).

ա) ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ՝ 4000,0 հազ. դրամ.

- ձեռնարկատիրական գործունեության գծով ծախսեր՝ 6000,0 հազ. դրամ.

- ձեռնարկատիրական գործունեությունից վնաս՝ 2000,0 հազ. դրամ.

բ) քաղաքացիահրավական պայմանագրից եկամուտներ՝ 500,0 հազ. դրամ.

- անձնական նվազեցումներ (12x25,0)՝ 300,0 հազ. դրամ.

- քաղաքացիահրավական պայմանագրից հարկվող եկամուտ՝ 200,0 հազ. դրամ.

- տարեկան եկամտահարկ (200,0x10%)՝ 20,0 հազ. դրամ:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա է վճարման 20,0 հազ. դրամ եկամտահարկ, և միաժամանակ 2008թ. տեղափոխվում է 2000,0 հազ. դրամ վնաս.

**(Օրինակ 39-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

գ) ձեռնարկատիրական գործունեության գծով ստացված եկամուտների և կատարված ծախսերի դրական տարբերություն (արդյունք) առաջանալու դեպքում (առանց հաշվի առնելու սույն հրահանգի 16 և 17 կետերով սահմանված նվազեցումները) հաշվարկվում է այլ եկամուտների և նվազեցումների (այդ թվում՝ սույն հրահանգի 16 և 17 կետերով սահմանված նվազեցումների) տարբերությունը՝

- եթե այն բացասական չէ, ապա ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքից էլնելով՝ հաշվարկվում են հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարները,

- եթե այն բացասական է, ապա ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքից հանվում է նշված բացասական տարբերություն առաջացնող՝ սույն հրահանգի 16 և 17

կետերով սահմանված նվազեցումների չօգտագործված մասը և հաշվարկվում են հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարները:

Տվյալ դեպքում, տարվա ընթացքում ստացված (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության գծով) եկամուտների և նվազեցումների տարբերությունից ելնելով՝ հաշվարկվում է եկամտահարկը:

**Օրինակ 40.** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր, 2008 թ. ընթացքում ծառայությունների մատուցումից ստացել է 4000,0 հազ. դրամ եկամուտ, որի գծով կատարել է 3340,0 հազ. դրամի չափով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր: Նույն տարում որպես քաղաքացի Հայաստանում գրանցված՝ հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպության համար կատարել է շենքի ընթացիկ նորոգում (կազմակերպության հումքով և նյութերով), որի դիմաց ստացել է 500,0 հազ. դրամ եկամուտ:

Տվյալ դեպքում կատարվում է հետևյալ հաշվարկը (պարզեցման համար հաշվարկները բերված են առանց պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու).

- |  |                   |
|--|-------------------|
| ա) ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ՝                 | 4000,0 հազ. դրամ. |
| - ձեռնարկատիրական գործունեության գծով ծախսեր՝                    | 3340,0 հազ. դրամ. |
| - ձեռնարկատիրական գործունեությունից արդյունք՝                    | 660,0 հազ. դրամ.  |
| բ) քաղաքացիահրավակական պայմանագրից եկամուտներ՝                   | 500,0 հազ. դրամ.  |
| - անձնական նվազեցումներ (12x25,0)՝                               | 300,0 հազ. դրամ.  |
| - քաղաքացիահրավակական պայմանագրից եկամուտ՝                       | 200,0 հազ. դրամ.  |
| գ) հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումար (660,0x10%:6)՝ | 11,0 հազ. դրամ.   |

դ) տարեկան եկամտահարկ ((660,0+200,0)x10%)՝ 86,0 հազ. դրամ:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա է վճարման 86,0 հազ. դրամ եկամտահարկ և, միաժամանակ, 2009 թ. եռամսյակային կանխավճարի գումարը կկազմի 11,0 հազ. դրամ:

**(Օրինակ 40-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

**Օրինակ 41.** Հայաստանի Հանրապետության քաղաքացին որպես անհատ ձեռնարկատեր 2008 թ. ընթացքում ծառայությունների մատուցումից ստացել է 4000,0 հազ. դրամ եկամուտ, որի գծով կատարել է 3340,0 հազ. դրամի չափով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր: Նույն տարում որպես քաղաքացի Հայաստանում գրանցված՝ հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպության համար կատարել է շենքի ընթացիկ նորոգում (կազմակերպության հումքով և նյութերով), որի դիմաց ստացել է 200,0 հազ. դրամ եկամուտ:

Տվյալ դեպքում կատարվում է հետևյալ հաշվարկը (պարզեցման համար հաշվարկները բերված են առանց պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկելու).

- |   |                   |
|---|-------------------|
| ա) ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ՝            | 4000,0 հազ. դրամ. |
| - ձեռնարկատիրական գործունեության գծով ծախսեր՝               | 3340,0 հազ. դրամ. |
| - ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ՝                | 660,0 հազ. դրամ.  |
| բ) քաղաքացիահրավակական պայմանագրից եկամուտներ՝              | 200,0 հազ. դրամ.  |
| - անձնական նվազեցումներ (12x25,0)՝                          | 300,0 հազ. դրամ.  |
| - քաղաքացիահրավակական պայմանագրից վնաս՝                     | 100,0 հազ. դրամ.  |
| գ) տարեկան եկամտահարկ ((660,0-100,0)x10%)՝                  | 56,0 հազ. դրամ.   |
| դ) հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումար (56,0:6)՝ | 9,3 հազ. դրամ:    |

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա է վճարման 56,0 հազ. դրամ եկամտահարկ և, միաժամանակ, 2009 թ. եռամսյակային կանխավճարի գումարը կկազմի 9,3 հազ. դրամ:

**(Օրինակ 41-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

**(41-րդ կետը լրաց. 30.01.02 N 02/141)**

42. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների հարկումը կատարվում է սույն հրահանգով սահմանված ընդհանուր կարգով: Ընդ որում.

ա) ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների բնորոշման համար տարածվում են սույն հրահանգի 10 կետի և 24.1 ենթակետի դրույթները, որոնք վերաբերվում են նաև հարկային գործակալ չհանդիսացողներից ոչ ռեզիդենտի ստացած եկամուտներին.

բ) ոչ ռեզիդենտը սույն հրահանգով սահմանված դեպքերում օգտվում է համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից:

## Բ Ա Ժ Ի Ն 10

### ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

43. Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են իրենց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմին ներկայացնել իրենց տարեկան եկամուտների մասին հաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով (բացառությամբ՝ սույն հրահանգի 44-րդ կետում նշված դեպքերի):

**(43-րդ կետը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

44. Տարեկան հաշվարկ կարող են չներկայացնել այն հարկատուները, ովքեր հարկային տարվա ընթացքում.

ա) ստացել են բացառապես սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված եկամուտներ.

բ) ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալի վրա՝ անկախ հարկային տարվա ընթացքում հարկվող եկամտի մեծությունից.

գ) **(ենթակետն ուժը կորցրել է 24.02.11 N 66-Ն)**

դ) զբաղվել են բացառապես եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների և (կամ) արտոնագրային վճարների ձևով հարկվող գործունեության տեսակներով և չեն ստացել այլ՝ սույն հրահանգով սահմանված հայտարարագրման ենթակա եկամուտներ.

ե) **(ենթակետն ուժը կորցրել է 23.02.09 N 187-Ն)**

**(44-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն, 23.02.09 N 187-Ն, փոփ., լրաց. 24.02.11 N 66-Ն)**

45. Ֆիզիկական անձինք հայտարարագրում են հարկային տարվա ընթացքում ստացված բոլոր եկամուտները, բացառությամբ սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված եկամուտների, ինչպես նաև այն եկամուտների, որոնցից հարկի պահումը (գանձումը) իրականացնելու պարտավորությունը դրված է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա (հաշվի առնելով սույն հրահանգի 40 կետով ռեզիդենտ օտարերկրացիների համար նախատեսված առանձնահատկությունները):

Հարկային գործակալներից ռեզիդենտ օտարերկրացիների քաղաքացիաիրավական պայմանագրերով ստացված եկամուտներից, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերով

պայմանավորված եկամուտներից (այդ թվում՝ նյութական օգնության գումարներից) և նվազեցվող եկամուտներից պահված եկամտահարկը վերահաշվարկվում է սույն հրահանգի 19.3 ենթակետով սահմանված դրույքաչափերով:

Տարեկան հաշվարկում չեն ներառվում հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճարներ վճարող լինելու ժամանակահատվածում ստացված՝ դրանց վերաբերող եկամուտները և ծախսերը:

**(45-րդ կետը խմբ. 30.01.02 N 02/141, փոփ. 29.02.08 N 02-Ն, 23.02.09 N 187-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

46. Տարեկան հարկվող եկամուտը որոշելիս ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հաշվի են առնում հետևյալը.

46.1. Ռեզիդենտ Հայաստանի Հանրապետության քաղաքացին.

ա) համախառն եկամտի մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացված եկամուտները, բացառությամբ՝

- սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված նվազեցվող եկամուտների.

- հարկային գործակալներից ստացված ցանկացած եկամուտների (այդ թվում՝ սույն հրահանգի 19.1 ենթակետով սահմանված դրույքաչափերով հարկվող).

բ) համախառն եկամուտը նվազեցնում է՝

- սույն հրահանգի 18 կետում նշված ծախսերի չափով (բացառությամբ՝ սույն հրահանգի 19.1 ենթակետում նշված եկամուտների ստացման հետ կապված ծախսերի),

- սույն հրահանգի 15 կետում նշված վճարների գումարի չափով,

- սույն հրահանգի 17 կետում նշված անձնական նվազեցման չափով՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար,

- սույն հրահանգի 16 կետում նշված կազմակերպություններին հարկային տարվա ընթացքում փոխանցած (տրամադրած) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով (հարկվող եկամտի 5%-ի սահմաններում):

**(46.1 կետը փոփ. 05.03.07 N 2-Ն)**

46.2. Ռեզիդենտ օտարերկրացին.

ա) համախառն եկամտի մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացված եկամուտները, բացառությամբ՝

- սույն հրահանգի 13 կետում նշված նվազեցվող եկամուտների,

- հարկային գործակալներից ստացված՝ սույն հրահանգի 19.1. ենթակետով սահմանված դրույքաչափերով հարկվող եկամուտների.

բ) համախառն եկամուտը նվազեցնում է՝

- սույն հրահանգի 18 կետում նշված ծախսերի չափով (բացառությամբ՝ սույն հրահանգի 19.1 ենթակետում նշված եկամուտների ստացման հետ կապված ծախսերի),

- սույն հրահանգի 17 կետում նշված անձնական նվազեցումների չափով՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար,

- սույն հրահանգի 16 կետում նշված կազմակերպություններին հարկային տարվա ընթացքում փոխանցած (տրամադրած) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով (հարկվող եկամտի 5%-ի սահմաններում),

- սույն հրահանգի 12 և 14 կետերում նշված նվազեցվող եկամուտների չափով.

- սույն հրահանգի 15-րդ կետում նշված վճարների գումարի չափով:

**(46.2 կետը փոփ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

46.3. Ոչ ռեզիդենտ Հայաստանի Հանրապետության քաղաքացին.

ա) համախառն եկամտի մեջ ներառում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները, բացառությամբ՝

- սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված նվազեցվող եկամուտների,

- հարկային գործակալներից ստացված ցանկացած եկամուտների (այդ թվում՝ սույն հրահանգի

19.1. ենթակետով սահմանված դրույքաչափերով հարկվող).

բ) համախառն եկամուտը նվազեցնում է՝

- սույն հրահանգի 18 կետում նշված ծախսերի չափով (բացառությամբ՝ սույն հրահանգի 19.1 ենթակետում նշված եկամուտների ստացման հետ կապված ծախսերի),

- սույն հրահանգի 15 կետում նշված վճարների գումարի չափով.

- սույն հրահանգի 17 կետում նշված անձնական նվազեցումների չափով՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար.

- սույն հրահանգի 16 կետում նշված կազմակերպություններին հարկային տարվա ընթացքում փոխանցած (տրամադրած) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով (հարկվող եկամտի 5%-ի սահմաններում):

**(46.3 կետը փոփ. 05.03.07 N 2-Ն)**

46.4. Ոչ ռեզիդենտ օտարերկրացին.

ա) համախառն եկամտի մեջ ներառում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները, բացառությամբ՝

- սույն հրահանգի 12, 13 և 14 կետերում նշված նվազեցվող եկամուտների.

- հարկային գործակալներից ստացված ցանկացած եկամուտների (այդ թվում՝ սույն հրահանգի 19.1. ենթակետով նշված եկամուտների).

բ) համախառն եկամուտը նվազեցնում է՝

- սույն հրահանգի 18 կետում նշված ծախսերի չափով (բացառությամբ՝ հարկային գործակալներից ստացված եկամուտների գծով կատարված ծախսերի),

- սույն հրահանգի 17 կետում նշված անձնական նվազեցումների չափով՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար.

- սույն հրահանգի 16 կետում նշված կազմակերպություններին հարկային տարվա ընթացքում փոխանցած (տրամադրած) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով (հարկվող եկամտի 5%-ի սահմաններում).

- սույն հրահանգի 15-րդ կետում նշված վճարների գումարի չափով:

**(46.4 կետը փոփ. 05.03.07 N 2-Ն, լրաց. 24.02.11 N 66-Ն)**

47. Ոչ ռեզիդենտ օտարերկրացու հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից հարկային գործակալների պահած (գանձած) հարկի գումարները համարվում են Հայաստանում այդ անձի համար եկամտահարկի վերջնական գումար:

Ոչ ռեզիդենտի (Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրացի) դիմումի հիման վրա հարկային գործակալի կողմից հայաստանյան աղբյուրներից վճարված եկամուտներից պահված և տարեկան եկամուտների հաշվարկի (հայտարարագրի) հիման վրա վճարված հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմինների կողմից տրվում է սահմանված ձևի տեղեկանք:

Ռեզիդենտ օտարերկրացու հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից (բացառությամբ՝ ռոյալթիներից, տոկոսներից և վարձավճարներից) հարկային գործակալի կողմից պահած (գանձած) հարկի գումարների վերահաշվարկման նպատակով (մասնավորապես, աղբյուրի մոտ պահված հարկի գումարները հաշվանցելու, ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված

նվազեցումները հաշվի առնելու համար) կարող է դիմել իր գործունեության իրականացման կամ բնակության վայրի հարկային մարմին՝ սույն հրահանգով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելով տարեկան եկամուտների մասին հաշվարկ:

**(47-րդ կետը խմբ., փոփ. 29.02.08 N 02-Ն, լրաց. 23.02.09 N 187-Ն)**

48. Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների կողմից վճարման ենթակա եկամտահարկը պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը նրանցից գանձվել է օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան (բացառությամբ՝ այն եկամուտներից օտարերկրյա պետություններում գանձված հարկի գումարի, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման համախառն եկամտից): Ընդ որում, պակասեցվող (հաշվանցվող) հարկի գումարի չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ սույն հրահանգի դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում վճարման ենթակա եկամտահարկի գումարը:

*Օրինակ 42. 2008 թվականին ռեզիդենտ ֆիզիկական անձը օտարերկրյա պետությունում շահել է դրամական մրցանակ 5500 ԱՄՆ դոլար գումարով, որից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահվել է 1375 ԱՄՆ դոլար (5500x25%) եկամտահարկ: Տարվա ընթացքում ֆիզիկական անձը այլ եկամուտներ չի ստացել: Պարզության համար եկամտի ստացման և հարկի պահման օրերի դրությամբ ընդունվում է ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը (1 ԱՄՆ դոլար = 300 դրամ):*

*ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա պետությունում շահած մրցանակից (5500x300=1650,0 հազ. դրամ) հաշվարկված եկամտահարկը կազմում է 227,0 հազ. դրամ ((1650,0-10,0-25,0)-960,0)x20%+96,0): Տվյալ դեպքում օտարերկրյա պետությունում պահված հարկի գումարից (1375x300=412,5 հազ. դրամ) հայտարարագրով հաշվանցման է ընդունվում միայն 227,0 հազ. դրամը և եկամտահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջանում:*

*Նույն օրինակում, եթե օտարերկրյա պետությունում եկամտի վճարման աղբյուրի մոտ պահվել է 660 ԱՄՆ դոլար (5500x12%) եկամտահարկ, ապա տարեկան եկամուտների հաշվարկով (հայտարարագրով) այդ գումարը (660x300=198,0 հազ. դրամ) ամբողջությամբ ընդունվում է հաշվանցման և եկամտահարկի գծով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն 29,0 հազ. դրամի (227,0-198,0) չափով:*

**(Օրինակ 42-ը խմբ. 29.02.08 N 02-Ն, փոփ. 23.02.09 N 187-Ն)**

Հաշվանցումը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ֆիզիկական անձը ներկայացնում է օտարերկրյա պետությունների համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք:

49. Անչափահաս անձանց եկամուտները հայտարարագրում են նրանց ծնողները (խնամակալները):

50. Հարկ վճարող ֆիզիկական անձինք իրենց հարկային տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնում են հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ (մինչև 2008 թվականը հաշվետու տարիների համար տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը՝ հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ):

Հարկատուն պարտավոր է տարեկան հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված եկամտահարկի գումարը վճարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

**(50-րդ կետը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

51. Մինչև հարկային տարվա ավարտվելը հարկատուի գործունեության (եկամտի աղբյուրի) դադարեցման և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում ֆիզիկական անձը պարտավոր է տարեկան հաշվարկը ներկայացնել ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ:

Տարեկան հաշվարկով հաշվարկված եկամտահարկի գումարը վճարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

**(51-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն)**

52. Հայաստանի Հանրապետության օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններից և հյուպատոսական հիմնարկներից ու միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից ֆիզիկական անձանց եկամուտներ ստանալու դեպքում, երբ եկամտի վճարման աղբյուրի մոտ միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն հարկի պահում չի իրականացվում, տարվա ընթացքում եկամտահարկի վճարումը և հայտարարագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

53. Ֆիզիկական անձանց կողմից տարեկան եկամուտների մասին հաշվարկի ճշտումը կատարվում է օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

**(53-րդ կետը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

54. Հաշվետու տարվա ընթացքում արտոնագրային վճար վճարող դադարելու և հարկման ընդհանուր կարգին անցնելու դեպքում ֆիզիկական անձը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը) այդ պահից սկսած տվյալ տարվա մնացած ժամանակահատվածի համար եկամտահարկը հաշվարկում է և տարեկան եկամուտների մասին հաշվարկը (կամ՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկը) ներկայացնում է օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Ընդ որում՝ այդ դեպքում եկամտահարկի տարեկան գումարը հաշվարկելիս հաշվի են առնվում միայն արտոնագրային վճար վճարող դադարելու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ստացված եկամուտները և կատարված նվազեցումները, արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածում ձեռքբերումների գծով կատարված ծախսերը հաշվի չեն առնվում, տվյալ տարվա համար վճարված արտոնագրային վճարի գումարները հաշվի չեն առնվում (անկախ տվյալ տարում արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածի փաստացի տևողությունից) և տվյալ տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկում (կամ՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկում) ներառում են միայն արտոնագրային վճար վճարող համարվելու դադարելու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածին վերաբերող տվյալները:

**(54-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն, խմբ. 24.02.11 N 66-Ն)**

**Բ Ա Ժ Ի Ն 11**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

55. Հարկային օրենսդրությունը խախտելու համար հարկային գործակալները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

56. Սույն հրահանգի դրույթներին համաձայն հարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) կամ պակաս պահելու (գանձելու) դեպքում հարկի գումարը և հարկը սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չվճարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը վճարելու պարտավորությունը կրում է հարկային գործակալը (այդ թվում՝ նաև սույն հրահանգի 22-րդ կետի վերջին պարբերությունում նշված դեպքում):

**(56-րդ կետը լրաց. 16.03.04 N 1-05/6-Ն)**

56.1. Հարկային գործակալի կողմից սույն հրահանգի դրույթներին համաձայն ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացուցային տարվա համար:

Սահմանված չափից ավելի գանձված գումարները վերադարձնելու մասին ֆիզիկական անձի գրավոր դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի (այսինքն՝ 3 օրացուցային տարվա) ընթացքը:

*Օրինակ 43. 2001 թ. նոյեմբեր ամսին կատարված ստուգմամբ արձանագրվել է, որ ապրիլ ամսից մինչև օգոստոս ամիսը (ներառյալ) հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձին վճարված եկամուտներից պակաս է պահվել հարկի գումար 10,0 հազ. դրամի չափով: Նշված գումարից 2,0 հազ. դրամը (օգոստոս ամսին պակաս պահված հարկը) գանձվում է նոյեմբեր ամսին այդ ֆիզիկական անձին վճարվող եկամուտներից, իսկ ապրիլից մինչև հուլիս ամիսը (ներառյալ) պակաս պահված հարկի գումարը՝ 8,0 հազ. դրամը գանձվում է հարկային գործակալից, քանի որ հարկի գումարը պակաս պահված լինելու փաստը արձանագրվելու պահից անցել է ավելի քան 3 ամիս:*

*Հարկային գործակալից գանձվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկի 10,0 հազ. դրամ գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու համար հաշվարկված օրական տույժերը:*

56.2. Ֆիզիկական անձին հաշվարկված ամսական համախառն եկամտից պահումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել այդ եկամտի 50%-ը:

*Օրինակ 44. 2008 թ. մայիսի 3-ին կատարված ստուգմամբ արձանագրվել է, որ մարտ ամսին հարկային գործակալի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացուն վճարված եկամուտներից պակաս է պահվել 22,0 հազ. դրամ հարկի գումար: Նշված գումարը ենթակա է գանձման մայիս ամսին այդ քաղաքացուն վճարվող եկամուտներից, քանի որ հարկի գումարը պակաս պահված լինելու փաստը արձանագրվելու պահին 3-ամսյա ժամկետը չի լրացել: Մայիս ամսին նշված քաղաքացուն հաշվարկվել է աշխատավարձ 50,0 հազ. դրամ գումարով և կատարվել է հետևյալ հաշվարկը.*

- |  |                 |
|--|-----------------|
| - համախառն եկամուտ՝                      | 50,0 հազ. դրամ, |
| - պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ | 1,5 հազ. դրամ,  |
| - անձնական նվազեցում՝                    | 25,0 հազ. դրամ, |
| - հարկվող եկամուտ (50,0-1,5-25,0)՝       | 23,5 հազ. դրամ, |
| - հարկ (23,5x10%)՝                       | 2,35 հազ. դրամ: |

Այնքանով, որ քաղաքացու ամսական համախառն եկամտից պահումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 25,0 հազ. դրամը (50,0x50%), ապա մարտ ամսին նշված քաղաքացուն վճարվող եկամտից պակաս պահված հարկի գումարից պահվում է 21,15 հազ. դրամ (25,0-(1,5+2,35)), իսկ մնացած մասը՝ 0,85 հազ. դրամը (22,0-21,15), գանձվում է հունիս ամսին հաշվարկվող եկամտից:

**(Օրինակ 44-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

57. Սույն հրահանգի 26 կետով սահմանված կարգով հարկը չպահելու դեպքում հարկային գործակալի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվող գումարը հաշվարկվում է՝ ելնելով ֆիզիկական անձին փաստացի վճարված եկամտի գումարից:

**Օրինակ 45. (Օրինակ 45 ուժը կորցրել է 23.02.09 N 187-Ն)**

**Օրինակ 46.** Հասարակական կազմակերպության աշխատողը (Հայաստանի Հանրապետության քաղաքացի) 2008 թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 3-ը գործուղվել է Գյումրի քաղաք: Մինչև գործուղումը հունվարի 26-ին աշխատողը կազմակերպությունից ստացել է ավանսային գումար՝ 50,0 հազ. դրամի չափով: Գործուղումից վերադառնալով փետրվարի 6-ին աշխատողը ներկայացրել է ավանսային հաշվետվություն գործուղման մեջ կատարված հետևյալ ծախսերի վերաբերյալ.

- գիշերավարձ (5 օր)՝ 50,0 հազ. դրամ,
- օրապահիկ (6 օր x 10,0 հազ. դրամ)՝ 60,0 հազ. դրամ,
- ընդամենը՝ 110,0 հազ. դրամ:

Կատարված ծախսերը փաստաթղթերով հիմնավորված չեն: Կազմակերպության կողմից փետրվարի 7-ին աշխատողին վճարվել է հաշվետվությամբ ներկայացված ամբողջ գումարի չվճարված մնացորդը (110,0-50,0=60,0 հազ. դրամ):

Տվյալ դեպքում աշխատողի փետրվար ամսվա համախառն եկամտից ենթակա է նվազեցման միայն 48,0 հազ. դրամ (6x8,0) օրապահիկը և 25,0 հազ. դրամ (5x5,0) գիշերավարձը, իսկ 37,0 հազ. դրամը (110,0-(48,0+25,0)) գումարվում է փետրվար ամսվա աշխատավարձին և հարկվում ընդհանուր սահմանված կարգով:

**(Օրինակ 46-ը խմբ. 29.02.08 N 02-Ն)**

58. Սույն հրահանգի 29 կետով սահմանված դեպքերում տեղեկությունները չներկայացնելու համար կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը վճարում են տուգանք՝ հարկային մարմիններ չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 5,0 հազ. դրամի չափով:

Նշված տուգանքը կիրառվում է միայն 2004 թվականի հունվարի 1-ից հետո փաստացի վճարված եկամուտների վերաբերյալ չներկայացված տեղեկությունների գծով:

**(58-րդ կետը լրաց. 16.03.04 N 1-05/6-Ն, փոփ. 29.02.08 N 02-Ն)**

**Բ Ա Ժ Ի Ն 12**

**ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

59. Հարկային օրենսդրությունը խախտելու համար հարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

60. Տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չներկայացնելը հարկ վճարողին չի ազատում սույն հրահանգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հարկային պարտավորությունները կատարելուց:

**(60-րդ կետը փոփ. 29.02.08 N 02-Ն)**

**61. (61-րդ կետին ուժը կորցրել է 05.03.07 N 2-Ն):**

62. Հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկում (հայտարարագրում) սույն հրահանգով սահմանված կարգով հաշվարկված վնասը ավելի ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատերից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տրված վնասի 20%-ի չափով: Նշված տուգանքը կիրառվում է 2002 թվականի հունվարի 1-ից հետո՝ հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հաշվարկով (հայտարարագրով) ավելի ցույց տրված վնասի նկատմամբ:

**(62-րդ կետը լրաց. 30.01.02 N 02/141, փոփ. 29.02.08 N 02-Ն)**

**Հավելված 1**

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված (հաշվարկված) եկամուտների, պահված եկամտահարկի		Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)	
<b>ՀԱՇՎԱՐԿ</b> (20__թ. __ եռամսյակ)			
Պետական գրանցման համարը [1]			
Պետական գրանցման ամսաթիվը [2]			
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) [3]			
Կազմակերպության անվանումը [4]			
Ֆիզիկական անձի անուն, ազգանունը [5]			
Գործունեության ոլորտը (ոլորտները) [6]			
Գտնվելու (բնակության) վայրը [7]			
Հեռախոսը [8]			
Հաշվարկի ներկայացման ամսաթիվը [9]			
		Չափի միավոր	Դրամ

- [1] և [2] տողերում նշվում է հարկային գործակալի պետական գրանցման (հաշվառման) համարը և օրը, ամիսը, տարին
- [3] տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
- [4] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը
- [5] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [6] տողում նշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման ոլորտ(ներ)ը, իսկ նոտարի կողմից նշվում է նոտարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ
- [7] և [8] տողերում նշվում են կազմակերպության գտնվելու վայրը և աշխատանքային հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի բնակության վայրը և աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [9] տողում նշվում է հարկային մարմին հաշվարկի ներկայացման օրը, ամիսը, տարին

**Աղյուսակ 1**

ՀՀ քաղաքացիներին վճարված (հաշվարկված) եկամուտների տեսակը	Եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [10]	Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [11]		
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ [12]				
33.500 դրամից ոչ ավելի [12ա]				
աշխատողների թվաքանակ [12ա-1]		x	x	x
116.000 դրամից ոչ ավելի [12բ]				
աշխատողների թվաքանակ [12բ-1]		x	x	x
116.000 դրամից ավելի [12գ]				
աշխատողների թվաքանակ [12գ-1]		x	x	x
Այլ աշխատանքի վարձատրություն [13]				
աշխատողների թվաքանակ [13-1]		x	x	x
Ռոյալթի [14]				
Տոկոս [15]				
Շահաբաժին [16]		x	x	x
Խաղատներում, շահումներով խաղերում շահում [17]		x	x	x
Մրցույթների, մրցությունների մրցանակ [18]				
Վիճակախաղերի շահում [19]		x	x	x

Նվիրատվություն, օգնություն	[20]					
Ապահովագրական հատուցում	[21]			x	x	x
Գույքն օտարելու դիմաց վճարված եկամուտ	[22]					
Վարձակալական վճար	[23]					
Ապահովագրավճար	[24]					
Առանց հիմնավորող փաստաթղթերի վճարում	[25]					
Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ	[26]			x	x	x
Այլ եկամուտներ	[27]					
<b>Ընդամենը</b>	<b>[28]</b>					

- [10] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը
- [11] սյունակներում նշվում են [10] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [12] տողում նշվում է [12ա], [12բ] և [12գ] տողերի հանրագումարը
- [12ա], [12բ], [12գ] տողերում նշվում են տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ վճարված նյութական օգնության և ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [12ա-1], [12բ-1], [12գ-1] տողերում՝ տվյալ ամսում այդ եկամուտներին համապատասխանող վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՛ հաշվարկների կամ վճարումների թիվը)
- [13] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [13-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [12] և [13] տողերում նշված եկամուտներ, ապա [13-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)
- [14]-[27] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, ընդ որում՝ [20] տողը վերաբերվում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին, [24] տողում նշվում են, մասնավորապես՝ գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով 10,0 հազ. դրամը գերազանցող մասով, [25] տողում նշվում են “եկամտահարկի մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի “ա” ենթակետի համաձայն վճարված եկամուտների և դրանցից հաշվարկված եկամտահարկի գումարները
- [28] տողում նշվում է [12]-[27] տողերի հանրագումարը
- նվազեցվող եկամուտները (բացառությամբ՝ [16], [17], [19] և [21] տողերում նշվածների) հաշվարկում չեն արտացոլվում

## Աղյուսակ 2

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հայաստանյան աղբյուրներից վճարված (հաշվարկված) եկամուտների տեսակը	Եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [29]	Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [30]
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ [31]		
33.500 դրամից ոչ ավելի [31ա]		
աշխատողների թվաքանակ [31ա-1]		x x x
116.000 դրամից ոչ ավելի [31բ]		
աշխատողների թվաքանակ [31բ-1]		x x x
116.000 դրամից ավելի [31գ]		
աշխատողների թվաքանակ [31գ-1]		x x x
Այլ աշխատանքի վարձատրություն [32]		
աշխատողների թվաքանակ [32-1]		x x x
Անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտ [33]		x x x
<b>Պասիվ եկամուտներ՝</b>		
- ոռոյալթիներ [34]		
- տոկոսներ [35]		
- շահաբաժիններ [36]		x x x
- խաղատներում, շահումներով խաղերում շահում [37]		
- մրցույթների, մրցությունների մրցանակներ [38]		
- վիճակախաղերի շահումներ [39]		
- նվիրատվություն, օգնություն [40]		
- ապահովագրական հատուցում [41]		
- գույքն օտարելուց արժեքի հավելած [42]		
- վարձակալական վճար [43]		
- փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտ [44]		
- ապահովագրավճար [45]		
Այլ եկամուտներ [46]		
<b>Ընդամենը [47]</b>		

- [29] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում հաշվեգրված) եկամուտների հաշվարկային մեծությունը
- [30] սյունակներում նշվում են [29] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [31] տողում նշվում է [31ա], [31բ] և [31գ] տողերի հանրագումարը
- [31ա], [31բ], [31գ] տողերում նշվում է տվյալ ամսում վարձու աշխատողներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության և ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների, ինչպես նաև մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, որոնք վճարվել են 2009թ. հունվարի 1-ից հետո) ու դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարը, իսկ [31ա-1], [31բ-1], [31գ-1] տողերում տվյալ ամսում այդ եկամուտները ստացած վարձու աշխատողների փաստացի թվաքանակը (այլ ոչ թե՛ հաշվարկների կամ վճարումների թիվը)
- [32] տողում նշվում է տվյալ ամսում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում վճարված եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, իսկ [32-1] տողում՝ տվյալ ամսում այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց փաստացի թվաքանակը (եթե ֆիզիկական անձը ստանում է [31] և [32] տողերում նշված եկամուտներ, ապա [32-1] տողը չի լրացվում /չի գումարվում/)
- [33]-[46] տողերում նշվում են տվյալ ամսում ֆիզիկական անձանց վճարված այլ եկամուտների և դրանցից պահված եկամտահարկի ընդհանուր գումարները, ընդ որում՝ [33] տողը վերաբերվում է <<-ում պետական գրանցում ստացած (հաշվառված) անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտներին, [40] տողը վերաբերվում է վարձու աշխատող չհանդիսացող ֆիզիկական անձանց տրված նվիրատվության և օգնության գումարներին, [45] տողում նշվում են, մասնավորապես՝ գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով 10,0 հազ. դրամը գերազանցող մասով, [47] տողում նշվում է [31]-[46] տողերի հանրագումարը

### Աղյուսակ 3

Մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ 01.01.2009թ.-ից հետո փաստացի վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	Վճարված եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [48]		Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [49]	

- [48] սյունակներում նշվում է տվյալ ամսում փաստացի վճարված՝ մինչև 01.01.2009թ. հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկային մեծությունը (որը ներառված է նախորդ աղյուսակներում)
- [49] սյունակներում նշվում են [48] սյունակներում նշված եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի գումարը

#### 4.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար) \_\_\_\_\_  
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխ.հաշվապահ \_\_\_\_\_  
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, հայտարարությունը լրացվում է 2 օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկային գործակալին:

**(Հավելվածը խմբ. 30.01.02 N 02/141, 16.03.04 N 1-05/6-Ն, 28.09.06 N 1-05/13-Ն, 29.02.08 N 02-Ն, 23.02.09 N 187-Ն, 24.02.11 N 66-Ն)**

**Հավելված 1ա**

**(Հավելվածն ուժը կորցրել է 16.03.04 N 1-05/6-Ն)**

**Հավելված 2**

**Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին**

Փաստաթղթի հերթական համարը N \_\_\_\_\_  
 (լրացվում է հարկային մարմնի կողմից)

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**(20\_\_թ.)**



19											
20											
...											

- [1] սյունակում նշվում է տեղեկության հերթական համարը
- [2] սյունակում նշվում են ֆիզիկական անձի ազգանունը և անունը (ամբողջությամբ)
- [3] սյունակում նշվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը
- [4] սյունակում նշվում են լիազորված մարմնի անվանումը (կողը) և նրա կողմից անձնագրի տրման ամսաթիվը
- [5] սյունակում նշվում է ֆիզիկական անձի քաղաքացիությունը (<< քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ)
- [6] սյունակում նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- [7] սյունակում նշվում է ֆիզիկական անձի Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր բնակության հասցեն
- [8] սյունակում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)
- [9] սյունակում նշվում է հաշվետու տարում ֆիզիկական անձին փաստացի վճարված բոլոր եկամուտների (բացառությամբ նվազեցվող եկամուտների) հաշվարկային մեծությունը
- [10] սյունակում նշվում են [9] սյունակում նշված եկամուտներից պահված (զանձված) հարկի գումարները
- [11] սյունակում նշվում է [9] սյունակում նշված եկամուտներից պահված (զանձված) պարտադիր սոցիալական ապահովության վճարը (3%)
- [12] սյունակում նշվում են [9] սյունակում նշված եկամուտներից ֆիզիկական անձին փաստացի վճարված գումարները:

Կ. Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) \_\_\_\_\_  
 (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխ. հաշվապահ \_\_\_\_\_  
 (ստորագրություն) (անուն, ազգանուն):

**(Հավելվածը լրաց. 30.01.02 N 02/141, լրաց. 10.09.04 N 1-05/11-Ն, 04.06.07 N 6-Ն, խմբ. 29.02.08 N 02-Ն, փոփ. 20.08.08 N 11-Ն, 24.02.11 N 66-Ն)**

**Հավելված 3**

**(Հավելվածն ուժը կորցրել է 29.02.08 N 02-Ն)**

**Հավելված 4**

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) ֆաստաթղթի հերթական համարը  
 կողմից ֆիզիկական անձանց 200\_\_թ. N \_\_\_\_\_  
 վճարված եկամուտների մասին (լրացվում է հարկային մարմնի կողմից)

Տեղեկանք

Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	[1]								
Կազմակերպության անվանումը	[2]								

Անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը	[3]	
Հասցեն	[4]	
Հեռախոս	[5]	
Տեղեկանքի տրամադրման ամսաթիվը	[6]	
		Չափի միավոր
		Դրամ

- [1] տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ)
- [2] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրական տեսակը
- [3] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը
- [4] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) իրավաբանական (բնակության) հասցեն
- [5] տողում նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [6] տողում նշվում է ֆիզիկական անձին տեղեկանքի տրամադրման ամսաթիվը

### Տվյալներ եկամուտներ ստացած ֆիզիկական անձի մասին

Հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ) [7]									
Վկայականի համարը [8]									
Ազգանուն [9]							Անուն [10]		
Անձնագրի սերիան, համարը [11]							Տրված [12]		
Մշտական բնակության հասցեն [13]									
ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն [14]									

- [7] տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ)
- [8] տողում նշվում է պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի համարը
- [9] և [10] տողերը լրացվում են, եթե եկամուտ ստացող ֆիզիկական անձը ՀՀ անհատ ձեռնարկատեր է
- [9] և [10] տողերում նշվում են ֆիզիկական անձի ազգանունը և անունը (ամբողջությամբ)
- [11] տողում նշվում է ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը
- [12] տողում նշվում է լիազորված մարմնի անվանումը (կողը) և նրա կողմից անձնագրի տրման ամսաթիվը
- [13] տողում նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- [14] տողում նշվում է ֆիզիկական անձի ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն

### Տվյալներ վճարված եկամուտների և պահված եկամտահարկի մասին

Վճարված եկամտի տեսակը (կողը) [15]												
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Եկամտի ստացման ամիսները [16]												
Վճարված եկամտի գումարը [17]												
Ընդամենը կատարված նվազեցումներ, այդ թվում՝ [18]												
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ [19]												
- անձնական նվազեցումներ [20]												
- բարեգործական հատկացումներ [21]												
Վճարված եկամուտներից պահված եկամտահարկ [22]												

**Առձեռն վճարված գումար [23]**

- Տեղեկանքը տրամադրվում է ֆիզիկական անձի պահանջով (մասնավորապես, հարկային մարմիններին ներկայացնելու համար):
- [15] տողում նշվում է վճարված եկամտի տեսակը՝ ըստ ստորև բերված կողերի դասակարգման

Եկամտի տեսակ	Կող		
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարում (այդ թվում՝ աշխատողներին տրված նյութական օգնության գումարներ)	001	101	201
Ռոյալթի	002	102	202
Տոկոս	003	103	203
Շահաբաժին	004	104	204
Խաղատնում, շահումով խաղում շահում	005	105	205
Մրցույթի, մրցության մրցանակ	006	106	206
Վիճակախաղի շահում	007	107	207
Նվիրատվություն, օգնություն	008	108	208
Ապահովագրական հատուցում	009	109	209
Գույքն օտարելու դիմաց վճարված եկամուտ	010	x	x
Գույքն օտարելուց արժեքի հավելած	x	110	210
Վարձակալության դիմաց վճար (վարձավճար)	011	111	211
Փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարված եկամուտ	x	112	212
Ֆիզիկական անձանց համար ապահովագրավճարներ (բացառությամբ՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի)	013	113	213
Քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքի կատարման և ծառայության մատուցման դիմաց եկամուտ	014	114	214
Այլ եկամուտներ (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարված նվազեցվող եկամուտների և արտաքին տնտեսական գործունեության հետ կապված եկամուտների գումարները)	015	115	215

- Կողերի 1-ին սյունակում դասակարգվում են ՀՀ քաղաքացիներին վճարված եկամուտների կողերը
- Կողերի 2-րդ սյունակում դասակարգվում են օտարերկրյա քաղաքացիներին վճարված եկամուտների կողերը
- Կողերի 3-րդ սյունակում դասակարգվում են քաղաքացիություն չունեցող անձանց վճարված եկամուտների կողերը
- [16] տողում նշվում են եկամտի ստացման այն ամիսները, որոնց վերաբերվում է վճարված եկամուտը
- [17] տողում նշվում է փաստացի վճարված եկամուտների հաշվարկային մեծությունը
- [18] տողում նշվում է [17] տողում նշված եկամուտներից կատարված նվազեցումների ընդհանուր գումարը, այդ թվում՝
  - [19] տողում նշվում են հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները
  - [20] տողում նշվում են անձնական նվազեցումների գումարը
  - [21] տողում նշվում են բարեգործական հատկացումները (բայց ոչ ավելի, քան հարկվող եկամտի 5%)
- [22] տողում նշվում է [17] տողում նշված եկամուտներից պահված եկամտահարկի գումարը
- [23] տողում նշվում է [17] տողում նշված եկամուտներից առձեռն վճարված գումարը (տող[17]-տող[19]-տող[21]-տող[22])
- Հարկային տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձին եկամտի միևնույն տեսակը մի քանի անգամ վճարելու դեպքում ներկայացվում է մեկ տեղեկանք՝ նշելով վճարված եկամտի հանրագումարը և այն ամիսները, որոնց վերաբերվում են վճարված եկամուտները
  - Հարկային տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձին եկամուտների մի քանի տեսակներ վճարելու դեպքում յուրաքանչյուր եկամտատեսակի համար ներկայացվում է առանձին տեղեկանք:

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Գլխ. հաշվապահ

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Տեղեկանքը լրացվում է 2 օրինակից, որից մեկը տրվում է ֆիզիկական անձին, իսկ մյուսը՝ ֆիզիկական անձի ստորագրությամբ մնում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) մոտ:

**(Հավելվածը լրաց. 30.01.02 N 02/141, փոփ. 24.02.11 N 66-Ն)**

**Հավելված 5**

<p align="center"><b>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>Կազմակերպության կողմից որպես հարկային գործակալ եկամտահարկի պահում (գանձում) և բյուջե վճարում կատարելու պարտավորություն ստանձնելու մասին</p>	<p align="center">Փաստաթղթի համարը</p> <hr/> <p align="center"><i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i></p>								
<p><b>1. Հարկ վճարողի անվանումը</b></p>	<p><b>2. ՀՎՀՀ</b></p> <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>								
<p><b>3. Ներկայացման ամսաթիվը</b></p> <p>օրը <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table> ամիսը <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table> տարին <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table> <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table> <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table> <table border="1" style="width: 40px; height: 20px;"></table></p>									

- “Փաստաթղթի համարը” մասում նշվում է հարկային մարմնում հարկ վճարողի (կազմակերպության) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը
- [1] տողում (“Հարկ վճարողի անվանումը”) նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպա-իրավական ձևը, [2] տողում (“ՀՎՀՀ”) հարկ վճարողի հաշվառման համարը
- [3] տողում (“Ներկայացման ամսաթիվը”) նշվում է կազմակերպության կողմից հարկային մարմին հայտարարության ներկայացնելու օրը, ամիսը և տարին

Սույնով հայտնում եմ, որ “Եկամտահարկի մասին” ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներին համապատասխան հայտարարությունը ներկայացնելու ամսվա 1-ից սկսած հանդիսանալու եմ հարկային գործակալ:

Տնօրեն (ազգանուն, անուն  
և ստորագրություն)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Հարկ  
վճարողի  
կնիքը՝

Հաշվապահ (ազգանուն,  
անուն և ստորագրություն)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, հայտարարությունը լրացվում է 2 օրինակից:  
Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը:

**(Հավելվածը լրաց. 24.02.11 N 66-Ն)**

**Հավելված 6**

**(Հավելված 6-ն ուժը կորցրել է 29.02.08 N 02-Ն)**

**Հավելված 7**

**(Հավելված 7-ն ուժը կորցրել է 29.02.08 N 02-Ն)**

---